էքսպատ

#3(76)
2022

քաղաքի
ամսագիր

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

«Անտարեսը»

► Ստեղծում է
ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ

- գրքեր
- ձեռնարկներ
- դասագրքեր

► Ձգտում է ձևավորել
ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ

- մթնոլորտ
- մրցակցություն
- հասարակություն

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ մթնոլորտը ձևավորվում է այն մարդկանց միջոցով, որոնք կարևորում ու ձեռք են բերում ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ գրքեր:
Ձևավորի՛ր մթնոլորտ:

Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
antares@antares.am / www.antares.am

Գագիկ Հարությունյան, «Ադամանդե գրիչով»

Վերջերս մտքում մի ցուցակ էի կազմում երևույթների, որոնք իրականություն են եղել մեր կյանքի օրոք, բոլորովին վերջերս, բայց այժմ բոլորովին հասկանալի չեն 21-րդ դարում ծնվածների համար (երբեմն նաև մեզ համար, ինչ խոսք)։ Օրինակ՝ երաժշտություն լսելու համար պետք էր գնել ֆիզիկական կրիչ՝ կասետ կամ սկավառակ ու շատ հավանական էր, որ մեկ-երկու երգը միայն հաջող լինեին։ Կամ՝ հեռախոսը մի սարք էր, որն ամբողջ տանը լինում էր մի հատիկ ու գրպանում չէր տեղավորվում, իսկ զանգողն անհայտ էր։ Իսկ երբ տաքսի էիր կանչում, չգիտեիր, թե իրականում որտեղ է գտնվում մեքենան ու պետք է միայն հավատայիր անտեսանելի օպերատորի խոսքերին։ Իսկ երբ 2000-ականներին Երևանում պատրաստվում էր դեռևս ռուսալեզու “Ереван” ամսագիրը (այն, որ с акцентом), որը տպագրվում ու տարածվում էր Ռուսաստանում, պատրաստի ֆայլը գրվում էր լազերային սկավառակի վրա ու ծանոթների միջոցով ինքնաթիռով ուղարկվում Մոսկվա։ Ու դե լուսանկար անելու համար պետք էր ունենալ լուսանկարչական խցիկ ու լուսանկարները պետք էր տպագրել, որպեսզի դրանք գոյություն ունենային։ Իսկ տանը նոր ֆիլմ դիտելու համար անհրաժեշտ էր գնալ վարձույթի սրահ, վերցնել կինոն, մյուս օրը հետ տանել։
(Զարմանալի է, որ այս ամենի ընթացքում հետևի պլանում դինոզավրեր չէին վազվզում)։
Իհարկե, նույնքան խենթություն կլիներ, եթե մեկնումեկը մեզ 2000 թվին ասեր, որ նոր սերիալների ամբողջական սեզոնները հասանելի կլինեն միանգամից ու ոչ թե հեռուստատեսությամբ, այլ ինտերնետում տեղակայված հատուկ կայքերում, բայց նաև կլինեն ինտերնետին միացող հեռուստացույցներ։ Կամ ինչ կասեիք, եթե մի տասը տարի առաջ ձեզ ասեին, որ Գնդեվազ գյուղում հասանելի կլինի 25 գբ/վ արագությամբ ինտերնետ։ Չէիք հավատա, քմծիծաղ կտայիք ու կգնայիք ինտերնետ-ակումբում ժամը 600 դրամով մեյլ ստուգելու։
Իսկ հիմա մարդ երբեմն ուզում է իր ձեռքով անջատել կապի բոլոր հնարավոր միջոցները, կտրվել բոլորից ու ամեն ինչից։ Բայց նույնիսկ այդ ժամանակ հանգիստ ես, քանի որ գիտես, որ հենց ուզես, կմիացնես ու նույնիսկ եթե Գնդեվազում լինես, կարող ես նայել նոր սերիալը կամ ամսագրի նոր համարի ֆայլը մի քանի րոպեում կուղարկես տպարան, նույնիսկ եթե այն գտնվում է Ֆինլանդիայի հեռավոր անկյուններում։

Գլխավոր խմբագիր
Արտավազդ Եղիազարյան



ՔԱՂԱՔԱՄԵՋ

04 Պատասխանատվություն
Համընդհանուր պատասխանատվության օրը Երևանի կոնյակի գործարանում
Բնությանն օգնելը բոլորիս պարտականությունն է:

06 Խառը կանաչի
Ամսվա ամփոփում
Նոր գրքեր, նոր նպատակներ ու սպասվող իրադարձություններ:

08 Կրթություն
Խմե՞լ ես, մի՛ վարիր
Երևանի կոնյակի գործարանն իրականացրեց ալկոհոլի պատասխանատու օգտագործման նոր ծրագիրը:

10 Քաղաքից դուրս
Արարատված Արարատյանը
Մի երազանքի պատմություն:

14 Հեռուստատեսություն
Նե՛րս արի, նե՛րս արի, ի՞նչ ես կանգնել...
Ինչպես Երևանի կոնյակի գործարանի միջամտությամբ «Նե՛րս արի» գիշերային շոուն ուղևորվեց Բերդ:

16 Իմ Երևան
Shhau. «Ախպերավարի եմ շփվում Երևանի հետ»
Երաժիշտ, սաունդ-արտիստ Shhau-ի բատմաժանը Երևանը:

18 Մշակույթ
Թռիչք դեպի ստեղծարար ապագա
Երևանում մեկնարկեց ՀԲԼՄ-ի կողմից իրականացվող «Կապարարուլը» ստեղծարար աֆսեղերայինոն ծրագիրը:

20 Մշակույթ
Convivial Reunion
Ինչո՞ւ Երևանի կոնյակի գործարանում մի օր որոշեցին, որ աշխատակիցները պետք է ավելի մոտիկից ծանոթանան ազգային ժառանգության հետ:

ԿԱՊԻ ՄԵՋ

22 Ժամանակագրություն
Եվ եղավ կապը. հայոց տելեկոմի պատմությունը
1864 թվականի տելեգրաֆից մինչև մեր օրերի՝ TEAM ընկերության գերժամանակակից լուծումները:

26 Հոբելյան
EIF-20. կարևորի մասին
Ինչպես «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը 20 տարում փոխեց հայկական ՍՄՍ ոլորտը:

30 Սեփական փորձ
Օգտվենք ՏՏեղականից
Ինչպես են մեր առօրյան հեշտացնում հայկական, թե կուզեք՝ հայերի հավելվածները:

32 Խոշոր պլան
Նրանք ստեղծում են ստարտափներ
Պատմում ենք, թե ինչպես ստեղծվեց ստարտափը, որն օգնում է ստեղծել այլ ստարտափներ՝ Groksmith-ը:

34 Խորհուրդ
10 խորհուրդ սկսնակ ստարտափերներին
Եղեք պատրաստ՝ նախքան ՍՄՍ ոլորտում սեփական գաղափարն իրականացնելը:

36 Գրասենյակ
Նոր սերնդի աշխատավայր
Ինչպիսի՞ նոր մշակույթ իրենց հետ բերեցին հայկական ՍՄՍ ընկերությունների գրասենյակները:

38 Ապագա
Խելքի կտոր
Ինչպե՞ս դարձնել Երևանը խելացի քաղաք և ո՞վ է դրանով զբաղվում:

42 Համայնք
Բարքեմփ 2022
ՍՄՍ համայնքի մասնագիտական չկոնֆերանսը

46 Կրթություն
Սովորի՛ր ինքդ
Ինչպե՞ս դառնալ ծրագրավորող 42 Երևանի ու Թումո Լաբերի շնորհիվ:

48 Հայ-Թեք
Քո ընկեր Ռոբինը
Հայաստանում ստեղծված ռոբոտը գրավում է աշխարհը:

50 Հուշեր
Հիշում եմ, մտանք ինտերնետ
Այն ժամանակները, երբ համացանցը չտեսնված մի լուգահեռ իրականություն էր, որտեղ ոտք դնելն այդքան էլ հեշտ չէր:

52 Պատմություն
Երկիր «Նաիրի»
Լեգենդար հայկական «Նաիրի» համակարգիչների ստեղծողի դրամատիկ պատմությունը

56 Կադրերի բաժին
Կանոններ կենտրոնական մարտկոցային սիստեմի հեռախոսային ապարատներից օգտվելու համար, 1934թ.
Մի դրվագ՝ Երևանի հեռախոսային պատմությունից:

Շապիկ՝
Վիլյամ Կարապետյան

ԵՐԵՎԱՆ #3(76) | 2022

Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱԶԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Արտ-տնօրեն՝
ՆՈՆՆԱ ԻՍԱԶԱՆՅԱՆ
Թողարկող խմբագիր՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Էջադրում՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հեղինակներ՝
Մարգարիտ Միրզոյան, Լենա Գևորգյան, Կարինե Տերտերյան, Շուշանիկ Փափազյան, Սամվել Մարտիրոսյան, Վարուժան Նազարեթյան

Լուսանկարներ և պատկերազարդումներ՝
Մարիամ Լորեցյան, Փիրուզա Խալափյան/4Plus, Արթուր Խաչատրյան, Գագիկ Հարությունյան, Երևանի կոնյակի գործարան, Team, Թումո, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ, Grōksmith, Հայաստանի ազգային գրադարան

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ
Տնօրեն՝
Արտավազդ Եղիազարյան

Հայաստանի Հանրապետություն, 0014, Երևան, Պարույր Սևակ 8
Էլ. փոստ՝ evnmag@gmail.com
Առցանց՝ evnmag.com

© 2011-2022 **«ԵՐԵՎԱՆ»**
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
«ԵՐԵՎԱՆ» ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում Արտավազդ Եղիազարյանը:

Համարը տպագրության է հանձնվել՝ 26.07.2022

Տպագրված է Անտարես տպագրատանը, 0009, Երևան, Մաշտոցի 50ա/1

Տպաքանակ՝ 4000 օրինակ

Ամսագիրը ղեկավարվում է «Զանգվածային լրատվության մասին» և «Գովազդի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ամսագրի նյութերը վերատպվում են միայն իրավատիրոջ գրավոր համաձայնությամբ: «ԵՐԵՎԱՆ» ամսագրին հղում կատարելը պարտադիր է:

«ԵՐԵՎԱՆ» ամսագրի ստեղծման գաղափարը պատկանում է «Երևան Փրոդաքշնս» ՓԲԸ-ին:

FRIEDRICH NAUMANN FOUNDATION For Freedom.
Հայաստան

facebook.com/YerevanCityMagazine

instagram.com/evnmag

Այս համարի պատրաստությունը հնարավոր է դարձել Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

Սույն համարում տեղ գտած կարծիքների և դիրքորոշումների համընկնումը Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հետ պարտադիր չէ:

Photo: Sasha Mademuaselle **Illustration:** Lisa Smirnova

@scienceandspirit @astronomer.gin

Release, N: 001
Title: ASTRONOMER
Product: Vacuum Distilled Dry Gin

5854304500118

Volume, ml: 500
Alcohol/Volume, %: 47

Ingredients:
Andaliman, Angelica, Cardamom, Coriander, Citrus, Frankincense, Juniper,Iris,Pomegranate, Liquorice, Nutmeg, Timut, Qassia

Master distiller:
Eric Adinaev

SCIENCE AND SPIRIT

Distilled and Bottled in Arzni, Armenia

science andspirit.am

Համընդհանուր պատասխանատվության օրը Երևանի կոնյակի գործարանում

Հունիսի 16-ին Երևանի կոնյակի գործարանը, միանալով Պեռնո Ռիկար միջազգային խմբի աշխարհասփյուռ այլ ընկերություններին, 10-րդ անգամ նշեց Համընդհանուր պատասխանատվության օրը (ResponsibALL Day) և նախաձեռնեց համայնքի բարելավմանն ուղղված հերթական ծրագիրը:

Լինելով Պեռնո Ռիկար միջազգային խմբի անդամ՝ Երևանի կոնյակի գործարանն իր «Կայունություն և պատասխանատվություն» ռազմավարության շրջանակում շարունակաբար իրագործում է «Good Times from a Good Place» հայեցակարգը, որը հիմնված է չորս կարևոր ուղղությունների վրա՝ բնության հանդեպ հոգատար վերաբերմունք, մարդկանց արժևորում, թափոնների և օժանդակ հումքի կայուն կառավարում (Շրջանաձև տնտեսության խթանում), պատասխանատու հյուրընկալություն: Այս ռազմավարության կարևորագույն մասն է կազմում նաև Համընդհանուր պատասխանատվության օրը (ResponsibALL Day): Խմբի կողմից մեկնարկած «Պատասխանատվության օր» միջոցառումների շարքը ջանում է միավորել խմբի բոլոր անդամներին մեկ գաղափարի շուրջ, այն է՝ համայնքների և շրջակա միջավայրի պահպանման, բարելավման և կայուն զարգացման իրազեկության բարձրացումը:

Համընդհանուր պատասխանատվության օրն իրականացվում է 2011 թվականից՝ ի նշան բնության հանդեպ տածած երախտագիտության: Այն Պեռնո Ռիկար խմբի համար հատուկ օր է, որը միավորում է ընկերության 18 500 աշխատակիցներին ամբողջ աշխարհում և կենտրոնացնում նրանց ջանքերը բնության պահպանման ու համայնքների բարելավման վրա:

Միջոցառման ընթացքում Երևանի կոնյակի գործարանի ողջ անձնակազմը կատարել է ընկերության հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ խողովակների ներկում, վարդերի տնկում, նստարանների տեղադրում, թռչնաբների տեղադրում և պատրաստում: Նախաձեռնությանն ընդառաջ նորոգվել է նաև հարակից ճանապարհի եզրագծային հատվածը գործարանի հարակից լանջային գոտու բարձրադիր մասի ամբողջ երկայնքով:

Անձնակազմի համար օրը խորհրդանշական էր, քանի որ գործարան էին այցելել համաշխարհային ֆուտբոլի մի շարք լեգենդներ և ֆուտբոլային բարձրաստիճան պաշտոնյաներ UEFA-ի նախագահ Ալեքսանդր Չեֆերինի գլխավորությամբ, ովքեր ոչ միայն հասցրեցին բացահայտել հայկական կոնյակագործության հարուստ ժառանգությունը, այլև մասնակցություն ունեցան միջոցառմանը՝ տնկելով հատուկ ծառ ARARAT թանգարանի հարևանությամբ:

«Հայաստանում Երևանի կոնյակի գործարանի կողմից իրականացվող Համընդհանուր պատասխանատվության օրը տարիների ընթացքում ունեցել է լայն և բազմաբովանդակ սփռում՝ Երևանի բուսաբանական այգուց մինչև Սևանա լիճ, Էրեբունի արգելոց-թանգարանից մինչև Հայաստանի հեռավոր մարզեր: Մի փոքր ավելի վաղ՝ այս տարվա ապրիլին, մենք նախաձեռնեցինք Երևանի ամենանշանավոր լանջերից մեկի՝ ընկերության հարակից տարածքի կանաչապատման ծրագիրը, կարճ ժամանակահատվածում արդիականացրեցինք լուսավորությունը և այսօր, համալրելով մեր նախաձեռնությունների շարքը, աշխատակիցների ջանքերով իրականացնում ենք բարեկարգում: Այս ամենը, կարծում եմ, ունի նաև մեծ գաղափարական խորհուրդ՝ կոնյակագործության հոբելյանական այս տարում ընկերության աշխատակիցներից յուրաքանչյուրի ջանքերով մի նոր հմայք հաղորդեցինք դեպի ARARAT տանող ճանապարհին»,– նշում է Երևանի կոնյակի գործարանի գործադիր տնօրեն Սերգեյ Խաչատրյանը:

Երևանի կոնյակի գործարան

URVAKAN FESTIVAL

international festival for advanced music and haunting experiences

23—25 Sep 2022 Dilijan, Armenia

(Live)
(Performance)
(Installation)
(Live)
(DJ)
(Public Talk)
(Exhibition)
(Workshop)
(Live)
(Performance)

(Architecture)
(Live)
(Laboratory)
(Live)
(Live)
(DJ)
(Public Talk)
(Live)
(Workshop)
(Commissioned)

(Live)
(Architecture)
(Installation)
(Laboratory)
(Performance)
(Public Talk)
(Live)
(DJ)
(Exhibition)
(Workshop)

(Live)
(Live)
Public Talk)
(Exhibition)
(Workshop)
(Commissioned)
(Live)
(DJ)
(Public Talk)
(Live)

urvakan.com

@urvakanfestival

Ինչ անել

Starmus VI Armenia. Բայահայրի՛ր տիեզերքը և փոխի՛ր աշխարհը

Մարզահամերգային համալիր, սեպտեմբերի 5-9

Կոնֆերանսին մասնակցում են տարբեր ոլորտների ազդեցիկ հետազոտողներ և գիտնականներ մի նպատակով՝ կուտակված գիտելիքը մեր ամենօրյա կյանքում կիրառական դարձնելը: Գիտական հայտնագործությունները կարող են բարդ թվալ, հատկապես, երբ դրանք կապված են տիեզերքի հետ, բայց դրանք կարող են և կփոխեն մեր կյանքը՝ իմանալով, թե ինչպես կարող ենք այդ հայտնագործությունները կիրառել մեր կյանքում: Նախորդ փառատոների ընթացքում նման բազմաթիվ օրինակներ կան. բանախոսների, արտիստների և մասնակիցների հանդիպումներից արդյունավետ համագործակցային նախագծեր են ծնվել:

Սոկսիսված այգի. Դաղիվանք և անդին

Գաֆէսեհեան արվեստի կենտրոն, մինչև սեպտեմբերի 4

ԱՀԱ կոլեկտիվի նախագիծը եռամաս ցուցադրություն է՝ տարածված ԳԱԿ-ի երեք սրահում: Ցուցադրության մեկնակետը «Սասունցի Դավիթ» պարտեզի սրահն է, որտեղ ներկայացված է 2020 թվականի նոյեմբերի 13-ին Դաղիվանքում կատարված տեղհատուկ դրոշմների ինստալացիան՝ որպես ուխտագնացության վկայություն-մասունք: Ցուցադրությունը շարունակվում է «Արծիվ» սրահում, որտեղ տարբեր տեխնիկաներով աշխատանքները ներկայացնում են պատերազմի վերքերը, փլուզումներն ու ջնջումները: Իսկ «Պատկերասրահ Մեկում» ցուցադրվում է կարճամետրաժ ֆիլմ և իրականացվում է կրթական ծրագիր, որը բաց է բոլորի համար՝ փորձարկելու գրատպության արվեստը փայտե կնիքներով, ձեռագիրը դարձնելու մշտական դրոշմ:
Համադրող՝ Նայիրի Խաչատուրեան, ներգրավված արվեստագետներ՝ Սարգիս Անտոնյան, Վահրամ Գալստյան, Անուշ Ղուկասյան, Մայդա Շավակ, գրողներ ու հետազոտողներ՝ Տիգրան Ամիրյան, Նազարեթ Կարոյան, Անահիտ Հայրապետյան, Կլոդ Մութաֆյան:

Նոր նստավայրեր

Սթեյքարար, Սարյան 6

The Club-ի, Տապաստանի ու ԻնՎինոյի հեղինակները հանդես են գալիս նոր գաստրո-նախագծով. «Սթեյքարարը» առաջին զրո թափոն, կլիմայական չեզոք ու այգուց սեղան սկզբունքով աշխատող ռեստորանն է: Այստեղ վերամշակում կամ հարմարեցնում ենք այլ կիրառման համար այն ամենը, ինչը չենք կարող ամբողջովին օգտագործել՝ պլաստիկ, թուղթ, չօգտագործված սնունդ և այլն: Որպես կլիմայական չեզոք ռեստորան՝ այստեղ արտադրված սննդի ու այդ պատճառով արտանետված գազերի դիմաց ծառեր են տնկում: Սնունդում օգտագործվող բանջարեղենի զգալի մասն աճեցնում են ռեստորանի հիմնադիրները, իսկ մնացածը հայթայթում են տեղական փոքր արտադրողներից:

Tokyoooo, Նալբանդյան 37

Ճապոնական խոհանոցը Երևանում ներկայացնելու փորձեր արդեն եղել էին, բայց դեռ երբեք չէր եղել ավանդական հոսքագիծը: Գումարած դրան՝ տնական սակե ու ճապոնացի շեֆ-խոհարարի ձեռքով պատրաստվող մենյու (Tokyooo-ում հատուկ շեշտում են իրենց ռամենների ցանկը):



Hummus Kimchi, Սարյան 16

Ռուսաստանցի ռելկանտները շարունակում են իրենց յուրահատուկ փորձառությունը տեղափոխել երևանյան միջավայր: Hummus Kimchi-ը, օրինակ, ոչ այլ ինչ է, քան իսրայելա-կորեական սրճարան-բար: Հիմնական մենյուն, ինչպես կարելի է ենթադրել, բաղկացած է իսրայելական ու կորեական ուտեստների խառնուրդից, բայց պարբերաբար տեղի են ունենում հատուկ փորձարարական ճաշացանկով օրեր, հատկապես հանգստյան օրերին:

Նոր գրքեր

«Հանդարտություն», Սարգիս Հովսեփյան, Մեյրոն հրատարակչություն

Սարգիս Հովսեփյանի անդրանիկ վեպը երկու ընկերների՝ Տուրոյի ու Բենոյի մտերիմ, բայց բարդ հարաբերությունների մասին է: Վեպի գործողությունները ծավալվում են Հայաստանի անկախության՝ նույնքան բարդ տարիների ֆոնին՝ անկախացումից մինչև 2018 թվականի Թավշյա հեղափոխությունը: Ժանրային դասակարգմամբ կարելի է պնդել, որ «Հանդարտությունը» դրամա է դետեկտիվ տարրերով, իսկ եթե մի կողմ դնենք պիտակները, ապա պարզապես շատ կլանող ու հուզող պատում մեզ ճանաչելի իրականության մասին:



«Աղի թեյ», Սյունե Սևադա, newmag

Հայկական համացանցի ամենահայտնի գրողներից մեկը՝ Սյունե Սևադան, վերադառնում է իր երկրորդ գրքով և առաջին վեպով: 2019 թվականի գարնանը երաժշտական աշխարհը ցնցվում է անսպասելի լուրից. համաշխարհային մեծ ճանաչում ունեցող երիտասարդ հայ դաշնակահար ու կոմպոզիտոր Իդան ողբերգական ավտովթարի պատճառով հեռացել է կյանքից: Մահից ամիսներ անց հայաստանյան ամենամեծ հրատարակչության հիմնադիրը կապվում է Իդայի օգնականի ու ամենամտերիմ մարդու՝ Նենեի հետ՝ առաջարկելով Իդայի մասին գրել կենսագրական գիրք: Նենեն համաձայնում է, բայց գրվող ամեն էջի հետ սկսվում են բացահայտվել այնպիսի մանրամասներ, որոնք ստիպում են բացել անցյալի մոայլ էջերը, նորովի ճանաչել մարդկանց ու առերեսվել սարսափելի իրականությանը...



«Երևա, երևա, Երևան», Լուսինե Հովհաննիսյան, Վերնատուն

Դեռ երբեք 1970-80-ականների Երևանն այսքան սիրով չէր նկարագրվել: Լուսինե Հովհաննիսյանի հուշագրությունը պատմում է խորհրդային ու ներկայի քաղաքի բնակիչների մասին, վերհիշել տալիս Երևանի մարդկանց, բույրերը, համերը, գույները, նորաձևությունն ու նույնիսկ սլենգը: Գրողի, հրապարակախոսի և հոգեբանի ձեռքով պատումն ընթերցողի դեմքին առաջացնում է զգայական բոլոր դիմախաղերը՝ ժպիտ, լիաթոք ծիծաղ, հուսահատություն, տխրություն, ափսոսանք: Բայց ամեն բան՝ սահուն հեգնանքով:

Ասել ես, մի՛ վարիր

Երևանի կոնյակի գործարանն իրականացրեց ալկոհոլի պատասխանատու օգտագործման նոր ծրագիրը։

Լինելով ալկոհոլի պատասխանատու օգտագործման հետևողական ջատագով՝ Երևանի կոնյակի գործարանն իրականացրեց ևս մեկ կրթական ծրագիր, որը միտված էր բարձրացնելու ալկոհոլի օգտագործման և մեքենա վարելու անհամատեղելիության մասին հանրության տեղեկացվածությունը։

Ծրագիրն առավել հասանելի դարձնելու, ինչպես նաև շահառուների հնարավորինս լայն շրջանակ ներգրավելու համար «Ասել ես, մի՛ վարիր» ծրագիրը Երևանի կոնյակի գործարանն իրականացրեց «xDrive», «Անվտանգ երթևեկություն» և «Մոբիլ ստարտ» ավտոդպրոցների հետ համատեղ։

Ծրագիրն իրականացվեց թե՛ տեսական, թե՛ պրակտիկ ձևաչափով, ինչպես նաև հատուկ տեխնոլոգիաների կիրառմամբ մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց զգալու ոչ սթափ վիճակում մեքենա վարելու իրական վտանգները։

Դիտարկելով իր աշխատակիցներին իբրև ալկոհոլի պատասխանատու օգտագործման առաջնային դեսպաններ՝ ծրագրի շրջանակներում Երևանի կոնյակի գործարանն անցկացրեց հատուկ դասընթաց նաև իր աշխատակիցների համար։

«Ալկոհոլի և մեքենա վարելու անհամատեղելիության մասին մեր ծրագրերը շատ են, բայց, կարծում եմ, այս մեկը հատկապես կարևոր էր, քանի որ գաղափարը ներկայացվեց հենց այն շահառուներին, ովքեր նոր են մեկնարկում իրենց վարորդական փորձը։ Վստահ եմ, որ նման բովանդակալից դասընթացներից հետո «Ասե՞լ ես, մի՛ վարիր» կարգախոսը կդառնա նրանց համար իրական կրեդո և անվտանգ երթևեկության կարևոր գրավականներից մեկը»,– ընդգծում է Երևանի կոնյակի գործարանի Մարդկային ռեսուրսների կառավարման գծով տնօրեն Էլիզա Մարմարյանը։

Ծրագիրն իրականացվեց Երևանի կոնյակի գործարանի «Կայունություն և պատասխանատվություն» հայեցակարգի շրջանակներում, որը ներառում է 4 հիմնարար ուղղություն՝ բնության հանդեպ հոգատար վերաբերմունք, մարդկանց արժևորում, թափոնների և օժանդակ հումքի կայուն կառավարում (շրջանաձև տնտեսության խթանում) և պատասխանատու հյուրընկալություն։

Երևանի կոնյակի գործարան

ՎԻՇԱՊՈՒԲԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ



Նոր հայկական ֆենթըզի վեպ՝ մեր կողքին ապրող վաղնջական առասպելական էակների մասին

Երևանի բոլոր գրախանութներում

գինը՝ 4990 դրամ

Իսկ եթե հոգնեն ոտքերդ, դու հանկարծ չհանձնվես,
Քո անցած ճանապարհները վերևից դու կտեսնես...
Արեգ Նալչաջյան

Արարատված Արարատյանը.

մի երազանքի պատմություն

2021 թվականի օգոստոսին լրացրող Էլեոնորա Արարատյանը վերելք է կատարել Արարատ լեռ: Նա ԵՐԵՎԱՆ ամսագրի հետ կիսվել է անցած ճանապարհով, պատմել դժվարությունների, ինքդ քեզ հաղթելու ու դատարկությունը երազանքով լցնելու մասին:



Բոլորս մանկությունից ենք գալիս

2021 թվականի օգոստոսի 27-ին Արարատի գագաթին էի, բայց հիմա կարող եմ ասել, որ ճանապարհը դեպի Արարատ սկսվել էր մանկությունից: Կարծում եմ՝ այսօր մեր ով լինելու, ունեցած նախասիրությունների, սիրած համերի, գույների ու բույրերի հիմքը մանկությունն է: Հայրս երիտասարդ տարիներին արշավական էր, զբաղվում էր ծովային բազմամարտով և (այսօր՝ այսպես կոչված) դայվինգով: Ժամանակին լեգենդար Շավարշ Քոչարյանը մրցումներում առաջին տեղն էր զբաղեցնում, հայրս՝ երկրորդ: Հիշում եմ՝ ամեն անգամ ցույց էր տալիս իր սև-սպիտակ լուսանկարներն ու պատմում՝ «նայի՛ր, սա Արագածն է, սա Արայի լեռան գագաթին ենք», «տե՛ս, Գեղամա լեռներով այսքան կիլոմետր քայլել ենք»: Այդ ժամանակ ինձ ոչ այնքան լեռներն էին հետաքրքրում, որքան հորս բազմաթիվ պատմությունները լեռների մասին:

Արարատի «ճանապարհին» մեծ դեր խաղաց նաև մասնագիտությունս: Նոր էի սկսում մասնագիտական կարիերան, սպորտը լուսաբանող լրագրողներով 2007-ին հավաքվեցինք գնացինք Արագած՝ Հարավային գագաթ: Այդ տարիներին Հայաստանում ոչ մի հանդերձանք չկար, հիշում եմ՝ մայրիկիս գործած գլխարկով էի: Մեզ հետ էր փորձառու ուղեկից Աշոտ Լևոնյանը, որը բացահայտեց ինձ համար նոր լեռնային աշխարհը: Տարիներ անց որպես լրագրող աշխատում էի «Մեդիամաքս» լրատվական գործակալությունում: 2011-ի հերթական աշխատանքային օրն ինձ ուղարկեցին Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիայի ասուլիսին, որի ժամանակ պատմում էին՝ ինչպես են հայ լեռնագնացներն առաջին անգամ վերելք կատարել Իրանի ամենաբարձր գագաթը՝ Դեմավենդը: Այդ օրը ծանոթացա ֆեդերացիայի նախագահ Սուրեն Դանիելյանի հետ: Նրանց գործունեությունն ինձ հետաքրքրեց, սկսեցի գնալ ֆեդերացիա, մասնակցել նախ դասընթացներին, հետո՝ արշավներին: Այդ տարիներին ամենաանհասանելի թվացող լեռն Արարատն էր: Միտքը, որ կարելի է վերելք իրականացնել Արարատ, քիչ-քիչ սկսեց ձևավորվել: Այս ամենում նաև մեծ սիմվոլիզմ կար՝ Արարատյան ազգանունս:

Պայրաստ ես, երբ երազանքը նպատակ է դառնում

Ինչ-որ պահի արշավական ակտիվ կյանքումս դադար եղավ, հինգ տարով տեղափոխվեցի Մոսկվա: Բայց Արարատի միտքը, միևնույն է, հետս էր: Հիշում եմ՝ համացանցում գտել էի վերելքի համար անհրաժեշտ հանդերձանքի, գույքի ցուցակն ու սկսել գնել: Ամեն անգամ ոգևորված հերթական «պլյուսն» էի դնում այս կամ այն պարագայի դիմաց: Արդյունքում, երբ որոշեցի Հայաստան վերադառնալ, այդ ամբողջը տեղափոխելու համար ստիպված եղա մեքենա վարձել: Այդ գույքի մի մասն իսկապես օգտագործեցի վերելքի ժամանակ:

Երբ արդեն Հայաստանում էի, «արարատյան երազանքն» ավելի իրական դարձավ: Առաքելությունս իրականացնելու համար ընտրեցի հայկական աշխարհագրական նախագիծը՝ ArmGeo-ն: Նրանք մի հետաքրքիր ավանդույթ ունեն՝ Արարատ վերելք կատարածներին անվանում են «Արարատված»: Բացի այդ, ամեն տարի ArmGeo-ի հիմնադիր Տիգրան Շահբազյանը միջոցառում է կազմակերպում ու վկայագրեր հանձնում տարվա «Արարատվածներին»: Հիշում եմ՝ բոլոր տարիներին, երբ Երևանում էի, գնում էի միջոցառմանը, նստում դահլիճում ու հիացմունքով նայում մարդկանց, որոնց անուն-ազգանուններով բեմ էին հրավիրում ու հանձնում Արարատի վերելքի վկայագրերը: Եվ ամեն անգամ երազում էի հայտնվել դահլիճի այն կողմը:

Գրանցվեցի ArmGeo-ի 2019-ի վերելքին: Ցավոք, արշավներից մեկի ժամանակ ծնկի վնասվածք ստացա ու ստիպված եղա հրաժարվել: Հետո 2020-ն էր՝ համավարակ, պատերազմ: 2021-ի սկիզբն էր, երբ հստակ հասկացա՝ պատրաստ եմ ու Արարատի վերելքը պետք է լինի հենց այս տարի: Վստահ կարող եմ ասել՝ այս առումով առաջնայինը ոչ այնքան ֆիզիկապես, որքան մտքով, մտովի պատրաստ լինելն է: Սկսեցի հանդիպել Արարատ բարձրացած մարդկանց հետ, զրուցել, որ պատկերացնեմ՝ ինչ է սպասվում: Կարևոր էին մեր արշավականներից մեկի՝ Գևորգ Հարությունյանի խորհուրդները: Շատ է տպավորվել ավագ ընկերոջս՝ «Մեդիամաքսի» տնօրեն Արա Թադևոսյանի հետ հանդիպումը, ով ևս բարձրացել էր Արարատ: Ինձ ասաց՝ պատրաստ ես, երբ երազանքդ դառնում է նպատակ, «դա գործ է, որ պետք է անես, վստահ եմ քեզ վրա, գագաթից նկարի եմ սպասում»:



Էպրեղիս-Էնրեղիս

Վերելքիս հետ կապված ամեն հարցում սիմվոլիզմ կար: Նույնիսկ անհրաժեշտ գումարը հավաքելն էր սիմվոլիկ: Մանկության ընկերներից մեկը՝ Վարդանը, Միացյալ Նահանգներում է ապրում, այդ շրջանում Հայաստան եկավ, հանդիպեցինք: Ինձ նվերներ էր բերել ու վերջում նաև 100 դոլար տվեց: Սա ինձ համար խորթ էր, բայց հետո համոզեցին, որ դրսից եկող հարազատ-բարեկամների կողմից ընդունված մոտեցում է: Որոշեցի այդ գումարը նպատակային ծախսեմ, դրեցի ծրարի մեջ ու ասացի՝ «Արարատի սկիզբն է»: Հետո իրեն պատմեցի, որ վերելքիս մաս է կազմել: Չնայած որոշմանս մասին քչերը գիտեին՝ ինձ շատ հարազատներ ու ընկերներ աջակցեցին: Քույրս՝ Կրիստինան, Սանկտ Պետերբուրգից տաբատ բերեց, ընկերներիցս մեկը՝ Նիկը, Մոսկվայից բաճկոն, մեկ ուրիշը քնապարկ նվիրեց: Ամենամոտ ընկերուհիս՝ Սաթը, ցանկացած հարցում միշտ աջակցում էր:

Հայրս էր շատ ոգևորված, անընդհատ ասում էր՝ «իմ աղջիկը՝ Արարատյանը, Արարատ է բարձրանալու»: Դրան զուգահեռ ամեն օր հարցնում էր՝ «ինչի՞ ես նստած, այսօր ի՞նչ ես արել վերելքի համար, սարի կեսին ես մնալու, գնա պարապի, լողի գնա, գնա վազի»: Հիմա եմ հասկանում՝ կարողություններիս վրա կասկածելով իրականում ուզում էր մոտիվացնել ինձ, մարտահրավեր նետել, որ ավելի շատ աշխատեմ: Համոզված եմ՝ նա բոլորից վստահ էր, որ բարձրանալու եմ:

«Արարատյան առաքելությանս» մյուս խորհրդանիշը դարձավ շունս՝ Չիման, իմ արշավական ընկերը: Մի քանի ամիս ամեն օր միասին 16 հարկ ոտքով իջնում էինք, գնում այգի, ես պարապում էի, պարան թռնում, վազում Չիմայի հետ: Ինձ շատ օգնեց: Երբ վերելքի համար արդեն մեկնել էինք երկրից, տեսազանգով տուն զանգեցի: Շան համար անսովոր էր իմ այդքան օրվա բացակայությունը, որովհետև համավարակի ընթացքում երկրից դուրս չէի եկել: Հեռախոսի այն կողմից կանչեցի՝ Չիմա՛, Չիմա՛, մոտ վազեց ու սկսեց լպստել էկրանը: Իսկ թե ոնց դիմավորեց տուն մտնելիս, աննկարագրելի է:

Երբ վերելքս դեռ գաղափարի փուլում էր, կիսվեցի դրանով ընկերներիցս մեկի՝ Ազատի հետ: Ասացի՝ «ինձ միշտ հետաքրքրել է՝ Արարատյաններից ինչ-որ մեկը եղե՞լ է Արարատում»: Պատմեցի, որ մտածում եմ ազգանունովս դրոշ պատրաստել ու ծածանել Արարատի գագաթին: Արդյունքում Ազատը դիզայնը ապահովեց, միասին տպեցինք այդ դրոշը, որն ուսապարկումս էր ամբողջ ուղին.

Շատ կարևոր էր նաև սիրելի տղամարդու՝ Վահեի աջակցությունը: Վերելքից մեկ շաբաթ առաջ ասացի նրան՝ «մյուս շաբաթ Արարատ եմ գնում», զարմացած պատասխանեց՝ «Արարատում ի՞նչ կա»՝ մտածելով, թե քաղաքի մասին եմ խոսում, ասացի՝ «չէ՛, ես Ա-րա-րատ եմ գնում»: Ամբողջ ընթացքում կիսում էր զգացածս, գրում, հարցնում՝ ինչպես ենք ու որտեղ:

«Էլեոնոր, դու կարող ես, քայլի՛ր, քայլի՛ր, Էլեոնոր»

Արարատի վերելքը սկսվում էր Արևմտյան Հայաստան այցելությունից: Նախկինում եղել էի Անիում ու Կարսում և այլ քաղաքներում, բայց այս անգամ ինձ համար կարևոր էր Վանը, որովհետև մերոնց արմատները Վանից են: Հայրս առաջադրանք էր տվել՝ «անպայման կլողաս Վանա լճում ու կուտես Վանա տառեխ»: Հիշում եմ՝ մտա լիճը, լողում եմ ու մտածում՝ գուցե, նախապապս այստեղ եկել է ընտանիքով հանգստանալու կամ ձուկ բռնելու: Արարատից հետո Վանն այս ճամփորդության երկրորդ կարևոր առաքելությունն ու հզոր զգացումն էր:

Բուն վերելքը տևեց հինգ օր՝ երեք օր բարձրացել ենք, երկու օր՝ իջել: Քայլել սկսեցինք 2100 մետրից, 3200 մետրի վրա առաջին ճամբարն էր: Ծանր բեռները տանում էին ձիերը, իսկ մենք քայլում էինք միայն մեր ուսապարկերով: Ճամբարներում ամեն ինչ հարմարավետ էր, ունեինք խոհանոց, տարատեսակ ուտելիքներ, միրգ, սուրճ ու թեյ:

Գիշեր էր, դուրս եկա վրանից ու նայեցի երկնքին: Այդ աստղերը երբեք չեմ մոռանա, այնքան սիրուն էին, այնքան վառ ու մոտ, թվում էր՝ ձեռքով կարող եմ հպվել ու զգալ դրանք: Ճանապարհը դեպի երկրորդ ճամբար (4200մ) նույնպես հարթ անցավ: Ինձ համար ամենից դժվարը երրորդ վերելքն էր՝ 4200 մետրից մինչև գագաթ: Երեկոյան վեցին պիտի քնեինք, որ կեսգիշերին սկսեինք քայլել: Ինձ մոտ գրեթե չստացվեց, անընդհատ մտածում էի վերելքի մասին: Բացի այդ, օրգանիզմս սովոր չէր գիշերն այդքան քայլելուն: Ինչ-որ պահի ձեռքերս սկսեցին դողալ, չէի հասկանում՝ ինչ է կատարվում ինձ հետ ու դրանից ավելի լարվում: Պատրաստված էի տարբեր սցենարների, գիտեի՝ ինչ անել գլխապտույտի, ճնշման տատանումների դեպքում, բայց այստեղ չէի հասկանում՝ ինչն է խնդիրը:

Շատ օգնեց խմբի հոգատարությունը: Լեռներում, առհասարակ, մարդկային հարաբերություններն ուրիշ են: Անգամ մեզ ուղեկցող քրդերն էին անընդհատ մոտենում, հարցնում՝ ինչպես եմ, ստուգում բիբերս ու սրտիս աշխատանքը: Շատ հուզիչ էր, երբ գագաթին արդեն մոտ էինք, ու մեզ ուղեկցող քուրդը կրկնում էր՝ «summit there»՝ քիչ է մնացել: Վերջին մետրերից մտքումս դաջվել են Հայաստանից մեր ուղեկցորդի՝ Հրաչի բառերը՝ բարձր ձայնով ասում էր. «Էլեոնոր, դու կարող ես, քայլի՛ր, քայլի՛ր, Էլոնոր»: Հետաքրքիր է, որ այս բառերը հետս բերել եմ Արարատից ու հիմա կյանքի տարբեր իրավիճակներում հաճախ ականջներումս լսում եմ՝ «դու կարող ես, քայլի՛ր, քայլի՛ր, Էլեոնոր»: Երբ արդեն տեսնում ես գագաթը, դրա զցած ստվերը, աչքերդ արցունքներով են լցվում: Քեզ ստիպում ես հավաքվել, շարունակել քայլել ու չես էլ նկատում, որ արդեն այստեղ ես՝ գագաթին: Վերևում առաջինը բացեցի «Արարատյան» դրոշը, մտածեցի ծնողներիս մասին, ձեռքով արեցի ու ասացի՝ «մամ, պապ՝ ձեզ համար»: Հետո գագաթին կանգնած պատկերացնում էի՝ ինչպես

է պապան հիմա 16-րդ հարկի մեր պատշգամբում Թախտին նստած նայում Արարատին ու մտածում, որ ես այնտեղ քայլում եմ: Հաջողված վերելքի մասին առաջինն իր հետ ուզեցի կիսվեմ: Իջնելուց հետո զանգեցի, հեռախոսի մյուս կողմից ասաց՝ «հպարտանում եմ քեզնով»: Շատ կուզեի անձամբ, աչքերին նայելով ասել, հասկանալ՝ ինչ զգաց այդ պահին: Գագաթից նկար ուղարկեցի Վահեին՝ «հալալ ա, շնորհավոր»: Արային էլ խոստացած նկարն ուղարկեցի: Մեր 28 հոգանոց ինտերնացիոնալ խմբից գագաթ հասան բոլորը. ամենաերիտասարդը 14 տարեկան էր, ամենամեծը՝ 58:

Երականչի կորուստն ու դպրարկությունը

Գագաթին մեր խմբում բոլորը շատ ուրախ էին, նկարվում էին, շնորհավորում իրար: Իսկ ես լուռ էի, նստել էի ու մտածում, որ միակ զգացածս մեծագույն դատարկությունն է, կարծես մի թանկ բան կորցրած լինեի: Նման բան ինձնից չէի սպասում, չէ՞ որ այդքան երկար ձգտել էի սրան: Մտածում էի՝ լավ, կարո՞ղ է ինձ հետ մի բան այն չէ, ինչո՞ւ են մյուսներն ուրախանում, ես՝ չէ: Ինքս ինձ վերլուծելով՝ հասկացա, որ իրականացրել էի ու միևնույն ժամանակ կորցրել երազանքս. ներսումս դրա տեղում դատարկություն էր մնացել: Հետո, երբ արդեն տոնում էինք հաջողված վերելքը, խմբից մի տղամարդ պատմեց, որ ցուցակ է կազմել՝ գրի առնելով բոլոր այն զգացողությունները, որ ունեցել է վերելքից հետո: Նրա ցուցակում առաջին կետը երազանքի կորուստն էր: Հասկացա՝ միայն ես չեմ այդպես զգացել: Հասկացա նաև, որ այդ դատարկությունը նորմալ է ու այն միշտ պետք է լցնել նոր երազանքով, նպատակով ու ձգտումով:
Արարատից իջնելը բարձրանալուց դժվար էր, որովհետև քայլել էինք ամբողջ գիշեր: Մի հետաքրքիր շրջապտույտի զգացողություն կար այնտեղ: Երբ սկսում էինք վերելքը, հանդիպում էինք իջնող խմբերի: Նրանք քայլում էին հպարտ, իսկ մենք դեռ չգիտեինք՝ ինչ է սպասվում: Նրանք ասում էին՝ «good luck», ինչ-որ խորհուրդներ տալիս: Հիշում եմ՝ իջնող խմբերից մեկում մի տղամարդ վատ էր զգացել ու նրան իջեցնում էին ձիով, այս ամենն ազդում էր նոր-նոր բարձրացողների վրա: Իսկ հետո արդեն մենք էինք իջնում նույն հպարտությամբ ու ներքևից եկող խմբերին ասում՝ մի վախեցե՛ք, ձեզ մոտ էլ կստացվի:
Հյուրանոց հասնելուց հետո ամենացանկալին ցնցուղն էր: Կարող եմ ասել, որ այդ ճամփորդության մեծագույն վայելքները Վանը, Արարատն ու դուշն էին:

Երբ կյանքդ փոխվում է 5165-ով

Վերելքից հետո ինքս էլ չէի հավատում, որ կարողացել եմ, որ ես դա արել եմ: Սոցիալական ցանցերում նկար հրապարակեցի, մարդիկ շնորհավորում էին, հպարտանում: Հետո կուրյոզ, երբեմն նեղացնող հարցերի շարք սկսվեց. «իսկ մինչև վե՞րջ ես գնացել, հենց գագա՞թը», «մե՞ր կողմից ես գնացել, թե՞ իրանց», «դե լա՛վ, իրանց կողմից Արարատը լավը չի»: Սկզբում այս հարցերը ցավեցնում էին ինձ, մինչև մոտ ընկերս ասաց՝ «հասկացի, մեր՝ ոչ լեռնային մարդկանց համար, դա անհասանելի է թվում, դրա համար ենք նման հարցեր տալիս»: Շատերն ասում էին՝ «ինչո՞ւ մեզ չէիր պատմել, որ նման բան ես ծրագրում»: Իսկ ես ուզում էի, որ այդ զգացումը դեռ միայն իմը լիներ, ինքս այն ապրեի, ձախողվեի կամ հաջողության հասնեի:
Մեր պատշգամբը նայում է Արարատին: Երևան վերադառնալուց հետո ամեն առավոտ արթնանում էի ու տեսնում՝ լեռը փակ է: Այն բացվեց մի քանի օր հետո միայն, նայում էի ու հասկանում՝ սա ուրիշ Արարատ է, ես՝ ուրիշ էլեոնորա: Մեր տնից երևացող Արարատը նկարել էի ու ուղարկել վերելքի մյուս մասնակիցներին, մի քանի րոպեից ընդհանուր չաթը լցվեց Արարատի լուսանկարներով. ամեն մեկն այն նկարում ու ուղարկում էր իր կետից, իր տան հատվածից: Շատ հուզիչ էր:
Հիմա, երբ հետ եմ նայում, ափսոսում եմ միայն մի բանի համար: Վերադառնալուց հետո մեկ օր անց միանգամից աշխատանքի գնացի: Տնից դուրս գալուց րոպեներ անց հասկացա՝ վերադարձել եմ մեկ այլ իրականություն, ավելի ճիշտ՝ Արարատից առաջ եղած իրականությունը. նույն ոչ կարևոր քննարկումները, բողոքներն ու էներգիայի անիմաստ կորուստը: Շատ կուզեի՝ Արարատից բերածը հետս ավելի երկար պահել ու չխառնել առօրյա վազքին:
Իսկ հիմա իմ կյանքում ամեն ինչ չափվում է՝ «դու Արարատ ես բարձրացել, սա էլ կարող ես» սկզբունքով: Շատ դժվարությունների այլ կերպ եմ նայում: ArmGeo-ն «Արարատվածից» բացի մի սիմվոլիկ արտահայտություն էլ ունի՝ «երբ կյանքդ փոխվում է 5165-ով», ու իրոք այդպես է: Հասկանում ես՝ այո՛, կյանքում կան անելանելի իրավիճակներ, բայց հիմնականում ամեն ինչ որոշում են միտքդ, կամքդ, բնավորությունդ, ուժդ: Ամեն ինչ կարող ես, որովհետև իրականում ամեն ինչ քո ձեռքերում է: Լեռան վրա մենակ ես, անգամ, եթե խմբով եք բարձրանում: Լեռան վրա դու կռիվ ես տալիս ու հաղթում ես ինքդ քեզ: Լեռնագնացները սովորաբար չեն ասում՝ «ես նվաճեցի այս լեռը», դու վերելք ես կատարում, չես կարող նվաճել, հաղթել լեռանը: Բնություն-մարդ պայքարում դու միշտ պարտվող ես, լեռները սովորեցնում են հարգել բնությունը, «պայմանավորվել» նրա հետ ու հաղթել միայն ինքդ քեզ:
Սա ոչ միայն դեպի Արարատ ճամփորդություն էր, այլև նպատակի ձևավորման ճանապարհ: Ես հետևում էի՝ ինչպես է պարզապես միտքը երազանք դառնում, հում վիճակից ձևավորվում, «եփվում» մի քանի ուսապարկով, «համեմվում» այլ գույքով ու դառնում հստակ դրված նպատակ, որին հասնել է պետք: Հիմա ես գիտեմ՝ մարդն ամեն ինչ կարող է: Իսկ հիմա ես ապրում եմ նոր «արարատներով»՝ ուղիղ և փոխաբերական իմաստներով:

Էլեոնորա Արարատյան, Յանա Շահրամանյան
Էլեոնորա Արարատյանի անձնական արխիվ

Նե՛րս արի, ներս արի, ի՞նչ ես կանգնել...

Ինչո՞ւ և ինչպե՞ս Ներս Ավետիսյանի «Նե՛րս արի» գիշերային շոուի մի շարք ամառային թողարկումներ նկարահանվեցին երևանյան փաղավարիս շապ հեռու՝ Երևանի կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղի փարաճ-ջում, իսկ հրավիրված հյուրերը փորձեցին հենց նոր արտադրված ARARAT Cherry խմիչքը:



Գիշերային շոուի օրենքները

Գիշերային շոուների ձևաչափն ունի որոշ չգրված օրենքներ: Օրինակ՝ որ վարողը նստում է գրասեղանի մոտ, իսկ հյուրերը՝ սեղանի մոտ տեղակայված բազմոցին կամ բազկաթոռին, իսկ հետևում՝ պայմանական գրասենյակի մեծ լուսամուտից մի որևէ մեգապոլիսի համայնապատկերն է: Սովորաբար դա պարզապես լուսանկար է, քանի որ հեռուստատեսությունում շատ բան այդքան էլ իրական չէ: Բայց երբ «Նե՛րս արի» գիշերային շոուում վարող Ներսես Ավետիսյանի հետևում տեսնեք աստղազարդ երկինքն ու գլխավերևում կախված լուսինը, վստահ եղեք՝ դրանք միանգամայն իրական են: Իսկ լուսնի լույսի տակ փայլող կանաչ բլուրները Տավուշի անտառներն են: Հայկական հեռուստատեսության ամենասիրված շոուներից մեկն ARARAT կոնյակների օգնությամբ իր ամբողջ տաղավարով, հյուրերով ու նկարահանող խմբով հասել էր Բերդ:

↑ Արման Մարգարյան, Էվելինա Շահիրյան

Երևանի կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղը բացվել է 2004 թվականին ու շատ արագ դարձել ընկերության կարևորագույն վայրերից մեկը: Ավելին, դժվար թե գործարանի մյուս մասնաճյուղերի մեջ գտնվի նրան մրցակից շրջապատող գեղեցկության տեսանկյունից: Իսկ եթե հաշվի առնենք քաղաքի սահմանամերձ գոտում լինելը և, ընդհանրապես, դժվարհասանելիությունը, ապա հասկանալի է դառնում, թե ինչու էին Երևանի կոնյակի գործարանում երկար ժամանակ մտածում, թե ինչ հետաքրքիր ձևաչափով կարելի է այն ներկայացնել հանրությանը: Իհարկե, միշտ կարելի էր պարզապես մի ռեպորտաժ կամ ֆիլմ նկարահանել բուն գործարանի մասին, բայց դա կլիներ հեշտ ճանապարհը: Դեռևս մեր պապերը գիտեին, որ հիշարժան ու հետաքրքիր են լինում դժվար ուղիները:

«Ի սկզբանե անհնարին թվացող նախագծերն ամենահետաքրքիրն են: Այդպես առավոտյան սուրճի շուրջ խոսակցության ընթացքում ծնվեց այն միտքը, որ քաղաքի թոհուբոհի մեջ թաթախված, հանդիպումների և տեսազանգերի մեջ խրված հանրահայտ և ARARAT-ի արժեքները կիսող մարդկանց հավաքել և տանել Բերդի մեր մասնաճյուղը: Երբ մեր թիմով վառվող աչքերով պատմում էինք, թե ինչպես պետք է հասնենք Բերդ և ինչ պայմաններում նկարահանենք հաղորդումները, մեր հյուրերը վարակվում էին մեր դրական արկածախնդրությամբ, իսկ ARARAT Cherry-ն առաջինը փորձելու եզակի հնարավորությունն էլ ավելի էր ոգևորում մեր հաղորդումների հյուրերին, որոնցից շատերն արդեն իսկ ARARAT-ի վաղեմի ընկերներն էին»,– ընդգծում է Երևանի կոնյակի գործարանի արտահանման զարգացման ղեկավար Վարդգես Հովեյանը:

«Սա շատ ոգևորող և գեղեցիկ մի համագործակցություն է, որտեղ մեզ՝ հեռուստատեսային նախագիծ ստեղծողներիս, տրվում է հնարավորություն լինելու ոչ տաղավարում, այլ իրական միջավայրում,– նշում է Հրաչ Քեշիշյանը:– Տավուշի Բերդ քաղաք գնալը հնարավորություն է նաև այդ բնակավայրի մասին պատմելու, այդտեղ ապրող մարդկանց ու հանդիսատեսի հետ շփվելու: Մեր մեծ թիմը շատ մեծ ուշադրությամբ ու խնամքով ընտրեց այն գործիչներին, ում մեծագույն սիրով հրավիրեցինք Տավուշ մի քանի օր միասին անցկացնելու, զրուցելու և նկարահանումներին մասնակցելու համար: Ես կարծում եմ, որ մեր հյուրերից շատերի

↖ Հրաչ Քեշիշյան

← Վարդգես Հովեյան, Զարուհի Սարիբեկյան

ARARAT Cherry

ARARAT Cherry-ն ARARAT համահոպուային շարքի երրորդ խմիչքն է, որը գալիս է համալրելու ARARAT Apricot-ն ու ARARAT Coffee-ն: 30% թնդություն ունեցող ARARAT Cherry խմիչքն առանձնանում է փափուկ, կլորափուն համով, շահարապատ բալի սրվերներով, որը վերածվում է երկարապուն և ասպիեանաբար բայահայտվող շոկոլադով երանգավորված հետհամի: Այս նոր արտադրանքով բրենդը գնում է առաջ և միաձուլում է դասական հայկական կոնյակը բալի՝ թե՛ որպես հյութալի բույսի, թե՛ որպես տարբեր սերունդներին հայտնի մշակութաբանական խորհրդանշի հետ:

Բալի ծաղկումը մարդկային հուզական ապրումների հատուկ ժամանակաշրջան է, որին անդրադարձել և իրենց ստեղծագործություններում գովերգել են հայտնի գրողներն ու նկարիչները: Գալիք «Նե՛րս արի» հաղորդումներում ARARAT Cherry-ին կդրսևորի հայտնի լրագրողների և դերասանների, արվեստագետների և պարզապես հետաքրքիր մարդկանց անկեղծ զրույցները:

← Նույն

համար այս ուղևորությունը Բերդի բացահայտումն էր, նախ՝ որպես հրաշագեղ բնակավայրի, ապա նաև Երևանի կոնյակի գործարանի մասնաճյուղի առկայության տեսանկյունից»:

Ոչ թեր ներս եկան

Միտքը ծնվեց ARARAT-ի թիմի ու պրոդյուսեր Հրաչ Քեշիշյանի սրճախմության արդյունքում: Մի պահ, երբ հանդիպման մասնակիցները պատմում էին իրենց ստեղծագործական պլանների մասին, խոսք գնաց «Նե՛րս արի» հաղորդման մասին, որտեղ Քեշիշյանը պրոդյուսերն է: Թերևս իմիջիայլոց հարց հնչեց. իսկ կարելի՞ է, զուտ տեսականորեն, «Նե՛րս արի»-ն նկարահանել բացօթյա տարածքում: Առանց երկար վարանելու հնչեց պատասխանը. այո՛, ինչու ոչ: Հետո սրճախմության մասնակիցները ցրվեցին ու անցան իրենց գործերին, բայց հավակնոտ գաղափարի սերմն արդեն պարարտ հողի մեջ էր: Երկու օր չանցած նորից իրար զանգեցին ու պայմանավորվեցին. «Նե՛րս արի»-ի հաջորդ վեց թողարկումները կնկարահանեն հեռավոր Բերդում՝ գործարանի տարածքում՝ տավուշյան չքնաղ բնապատկերի ֆոնին, աստղազարդ երկնքի տակ:

Աստղազարդ երկինքը, իհարկե, երբեմն ուներ սեփական ծրագրերը, որոնք ներառում էին անձրևներ: Այդ ժամանակ տաղավարը պարզապես տեղափոխվում էր գործարանի փակ տարածքներ, որտեղ փարթամ անտառներին արդեն փոխարինում էին ապագա կոնյակով լի փայտե տակառները:

ARARAT-ի նոր բույրի ներքո

«Նե՛րսի արի» հաղորդման բերդյան շարքն ունեցավ մի նոր ժամանակավոր համահաղորդավար: ARARAT Craft & Twist թիմի անդամ բարմեն Ստեփանն այս թողարկումներում Ներսեսին (ու ձեռքի հետ՝ բոլոր հեռուստադիտողներին) պատմում է ընկերության նոր խմիչքների մասին, ինչպես նաև ներկայացնում ARARAT-ի հիմքով արված անկրկնելի կոկտեյլները: Ստեփանը նաև իրեն բնորոշ պերճախոս քչախոսությամբ ներկայացնում էր ARARAT Flavors շարքի նոր խմիչքը՝ ARARAT Cherry-ն: Վերադառնալով գիշերային շոուների գրված ու չգրված օրենքներին՝ մնում է թերևս ավելացնել, որ դրանց մասին շատ խոսելն անիմաստ է, գիշերային շոուները պետք է դիտել սեփական աչքերով: Այնպես որ հարմար տեղավորվում ենք ու սպասում հրավերին՝ «Նե՛րս արի», Բերդն է կանչում:

Արեգ Դավթյան
Երևանի կոնյակի գործարան

Shhau.

«Սիպերավարի եմ շփվում Երևանի հետ»

Երաժիշտ, կոմպոզիտոր, սաունդ դիզայներ Shhau-ի հետ խոսել ենք երևանյան զայլի, ֆաղաֆոլ ոգեշնչվելու, երաժշտական համայնքների, երևանյան մոդեմման ու այլնի մասին:

Ռայկոմում եմ մեծացել՝ 8-րդ հիվանդանոցի կողքի տարածքում: Կարծում եմ, որ մարդու վրա ազդում է այն տարածքը, որտեղ ծնվել ու մեծացել է: Ու, դե՛, շրջապատը, իհարկե՛:

Շատ փոքր տարիքում հալամոլա էինք խաղում ու քենթ-սթոփ: Ընկերս ու ես «փշմարի» ձև էինք հորինել, որ ոչ ոք չէր հասկանում: Ու մեզ հաղթելու շանսը համարյա զրոյական էր: Ավելի մեծ տարիքում էլ բակում չէինք խաղում՝ «վատ-վատ» բաներով էինք զբաղված: Տղայական կռիվներ, ռազբոռկաներ՝ դպրոցական տարիներին նույնիսկ ոստիկանություն ընկանք:

Բակում 4-5 բեսեդկա ունեինք: Մեկը կարմիր բեսեդկան էր, չնայած որ իրականում կապույտ էր: Վրայից ներկել էին, բայց անունը տենց էլ մնաց:

Քուչից քուչա գնալու ու հաշիվ մաքրելու կոնկրետ քաղաքականություն կար: Եթե մեկը մյուսի հետ լավ էր՝ շատ անգամ ստիպված էիր մյուսի հետ էլ լավ լինել: Բայց եթե հանկարծ այդ երկուսը թարսվում էին, քուչեքով իրար դեմ էին դուրս գալիս: Շատ երևանյան մոտեցում էր: Բայց ես միշտ բոլորի հետ լավ էի:

5 դպրոց եմ փոխել՝ սկսել եմ 114-ից: 147-ում ամենաերկարն եմ սովորել. հենց էնտեղ սկսեցինք հատիկով սիգարետ առնել ու դասամիջոցներին զուգարանում ծխել: Կամ էլ տատիկիս բակ էինք գնում՝ պաղեզդրում ծխելու:

Այդ տարիներին հիմնականում ինչ կար՝ էդ էինք լսում: Բլութութով ու իկապորտով իրար երաժշտություն էինք փոխանցում, ժանրը միշտ չէր էական: Մամաս ջութակահարուհի ա, տանը հիմնականում լավ երաժշտություն էինք լսում:

6-7 տարեկանից երաժշտությամբ եմ զբաղվել ու երբ սկսեցի հաճախել երաժշտական դպրոց, արդեն հարվածային գործիքներ էի նվագում: Հետո Կոնս ընդունվեցի, ու զուգահեռ Թումոյում երաժշտության դասընթացավար էի, Pyramidz բենդի ղեկավարն էի: Բայց իրականում ամեն ինչ սկսեց տանը մյուզիք ուսումնասիրելուց ու օդի մեջ նվագելուց:

Մի անգամ պարզեցինք, որ մեր կողքի բակերում երաժշտությամբ զբաղվող էլի մարդիկ կան: Որոշեցինք խումբ հավաքել: Ջեյթունի տրամվայի գծերի ներքևում երաժշտական դպրոց կար: Սենյակներից մեկում հարվածային գործիքներ էինք գտել: Գնում էինք ու հենց այնտեղ փորձեր անում:

Կոնսերվատորիայում միանգամից երկու բաժնում էի սովորում՝ կոմպոզիտոր ու երաժշտագետ: Ավարտեցի կարմիր դիպլոմով:

Երևանը քաղաք ա, որտեղ բոլորը կարծես ոգեշնչվում են: Ամեն երկրորդը Dj, ռեփեր, լուսանկարիչ կամ արվեստագետ է դառնում:

Ինչո՞վ ա հայկական ջազը հայկական՝ նվագելու մոտեցումով: Երաժշտությունը լեզու ա, ու այստեղ նաև երևանյան լեզվով ես նվագում: Բայց անկախ լեզվից ու տարածքից՝ գնահատականը նույնն ա մնում: Լոկալ ոճային փոփոխությունը, ֆոլք ու քաղաքային երաժշտական էլեմենտները, միևնույն է, իրենց ազդեցությունն ունեն:

Քաղաքը ոչ միայն ջազ ա լսում: Տարբեր Երևաններ կան՝ կենտրոնը տոլերանտ ա, այստեղ հնարավոր ամեն ինչ կարող ա հնչել՝ և՛ բլեք մետալ, և՛ ռաբիզ, և՛ տեխնո, և՛ ալտերնատիվ հիփ-հոփ, և՛ նյու ջազ, և՛ դիփ հաուս և այլն: Բանգլադեշում դժվար թե մետալ համերգ կազմակերպվի:

Երաժշտությունը դժվարանում եմ բառերով նկարագրել՝ ինքն էն ա, ինչ կա:

Երևանը շատ խառն ա՝ միանշանակ որևէ մի ոճ չի կարող նկարագրել մեր քաղաքը:

Երաժշտական առումով կրթության պակաս ունենք: Մարդիկ սիրում են այն, ինչը նրանց համար հեշտ հասանելի է ու առաջինն է մատուցվում: Ցանկացած նոր բան իրենց համար դժվար ա ընկալել, որովհետև չեն էլ փորձում ուսումնասիրել: Սակայն վերջին շրջանում նորություններ իրականում շատ են լինում, ինչը գովելի ա:

Եթե արդեն պատրաստ ես ինչ-որ նոր բան ներկայացնես, միշտ չի, որ դրա հարթակն այստեղ կա: Այսինքն՝ ստացվում ա, որ ի սկզբանե պետք ա մտածել հարթակ ստեղծելու մասին: Դա էլ իր հերթին դանդաղացնում ու դժվարացնում ա ընթացքը:

Մեր քաղաքում երաժշտական փոքր-փոքր համայնքներ կան ձևավորված: Ու որպես կանոն շատերն իրար հետ չեն համագործակցում: Արհեստական մրցակցություն կա, աջակցությունը երբեմն բացակայում ա:

Երևանն ինձ համար համ քաղաքն ա, համ մարդիկ: Անձնական աճը, ոնց էլ լինի, կապված ա քաղաքի ռիթմի հետ: Իսկ Երևանն իր ռիթմն ունի, որը երբեմն շատ դանդաղ ա ընթանում, մեկ-մեկ էլ՝ արագ:

Մտածելակերպով մարդիկ մեզ մոտ ծայրահեղականորեն և՛ տարբեր են, և՛ նման, ու դա Երևանն ա:

Սիպերավարի եմ շփվում Երևանի հետ: Վերջերս շատ չենք շփվել, բայց լավ հարաբերություններ ունենք, ընկերություն ենք անում իրար հետ:

Լենա Գևորգյան
Մարիամ Լորեցյան

ԹՌԻՉՔ ԴԵՊԻ ՍՏԵՂԾԱՐԱՐ ԱՊԱԳԱ

Հուլիսին մեկնարկեց ՀԲԸՄ-ի կողմից իրականացվող «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագիրը: ԵՐԵՎԱՆը զրուցել է ծրագրի ղեկավար Աննա Գարգարյանի, ռազմավարության ղեկավար Լին Պարավյանի և միջոցառումների և հաղորդակցության համակարգող Շողակաթ Մլքե-Գալստյանի հետ:

→ «Կատապուլտ» ծրագրի ղեկավար Աննա Գարգարյանը

Մեկ միջավայր

«Մեր մշակութային և ստեղծարար արդյունաբերությունը զարգացման կարիք ունի: Անելիքները շատ են, ժամանակը՝ քիչ,– ասում է Աննա Գարգարյանը,– պիտի կատապուլտի պես թռնենք դեպի ապագա՝ գտնելով լուծումներ, որոնք կմղեն մեզ առաջ»:

Հուլիսի 12-ին տրվեց «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագրի մեկնարկը: Ծրագրի ծածկույթը բավական մեծ է, իսկ նպատակն է զարգացնել տեղական մշակութային և ստեղծարար ոլորտը՝ վերհանելով դրա տնտեսական ներուժն ու նախաձեռնելով համակարգային փոփոխություններ: Այն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ ՀԲԸՄ-ի կողմից, «Creative Armenia» հիմնադրամի հետ համատեղ:

Ստեղծարար ոլորտի խնդիրներից խոսում են բոլորը՝ դերասանները, երգիչները, դիզայներները, գովազդային գործակալությունների ղեկավարները: Նրանցից շատերը տեղային լուծումներ են առաջ բերում սեփական խնդիրների համար, որոնք, ճիշտ է, շատ դեպքերում դրական արդյունքների են բերում, բայց «Կատապուլտի» թիմը վստահ է՝ երկարաժամկետ և արմատական փոփոխություններ բերելու համար հարկավոր է ուժեղացնել ընդհանուր համակարգը: «Շատ հաճախ ստեղծարար ոլորտի տարբեր ճյուղերի ներկայացուցիչները չեն գիտակցում, որ բոլորով մեկ էկո միջավայրում են և ունեն նույնանման խնդիրներ,– ասում է Շողակաթ Մլքե-Գալստյանը,– մենք ցանկանում ենք ստեղծել մի հարթակ, որում մասնատված մշակութային դաշտը կմիավորվի ընդհանուր լուծումներ գտնելու նպատակով»:

Գերակա ոլորտ

Վերջին տարիներին տարբեր եվրոպական երկրներում ուսումնասիրություններ կատարելով՝ պարզել են, որ մշակութային և ստեղծարար ոլորտը ֆինանսաբերության առումով երկրորդ տեղն է զբաղեցնում: «Կատապուլտի» շրջանակներում նման «չափումներ» կարվեն նաև Հայաստանի ամբողջ տարածքում: Նախագծի մեկնարկային փուլում «Բրեվիս» հետազոտական ընկերությունը կանցկացնի որակական և քանակական հետազոտություններ: Ստացված տվյալների հիման վրա կիրականացվի քարտեզագրում և կարիքների գնահատում, որպեսզի պարզ դառնա ոլորտի տնտեսական ներուժի պատկերը:

«Այսօր տեղեկատվական տեխնոլոգիաները համարվում են գերակա ոլորտ Հայաստանում, խրախուսվում են օրենսդրական և հարկային մակարդակներում,– ասում է Աննան,– այսինքն, երբ պարզ դարձավ վերջինիս տնտեսական ներուժը, կառավարության կողմից որոշակի քայլեր ձեռնարկվեցին դրա զարգացմանը նպաստող միջավայրի ստեղծման համար: Մենք վստահ ենք, որ մշակութային և ստեղծարար ոլորտը նույնպես կարող է նման արդյունքներ գրանցել»:

Հինգ խնդիր, երեք ուղղություն

Ծրագրի շրջանակում թիմն առանձնացրել է հինգ հիմնական խնդիր, որոնք թույլ չեն տալիս ոլորտին կանգնել կայուն զարգացման ուղու վրա: Առաջին հերթին ոլորտը գրեթե անտեսանելի է որպես մեկ միավոր: Երկրորդը՝ չկան համապատասխան հարթակներ, որտեղ կարելի է համագործակցել և ճանաչել միմյանց որպես համայնք: Երրորդը՝ չկա մեկ ձայն, որը կներկայացնի ոլորտը որոշումներ կայացնողներին:

Վերջապես, նորարարական մոտեցումների և համապատասխան գործիքակազմի ակնհայտ պակաս կա:
Այս խնդիրներին գլոբալ լուծում տրամադրելու համար ծրագիրն իրականացնելու է նախաձեռնություններ երեք հիմնական ուղղություններով: Առաջինն առաջխաղացման ճյուղն է, որի շրջանակում ծրագիրը ներկայացնելու և շուկա է մտցնելու հայկական ստեղծարար պրոդուկտները Katapult Pavilion միջոցառման միջոցով: Տարին երկու անգամ անցկացվելու է Katapult Talk թվային մեկ շաբաթ տևողությամբ գագաթնաժողովը: Ծրագիրը նաև հրավիրելու է ստեղծարար ոլորտի տարբեր փորձագետների, որոնք կիսվելու են սեփական փորձով և գիտելիքներով: Երկրորդ, համագործակցության խթանման ուղղության մասով, լճացումից խուսափելու և ոլորտի ներսում որոշակի կապ ստեղծելու նպատակով «Կատապուլտը» նախաձեռնելու է փորձի փոխանակում, համագործակցություններ, նեթվորքինգի հնարավորություններ տարբեր ոլորտների միջև:

↑ Ծրագրի մեկնարկին նվիրված միջոցառման ընթացքում համագործակցության հուշագրի ստորագրումը ՀԲԸՄ-ի, ԵՄ-ի և ՀՀ երեք նախարարությունների միջև

→ Ծրագրի մեկնարկին նվիրված միջոցառման հյուրերը

Թվային խորհուրդ

Ծրագրի՝ «Կենսակայուն» խորագրով միջոցառման ընթացքում կնքվեց համագործակցության հուշագիր Հայկական բարեգործական ընդհանուր միության, Հայաստանում Եվրոպական միության և երեք նախարարությունների միջև՝ էկոնոմիկայի, Կրթության, Գիտության, Մշակույթի և սպորտի ու Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների: Սկզբնական շրջանում ստեղծվելու են աշխատանքային խմբեր, անցկացվելու են մի շարք քննարկումներ: Ավարտական արդյունքը լինելու է մշակութային և ստեղծարար արդյունաբերության խորհուրդ, որը կունենա նորարարական ձևաչափ: Գործելով ուղիղ ժողովրդավարման սկզբունքներով՝ խորհուրդը կհանդիսանա համատեղ աշխատանքի, որոշումների կայացման և համագործակցության թվային հարթակ, որը ոլորտը կդարձնի չափելի և կներառի նաև ամբողջական տվյալների բազա: Խորհրդի միջոցով «Կատապուլտ»-ն ապահովելու է պետական-մասնավոր սեկտորների երկխոսությունը հետագայում օրենսդրական և այլ գլոբալ փոփոխություններին նպաստելու նպատակով: Մասնավորապես՝ ծրագիրն ապագայում նախատեսում է ներկայացնել չորս հստակ բարեփոխման առաջարկ խորհրդարանին՝ ոլորտի կայուն աճն ապահովելու համար:

Ստեղծարար ներդրում

Ոլորտում գործող կառույցների և անհատների հզորացման նպատակի շրջանակում ծրագիրը ներդրվելու է նաև մարդկանց, ենթակառուցվածքների, գործիքների մեջ՝ տրամադրելով նորարարական գործիքակազմ, ձեռնարկելով ստեղծարար ինկուբատորներ և գրանտային հնարավորություններ:
«Կատապուլտը» տրամադրելու է գրանտային ֆինանսավորում տեխնիկայի ձեռքբերման համար, ինչն իրենից ենթադրում է նաև տվյալ կառույցների աշխատակիցների կարողությունների բարձրացմանը միտված նախաձեռնություններ: «Creative Armenia» հիմնադրամի կողմից արդեն իսկ իրականացվող «Արտ բոքս» նախագծի միջոցով ծրագիրն ավելի փոքր գրանտներ է տրամադրելու այն բիզնես հայեցակարգերին, որոնք կծնվեն նախագծի ինկուբատորներում: Նաև գործիքակազմի մասով ծրագրի ամենախոշոր նպատակն է Fablab թվային արհեստանոցի ձեռնարկումը, որը ներառված լինելով MIT համալսարանի Fab Academy-ի ծրագրում՝ միջազգային մակարդակի գիտելիք և հաստոցներ է տրամադրելու իր շահառուներին: Ծրագրի այս տարրի մասով բաց կանչ է հայտարարվելու տարբեր մշակութային և ստեղծարար կառույցների համար:
«Երկարաժամկետ արդյունքների հասնելու միակ տարբերակը նորարարական տեխնոլոգիաների ներդնումն է,– ասում է Լին Պարավյանը,– ապագայի կառավարումն ամբողջությամբ գնում է դեպի թվային մոդել, և մենք պիտի կիրառենք այդ մոտեցումները մեր աշխատանքում, ինչպես նաև կրթենք տեղացի մասնագետներին այդ ուղղությամբ»:

Մարգարիտ Միրզոյան
ՀԲԸՄ

Convivial Reunion

Ինչո՞ւ Երևանի կոնյակի գործարանում մի օր որոշեցին, որ աշխատակիցներին պետք է հնարավորություն տալ ավելի մոտիկից ծանոթանալու ապգային ժառանգության հետ, և ինչպես նրանց առջև բացվեցին Մատենադարանի գիտական մասի ամենադժվար բացվող դռները:

Ինչպես հայտնի է, Հայաստանը փոքր երկիր է, որը հաճախ քարտեզի վրա նույնիսկ չի երևում: Դա է պատճառը, որ բոլորս էլ այս կամ այն չափով անհանգստանում ենք, թե Հայաստանն ինչպես է ներկայանում մեծ աշխարհին: Սովորաբար արվեստի մի քանի հանճարների անունների կողքին հնչում է նաև հայկական կոնյակը. ARARAT-ը վաղուց արդեն Հայաստանն ավելի տեսանելի է դարձնում ու մեզ հպարտության առիթ տալիս ցանկացած միջազգային հանդիպումներում: Երևանի կոնյակի գործարանում, իհարկե, այս իրողությունը շատ լավ գիտակցում են: Ու հենց այդ պատճառով էլ մտածում են, որ եթե ներկայացնում ես երկիրդ, ուրեմն պետք է առաջին հերթին ինքդ շատ լավ ճանաչես սեփական ժառանգությունդ: Սա Convivial Reunion նախագծի մեկնարկի կարևոր, թեպետ և ոչ միակ պատճառներից մեկն էր:





Համակեցություն մշակույթի հետ

«Դարերի հոլովույթում ARARAT կոնյակները ձեռք են բերել տարբեր բնութագրեր, բայց ARARAT-ը նաև մարդկային անկեղծ շփումների մասին է: Երբեմն հենց այդ շփումները ձևավորում ու բովանդակում են մեր աշխարհընկալումները: Եվ քանի որ աշխատանքի բերումով ընկերության որոշ աշխատակիցներ շատ հաճախ հնարավորություն էին ունենում մշակույթի մարդկանց հետ շփվել, որոշվեց ստեղծել կորպորատիվ ներքին մի նախագիծ, որը կընդլայներ այդպիսի բացառիկ շփումների շրջանակը: Այդպես ծնվեց Convivial Reuinon շարքի գաղափարը»,– պատմում է Երևանի կոնյակի գործարանի հասարակայնության հետ կապերի ղեկավար Զարուհի Սարիբեկյանը:

Ճիշտ է, պայմանական Սարյանի տուն-թանգարան մտնելը թերևս հասանելի է բոլորին՝ պետք է միայն ցանկություն, ժամանակ ու հազար դրամ (ու անկախ ամենից դա պետք է անել): Բայց սովորական պայմաններում դժվար թե ձեր այցն ուղեկցվի վարպետի ընտանիքի անձնական պատմություններով ու հուշերով:

«Ըստ իս՝ հենց դա է գաղափարի հմայքը: Մենք հրավիրում ենք բացահայտել պայմանական թանգարանը ոչ միայն իր դասական ձևաչափի ներքո, այլև թանգարանային համայնքի մեր գործընկերների հետ միշտ մտածում ենք լրացուցիչ իմաստներ հաղորդելու մասին»,– շարունակում է Զարուհի Սարիբեկյանը:

Convivialite-ն ծրագրի անվան մեջ գլխավոր բառն է, որը տառացիորեն կարելի է թարգմանել որպես «համակեցություն»: Բայց ֆրանսերեն բառն ունի ավելի նուրբ, դժվար թարգմանելի երանգներ, այդ թվում՝ այն զգացումը, երբ անցյալի հուշերը ջերմացնում են քեզ: Այն, ինչ պետք էր հենց այս ծրագրի ոգին փոխանցելու համար:

Տեսնել, լսել, ֆենարկել

Առաջին փորձը Գրիգոր Խանջյանի և նրա ժառանգության մասին էր, որը կարդաց Գաֆէսճեան արվեստի կենտրոնի ցուցադրությունների գծով տնօրեն, արվեստաբան Արմեն Եսայանցը: Միջոցառումից քսան օր հետո պարզ դարձավ, որ հանրությունն արդեն պահանջում է երկրորդը: Ընդհանրապես, արձագանքն ու բաց քննարկումները ծրագրի հիմնասյուներից մեկն են. «Շարքի հերթական միջոցառման կոնցեպտը շատ անգամ ձևավորվում է հետադարձ կապի հիման վրա, մեր աշխատակիցների կարծիքը սկզբունքային կարևորություն ունի մեզ համար»,– ասում է Զարուհին:

Շարքը սահմաններ չի ճանաչում: Convivial Reunion շարքի հետկուլիսյան կյանքը շատ պարզ է և անկեղծ: Նախապես հայտարարված միջոցառմանը կարող է մասնակցել ցանկացած աշխատակից՝ անկախ մասնագիտական ուղղվածությունից կամ մասնաճյուղից: Իսկ միջոցառման վերջում մշտապես տեղի է ունենում տեսածի ու լսածի քննարկում՝ մի գավաթ ARARAT կոկտեյլի ուղեկցությամբ:

→ Մատենադարան կատարած այցելությունից հետո

Մարդակենտրոն մոտեցում

Քննարկելու բան շատ կա: Կարելի է պատկերացնել, թե որքան շատ տպավորություններ են հավաքվում Մեզերյան կարպետի, Կոմիտասի, Երվանդ Քոչարի կամ Սարյանի թանգարանների հետ արված համատեղ ծրագրերից հետո: Մասնակիցների հիշողությունները վառ են առ այսօր:

Արվեստագետին բացահայտելու համար երբեմն մեծ դեր են խաղում անձնական կյանքի հետաքրքիր դրվագները: Օրինակ, քոչարական հետքերով զբոսանքի ժամանակ պարզվեց, որ վարպետը հատուկ սեր է տածել քաղցրի նկատմամբ: Այսպես, կոնյակի գործարանի աշխատակիցները ոչ միայն հաղորդակից դարձան նրա արվեստին, այլև համտեսեցին վարպետի սիրելի բաղադրատոմսով պատրաստած քաղցրավենիքը:

Կոնյակը բնություն է, աշխատանքն ու պատմական ավանդույթները: Բայց ամենը չէր ստանա իր վերջնական տեսքը, եթե չլիներ մարդու վարպետությունը: Հետևաբար, վարպետի մարդկային հատկությունները շատ գեղեցիկ հանգավորվում են ARARAT-ի մարդակենտրոն գործունեության հետ:

Ժառանգության ծաղկում

2022 թվականի գարնանը, երկու տարվա հարկադրված դադարից հետո, ծրագիրը նորից վերադարձավ: Այն էլ՝ Հայաստանում կոնյակագործության 135-ամյա հոբելյանի համատեքստում: Այդ հոբելյանն էր պատճառը, որ շարքի վերածնված միջոցառումը փորձեց դիտարկել «Ժառանգությունը» բառի ողջ ծավալով:

Եվ, իսկապես, եթե չլինեին տեղեկությունները գրավոր փոխանցելու վարպետությունն ու միջոցները, մեր ժառանգությունն այսօր կլիներ շատ ավելի համեստ: Ինչ կլիներ մեր ժառանգությունը, եթե Թումանյանը ժամանակին չմշակեր ժողովրդական հեքիաթները, իսկ Կոմիտասը գրի չառներ երգերը: Այդպես, ARARAT-ի թիմն ուղևորվեց Մատենադարան:

Մատենադարանը մի զարմանալի գանձարան է, որը բաց է բոլորի համար, բայց միայն մասամբ. սա նախևառաջ ինստիտուտ է, հետո նոր թանգարան, այնպես որ դռների զգալի մասն այստեղ փակ է: Բայց, ինչպես ասվեց սկզբում, ցանկության դեպքում դեպի մշակույթ տանող ցանկացած դուռ կարող է բացվել: Երևանի կոնյակի գործարանի թիմն այցելեց ձեռագրերի վերականգնման ու մանրանկարչության բաժիններ: Ու եթե այնտեղ աշխատող վարպետներին հետևելն ինքնին հրաշքին ականատես լինելու պես մի բան է, պատկերացրեք, թե ինչ հաճույք էր ինստիտուտի աշխատակիցների բացառիկ նվերը. Երևանի կոնյակի գործարանի տարբերանշանի ծաղկումը իսկական մագաղաթի վրա: Մանրանկարի մի մասն էլ ծաղկեցրին այցի մասնակիցները: Ահա այսպես, հին վարպետների ավանդույթներով ծաղկումը համընկավ հայ կոնյակագործության ծաղկման ժամանակաշրջանի հետ:

Արտավազդ Եղիազարյան
Երևանի կոնյակի գործարան

ԵՎ ԵՂԱՎ ԿԱՊԸ.

հայոց տելեկոմի պատմությունը

Մարդկանց միջև հեռահաղորդակցությունը երկար ճանապարհ է անցել մինչև հասել է մեր օրեր՝ տեղավորվելով մարդու ափի մեջ: Աղավնիներից և սուրհանդակներից կտրուկ անցում կատարելով տելեգրաֆին, Մորզեի սարքին և այնուհետև «հեռախոսության» գաղափարին՝ այսօր միմյանց հետ կապի մեջ լինելը դարձել է հասանելի յուրաքանչյուրին: ԵՐԵՎԱՆը պատմում է, թե ինչպիսի ճանապարհ է անցել հայկական տելեկոմն այսօրվա գերժամանակակից լուծումներին հասնելու համար:



→ Նոր Նորքի հեռախոսակայան, 1978թ.

→ Երևանի կենտրոնական տելեգրաֆ, 1981թ.



1864

Հայաստանում սկսվում է էլեկտրատեխնիկական հեռահաղորդակցության դարաշրջանը: Կառուցվում է Մորզեի 5 սարքից բաղկացած հեռագրային գիծ, որը կապում է Թիֆլիսը, Դիլիջանը, Երևանը, Նախիջևանը և Ջուղան: Այդ նույն ընթացքում կառուցվում է մեկ այլ գիծ, որը կապում է Դիլիջանն ու Ալեքսանդրապոլը (այժմյան Գյումրին): Այսպիսով, արդեն 1899-ի ավարտին Երևանը կապի մեջ էր երկրի բոլոր խոշոր քաղաքների հետ՝ ներառյալ Էջմիածինը, Իգդիրը և Նոր Բայազետը:

↓ Մորզեի համակարգը 20-րդ դարասկզբին

1913

Ամիրյան փողոցի հարևանությամբ՝ հեռագրային գրասենյակի երկրորդ հարկում տեղադրվում է Հայաստանում առաջին ՏՄ (տեղային մարտկոց) հեռախոսային կայանը, որը տրամադրում է 200 հեռախոսահամար տարողությամբ օդային ցանց: Վերջինս իր տրամաբանությամբ շատ նման է առ այսօր դաշտային պայմաններում զինծառայողների կողմից օգտագործվող հեռախոսակապի սարքավորումներին: 20-րդ դարի ավելի ուշ շրջանում կառուցվում և կիրառության մեջ են մտնում միջքաղաքային հեռախոսային կապի գծերը, մասնավորապես Երևան-Ալեքսանդրապոլ և Ալեքսանդրապոլ-Կարս հետագծով:



1914-1930

Այս ընթացքում երկրի թե տնտեսական, թե հեռախոսային ցանցի զարգացման հարցում մեծ ճգնաժամ է սկսվում: Առաջին աշխարհամարտը և հաջորդող Հայաստանի որպես հանրապետություն կայացման բարդ շրջանն իրենց ազդեցությունն են ունենում երկրի վրա՝ ժամանակավորապես կասեցնելով որևէ առաջխաղացում: Դրան հաջորդում են Խորհրդային տարիները, որոնց ընթացքում սկսվում են ակտիվ վերականգնողական աշխատանքներ. կառուցվում է այս անգամ 137 հեռախոսահամար ունակությամբ նոր ցանց:
Նաև կիրառության մեջ են մտնում կապի այլ միջոցներ՝ ռադիոն, փոստը: ԽՍՀՄ Կապի ժողկոմը տարածաշրջանում թույլատրում է կարճալիքային կայանների կիրառումը:

1930-1934

Տասնամյակի սկզբում Հայաստանում հայտնվում են ԿՄ (կենտրոնական մարտկոց) հեռախոսային կայաններ, որոնք թույլ են տալիս շրջանառության մեջ դնել 500 հեռախոսահամար: Այս լուծումն աշխարհում կիրառության մեջ էր մտել դեռ 1925 թվականից, սակայն Թուրքիայի հետ լարված սահմանային իրավիճակի պատճառով Հայաստանում այն տարածում գտավ արդեն հաջորդ տասնամյակում:
Հենց այս շրջանում երկրի տարբեր քաղաքներում հայտնվում են մասնագիտացված հեռախոսային տարածքներ: Առաջին նման կետերը հայտնվեցին Ապարանում, Լենինականում, Կիրովականում, Վեդիում և Հոկտեմբերյանում:

← Հանրային ռադիոյի հեռարձակումը փողոցում

↓ Լենինականը (Գյումրին) 1930-ականներին

← Հեռախոսային մտոց

1935

Երևանում մեկնարկում է ստորգետնյա հեռախոսային ցանցի կառուցումը, որը միանալով ԿՄ կայանին՝ սպասարկելու էր 6000 բաժանորդի: Այդ նպատակով գետնի տակ տեղադրվում են հատուկ խողովակներ և դիտահորեր: Վերջիններիս մետաղյա կափարիչներն այսօր էլ հնարավոր է տեսնել Հայաստանի տարբեր քաղաքներում «հեռախոս» կամ «ԱրմենՏել» գրվածքով:

1937-1940

Գործարկվում է կառավարական ԱՀԿ-ն, որը սպասարկում է 50 հեռախոսահամար: Այդ ընթացքում ընդլայնվում էին քաղաքային և գյուղական տարածքների ցանցերը: 1940 թվականի դրությամբ Հայաստանի 40 քաղաքներն ապահովված էին հեռախոսացանցով, որը սպասարկում էր ընդհանուր առմամբ 12000 բաժանորդի:

1948

Հայաստանում գործարկվում է առաջին ընդհանուր օգտագործման ավտոմատացված ԱՀԿ-ն 8000 հեռախոսահամարներով և «2» ինդեքսային համարով: Հենց այս շրջանից սկսած հեռահաղորդակցության ոլորտն ակտիվ աճ է գրանցում: Կապի նախարար Թադևոս Մինասյանցի օրոք կառուցվում են բազմաթիվ կայաններ, հիմնադրվում է Ռադիոտունը, Հայփոստը և իրականացվում են կապին վերաբերող շատ այլ նախաձեռնություններ: Հեռախոսային ցանցը կապում է Երևանը երկրի տարբեր քաղաքների և գյուղերի հետ: Տարբեր մասերում տեղադրվում են նաև ավելի փոքր ունակությամբ կայաններ: Կիրառության մեջ են մտնում հաճախականության խտացման համակարգեր, ինչը թույլ է տալիս կայաններին զուգահեռաբար տասից ավելի հեռախոսազանգ մատակարարել:

↓ «Ալտայ» շարժական կապի կայան

1965

Կուտուզով (այժմ՝ Գյուլբենկյան) փողոցում տեղադրվում է առաջին միջքաղաքային կայանը և այդ նույն տարում Երևանն անցնում է վեցանիշ հեռախոսահամարների համակարգին: Այդ պահի դրությամբ մայրաքաղաքում տեղադրված էր 14 ԱՀԿ, իսկ 70-ականների սկզբին Երևանում գործում էր 107000 հեռախոսահամար, երկրում՝ 148000: Հենց այդ նույն տարիներին Հայաստանում շահագործման դրվեց առաջին սերնդի «Ալտայ» շարժական կապի ցանցը:

1976-1980

1976-ից Երևանում կիրառության մեջ են մտնում կորդինատային կայանները, որոնք որակապես գերազանցում են նախորդող լուծմանը: 1977 թվականին գործարկվեց առաջին արբանյակային կապի վերգետնյա «Օրբիտա» տեսակի կայանը, որը մինչև 1982 թվականը Հայաստան էր հեռարձակում հեռուստատեսային հաղորդումներ, իսկ հետագայում ապահովում էր միջազգային հեռախոսակապը:

→ «Օրբիտա» տեսակի կայանը Խաբարովսկում

1982

Ի հայտ է գալիս նոր, արդեն միջազգային էլեկտրոնային «Մետակոնտա» (M10C) տեսակի կայանը, որը միավորում է երկրում գործող բոլոր հեռախոսային կայանները: Այն կիրառությունից դուրս բերվեց միայն 2000-ականների սկզբին, երբ հանրապետությունն ամբողջությամբ անցավ թվային կապի գծերի կիրառությանը:

↑ Հարավսլավիայում օգտագործվող «Մետակոնտայի» կրծքանշան

← Կապի շենքի ճակատը

1995-1997

1995-ին ՀՀ կապի նախարարության որոշմամբ ամերիկյան Trans-World Telecom ընկերության հետ համատեղ հիմնադրվում է «ԱրմենՏել» ՓԲԸ-ն: Այդ նույն տարում կառուցվում է առաջին օպտիկամանրաթելային ցանցը, որը թույլ տվեց քաղաքացիներին հասցնել բազմասերվիսային ցանցի (NGO) տեխնոլոգիան: 1996 թվականին մայրաքաղաքում կառուցվում է վեցը օպտիկամանրաթելային օղակ, ինչպես նաև մեկնարկում է նոր 2G սերնդի բջջային ցանցի կառուցման նախագծումը: Վերջինս իր մեջ ներառում էր 11 հիմնական կայան Երևանում: Արդեն 1997 թվականին կառուցվեց TAOS մայրուղային հանրապետական ցանցը, որը ծածկեց հանրապետության ամբողջ տարածքը:

1998

ՀՀ կապի և տրանսպորտի նախարար Գրիգոր Պողպատյանն ուղարկում է Հայաստանի երբևէ առաջին SMS հաղորդագրությունը: «Շարի՛, գալիս եմ»,– գրել է նա «ԱրմենՏել» ընկերության ղեկավարին՝ նկատի ունենալով շախմատի խաղաքարերը:

2005-2008

2005-ին շուկա է մուտք գործում երկրորդ բջջային օպերատորը. շարժական կապի ծառայությունների հասանելիությունը աճում է: 2008-ին «ԱրմենՏելը» սկսում է իր հաճախորդներին տրամադրել բջջային ինտերնետ: Արդիականացվում է գործող SDH ցանցը և սկսվում է նոր՝ IP MPLS ցանցի կառուցումը: Հունիսին Հայաստանում առաջին անգամ պատմության մեջ գործարկվում է 3G ցանցը, որն արդեն սեպտեմբերին հասանելի է դառնում քաղաքացիներին՝ Beeline ապրանքանիշի ներքո գործող ընկերության 30 հիմնային կայանների միջոցով: 2008-2009 թվականներին կառուցվում է Հայաստան մտնող երկրորդ օպտիկամանրաթելային ցանցը: Նաև Երևանում հիմնվում է առաջին FTTH ցանցը՝ մարդկանց էլ ավելի մոտեցնելով համացանցին և հնարավորություն տալով բջջային ցանցից զատ՝ օպտիկամանրաթելային ցանցի միջոցով, զգալիորեն ավելի մեծ արագությամբ միանալ ինտերնետին:

2009

3G-ն ավելի մեծ տարածում է գտնում երկրում, այդ թվում նաև շարժական ինտերնետը: Ոլորտ է մուտք գործում կապի երրորդ օպերատորը, արդյունքում առաջարկը դառնում է ավելի բազմաժանր, հնարավոր է դառնում ավելի լայն և մեծ ծավալի ծառայություններ մատուցել: Հետագա տարիներին հիմնական զարգացումները վերաբերում են արագությունների մեծացմանը, նորամուծություններին առաջարկվող փաթեթների առումով և ֆիքսված ցանցի ծածկույթի մեծացմանը:

2010

Հայաստանում ներդրվում է այսպես կոչված CDN (Content Delivery Networks) համակարգը, որը թույլ է տալիս օրինակ՝ Facebook-ի կամ Youtube-ի բովանդակությունը դիտել երեսունից քառասուն անգամ ավելի արագ՝ ներբեռնելով տեղեկությունը ոչ թե Եվրոպայից, այլ Երևանից: Այսօր գրեթե բոլոր մեծ ընկերությունների CDN-ներն առկա են Հայաստանում, ինչը զգալիորեն բարձրացրել է տեղեկատվական տվյալների փոխանակման արագությունը և կապի որակը: Հայաստանում թողարկվում է չորրորդ սերնդի ցանց՝ 4G/LTE:

2020-2022

2020-ին, շուրջ կես տարվա բանակցություններից հետո, նորաստեղծ Team Telecom Armenia-ն գնում է «Վեոն Արմենիայի» (Beeline) 100 տոկոս բաժնետոմսերը: 2021-ին ընկերությունը ձեռնարկում է NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը, որը թույլ է տալիս յուրաքանչյուր բաժանորդի միանալ 25 Գբ/վ թողունակությամբ ցանցին: Արդեն 2022 թվականից ընկերությունը հանդես է գալիս իր նոր բրենդով:

ՄՈՏ ԱՊԱԳԱՆ

Այսօր, գործելով ապակենտրոնացման սկզբունքով, Team Telecom Armenia-ն տարածվում է դեպի մարզեր՝ իր նորաստեղծ ցանցին միացնելով Հայաստանի ամբողջ տարածքում գործող բջջային կայանները: Արդիականացված ցանցի շնորհիվ մոտ ապագայում Team-ի բաժանորդները կունենան ավելի արագ ու որակյալ կապ, իսկ համայնքները կստանան զարգացման նոր հնարավորություններ: Ցանցին արդեն իսկ միացված են Քաջարան, Ջերմուկ, Մեծամոր, Հրազդան քաղաքներն ու Գնդեվազ գյուղը, իսկ Երևանում՝ Դավթաշեն և Արաբկիր համայնքները: Շուտով աշխատանքները կավարտվեն Կապան, Արմավիր, Իջևան, Վարդենիս, Ալավերդի, Գավառ, Սիսիան և Մեղրի քաղաքներում:

Մարգարիտ Միրզոյան

EIF-20. կարևորի մասին

13 դեպք, որոնք պայծառորեն ներկայացնում են, թե ինչպես իր գոյության առաջին քսան տարվա ընթացքում «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը փոխեց հայկական ՍՈՍ ոլորտը. ԵՐԵՎԱՆ-ին պատմում է ՁԻՀ տնօրեն Բագրատ Ենգիբարյանը:

1. ՁԻՀ-ի ստեղծումը. ինկուբացիայի նոր իմաստը

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը (ՁԻՀ) տարածաշրջանի խոշորագույն տեխնոլոգիական բիզնես ինկուբատորներից և խորհրդատվական ընկերություններից մեկն է, որը գործում է Հայաստանում: Կազմակերպությունը հիմնադրվել է 2002-ին՝ Համաշխարհային Բանկի «Ձեռնարկությունների ինկուբատոր» ծրագրի շրջանակում և ազակցում է Հայաստանում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի աճին՝ ստեղծելով նպաստավոր միջավայր նորարարության զարգացման, տեխնոլոգիաների կատարելագործման և ընկերությունների ընդլայնման համար:

Բագրատ Ենգիբարյան. «Մենք Հայաստանում տեխնոլոգիական ոլորտի զարգացման ծրագրեր իրականացնող ամենաերկար պատմությունն ունեցող կազմակերպությունն ենք: Դեռ այն ժամանակ՝ 2002 թվականին, բոլորն ասում էին՝ «ձեր ծրագիրը հենց ավարտվի՝ կփակվեք», բայց ոչ միայն չփակվեցինք, այլև հասանք այնտեղ, որտեղ հիմա ենք: Ավելին, ինչ-որ պահից EIF անվանումը բրենդ դարձավ, արդեն արտերկրում էլ ենք հայտնի՝ այլ երկրների ռազմավարական խորհրդատվություն ենք տրամադրում տարիների ընթացքում կուտակած մեր փորձի հիման վրա:
Հետաքրքիր է, որ մեր հիմնադրամի ստեղծումը պատմության մեջ առաջին դեպքն էր, երբ Հայաստանում ստեղծվում էր ինկուբատոր՝ կազմակերպություններին աջակցելու, այլ ոչ թե հավեր բուծելու նպատակով: 2001 թվականին, երբ ծրագիրն ուղարկեցինք Ազգային ժողով, այն սկզբում խառնել էին հավերի ինկուբատորի հետ, քանի որ նման մշակույթ Հայաստանում այդ ժամանակ չկար: Այսօր «ինկուբացիան», «աքսելերացիան» միանգամայն հասկանալի ու չշփոթեցնող տերմիններ են, և կարող ենք արձանագրել, որ տարիների ընթացքում էկոհամակարգը զգալիորեն զարգացել է»:

2. Ծրագրավորման առաջին մրցույթը. 400 հոգու վառվող աչքերը

2002 թվականին «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը կազմակերպեց Հայաստանում ծրագրավորման առաջին մրցույթը երիտասարդների համար:

Բագրատ Ենգիբարյան. «Պատկերացրեք՝ ընդհանուր տարածք, 400 երիտասարդ, կողի հազարավոր տողեր ու կիրք: Առաջին անգամ էի միաժամանակ տեսնում իրենց գործով այդքան տարված մարդկանց, նրանց աչքերը երբեք չեմ մոռանա: Հետո՝ տարիներ անց, նման մրցույթները սովորական երևույթ դարձան, բայց առաջինն անմոռանալի էր: Այս տարիների ընթացքում 20-25 հազարից ավելի մասնագետներ ենք պատրաստել, որոնցից 70%-ն անցել է աշխատանքի»:

3. Սրանք մարզեր. Գյումրու ու Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնները

Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնները ստեղծվել են ՁԻՀ-ի, ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի կողմից՝ նպաստելու մարզերում տեխնիկական և գործարար հմտությունների զարգացմանը:

Բագրատ Ենգիբարյան. «Երբ որոշեցինք տեխնոլոգիան տանել մարզեր, սկսեցինք աշխատել Գյումրու ու Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների ստեղծման ուղղությամբ, և շատերը նորից հոռետես էին: Մարդիկ չէին հավատում, որ «մարզեր» ու «տեխնոլոգիաներ» եզրույթներն ընդհանրապես համատեղելի են: Այդ ժամանակ EIF-ն արդեն 10 տարի աշխատում էր, շատ բան էինք հասցրել փոխել մարդկանց պատկերացումներում, բայց, միևնույն է, դեռ շատերը չէին հավատում, որ Երևանից դուրս կարելի է որևէ բան անել:
Ինչևէ, Գյումրին ու Վանաձորը շուտով ունեցան իրենց տեխնոլոգիական կենտրոնները, որոնցով հարյուրավոր մասնագետներ ու ընկերություններ են անցել: Շատ հաջողված փորձ էր, ու հիմա շատ երկրներ ցանկանում են այդ մոդելն իրենց մոտ էլ ինտեգրել: Այդպես մրցութային կարգով ՁԻՀ-ն ընտրվեց ու սկսեց խորհրդատվություն տրամադրել օրինակ՝ Մոլդովայի Ինֆորմացիոն և Տեղեկատվական տեխնոլոգիաների ասոցիացիային (ATIC)՝ երկրում ՏՏ կրթության զարգացման և ռազմավարության մշակման վերաբերյալ: Արդյունքում ձևավորվեց առաջին ինովացիոն կենտրոնը և մշակվեց մարզերում նորարարության խթանման մոդելը:
2017 թվականի ամռանն էլ Մոնտենեգրոյում մասնակցեցինք BIO-ICT նորարարական կենտրոնի ձևավորման աշխատանքներին»:

← Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը

4. Մասնավոր-հանրային համագործակցություն. միզասգային ինովացիոն կենտրոնների գաղափարը

Միզասգային կապմակերպությունների հետ աշխատելու նոր մոդել մշակվեց, որը Հայաստանում այսօր էլ շարունակում է ֆիչ կիրառվել. հանրային-մասնավոր համագործակցություն (Public Private Partnership), երբ մասնավոր կապմակերպությունը և EIF-ը համատեղ նոր նախաձեռնություն են իրականացնում, որը նպաստում է ընդհանուր էկոհամակարգի զարգացմանը:

Բագրատ Ենգիբարյան. «Այդպես ստեղծվեցին Microsoft-ի ու IBM-ի ինովացիոն կենտրոնները, Ազգային ինժեներական լաբորատորիաները՝ National Instruments-ի հետ համատեղ, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնը, PMI Science-ի հետ համատեղ Գիտական ինկուբացիոն ծրագիրը և այլն: Ժամանակին նման նախաձեռնություններն էքսպերիմենտալ էին համարվում, բայց այսօր ավելի տարածված են, շատ նախագծեր են այդ մոդելով աշխատում»:

ԲԱԶՄԱԹԻՎ ՀՐԱՇԱԼԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՈՒ ԼԱՎ ԹԻՄԵՐԻ՝ ԼԻԱՐԺԵՔ ԲԻԶՆԵՍԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՃԱԽ ՕԴ ՈՒ ՋՐԻ ՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՅԴ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

5. Հայրենական վենչուր. «Գրանատուս»

Վենչուրային կապիտալը ներդնողի կապիտալն է՝ նախատեսված շուկայում տեղի համար պայքարող սկսնակ ընկերությունների կամ ստարտափների ֆինանսավորման համար: Համաշխարհային ՍՈՍ շուկայում վենչուրային ընկերություններից է մեծապես կախված ապագա տեխնոլոգիական հսկաների հաջողությունը:

Բագրատ Ենգիբարյան. «2013 թվականին «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության տնօրեն Մանուկ Հերգնյանի և իր գործընկերների հետ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ու մասնավոր ներդրողների աջակցությամբ առաջին անգամ վենչուրային հիմնադրամ ստեղծեցինք՝ «Գրանատուս Վենչուրսը»: Շատերը նորից թերահավատ էին, մարդիկ ասում էին՝ «ի՞նչ վենչուրային հիմնադրամ Հայաստանում»: Երկար համոզում էինք կառավարությանն ու Համաշխարհային բանկին, քանի որ նման բան ոչ ոք դեռ չէր արել: Տարիներ անցան ու կարող ենք արձանագրել, որ հիմնադրամը ոչ միայն աշխատեց, այլև պետության բաժնեմասը հետ գնեց, ինչը շատ կարևոր նախադեպ էր»:

6. Ինչպե՞ս զարգացնել ոլորտը դրամաշնորհների միջոցով. STEP և IMG համաֆինանսավորման ծրագրեր

Ամերիկյան դրամաշնորհային STEP ծրագիրը Հայաստանում գործարկվել է 2006 թվականին՝ ՀՀ կառավարության, ՁԻՀ-ի և Քաղաքացիական հետապտոտությունների ու մշակումների հիմնադրամի (CRDF Global) համատեղ ջանքերով: Ծրագրի նպատակն է օգնել խարտարագետներին, հետապտոտողներին և գիտնականներին ներկայացնել իրենց նորարարական ապրանքները շուկայում, ստեղծել նոր վենչուրային ֆեռնարկություններ և արդյունավետ համագործակցություն ծավալել գործող ընկերությունների հետ:

Բագրատ Ենգիբարյան. «Նախկինում դրամաշնորհները բավական բացասական համբավ ունեին. կա տարածված կարծիք, թե դրանցով վնաս է հասցվում բիզնեսին ու ընդհանրապես դա գումարի վատնում է: Բայց բազմաթիվ հրաշալի գաղափարների ու լավ թիմերի՝ լիարժեք բիզնեսի մեջ մտնելու համար հաճախ օդ ու ջրի պես պետք է այդ առաջին օգնությունը: Սկզբում սկսեցինք համագործակցել ամերիկյան STEP կազմակերպության հետ, որը տրամադրում էր փոքր՝ 5000-10,000 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհներ: Ավելի ուշ Համաշխարհային բանկի և այլ գործընկերների հետ միասին բազմաթիվ դրամաշնորհներ ենք տրամադրել: Ցանկանում եմ հատկապես նշել Նորարարության զարգացման և Մարզային համաֆինանսավորվող դրամաշնորհների ծրագիրը, որով մինչև 50 հազար ԱՄՆ դոլարի չափով ներդրում է տրամադրվում նորաստեղծ ընկերություններին: Մինչ օրս տրամադրել ենք ավելի քան 100 դրամաշնորհ՝ Երևանում և մարզերում: Դրամաշնորհ ստացած ընկերությունների 70%-ն այսօր ՏՏ և ինժեներական ոլորտներում առաջատար ընկերություններ են»:

7. Նոր օրենք սպարապետների համար

2015 թվականից Հայաստանի օրենսդրությունը նախատեսում է հարկային արտոնությունների հապրուկ ռեժիմ՝ ՍՈՍՈ (և որոշ ինժեներական) ուղղվածության սպարապետների համար: Համաձայն «ՍՈՍՈ ոլորտի պետական ազակցության մասին» ՀՀ օրենքի հայկական «ՍՈՍՈ սպարապետները գրանցվելուց հետո 3 ամիսների ընթացքում կարող են դիմել հավաստագրման հանձնաժողով՝ հավաստագիր ստանալու և առաջիկա 5 տարիներին հարկային արտոնություններից օգտվելու համար:

Բագրատ Ենգիբարյան. «Ստարտափներին տրամադրվող հարկային արտոնությունները մեծապես նպաստեցին ոլորտի կայացմանը և նոր ընկերությունների ստեղծմանը: Խոսքը վերջին տարիներին ստեղծված հարյուրավոր ստարտափների մասին է: Կարող ենք արձանագրել, որ «ՏՏ ոլորտի պետական աջակցության մասին» օրենքը Հայաստանում հանգեցրեց ստարտափ բումի՝ սկիզբ դնելով հաջողության մի շարք պատմությունների»:

8. Մեր հայեցի սիլիկոնյան հովիտը. Ինժեներական քաղաք

Ինժեներական քաղաքը տեղակայված է Նոր Նորքի Բագրևանդի փողոցի տարածքում գտնվող 3 հեկտար հողատարածքի վրա: Այն պետություն-մասնավոր գործընկերության հենքով ծրագիր է, որն իրականացվում է ՁԻՀ-ի, ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և մասնավոր հատվածի համագործակցությամբ և ազակցությամբ: Նախաձեռնության նպատակն է Հայաստանում Ինժեներական քաղաքի հիմնման միջոցով նպաստել Ինժեներական և Բարձր տեխնոլոգիաների (ԻԲՏ) ոլորտի հետագա առաջընթաց ապահովմանը՝ խթանելով Հայաստանում տնտեսության մրցունակության և արտադրողականության բարձրացումը:

Բագրատ Ենգիբարյան. «Մի օր աշխատաժողովներից մեկի ընթացքում հետաքրքիր գաղափար առաջացավ. եթե ծրագրավորման ոլորտում co-working-ը գործում է ու շատ նորմալ է, երբ մի տարածքում ամեն մեկն իր սեղանի առաջ հանգիստ աշխատում է, իսկ ինչ պետք է անեն ինժեներները, որոնցից ամեն մեկը մեծ գործիքներով է աշխատում: Գուցե պետք է մի փոքր ավելի մեծ ձևաչափի co-working ստեղծել: Այդպես առաջացավ հետևյալ գաղափարը. Ինժեներական քաղաքը, որպես այդպիսին, արդեն իսկ շատ մեծ co-working է, որտեղ սեղանների փոխարեն առանձին շենքեր են՝ հատուկ տարածքներով, համապատասխան սարքավորումներով, որոնք ընդհանուր են քաղաքում գործող ընկերությունների համար: Արդեն 2023 թվականին Ինժեներական քաղաքը Ջրվեժում կհամախմբի Բարձր տեխնոլոգիական 50-ից ավելի ընկերությունների՝ միավորելով լավագույն ինժեներական ընկերություններին ու մասնագետներին: Ներկայում էլ աշխատում ենք նույն ձևաչափով Գործարանային քաղաք ստեղծելու ուղղությամբ»:

↑ *Ինժեներական քաղաքի նախագիծը*

9. ՍՈՍ-ից գիտություն. Գիտական ինկուբատորի մեկնարկը

ՁԻՀ-ի կողմից իրականացվող Գիտական ինկուբացիոն ծրագիրը մեկնարկել է 2021 թվականին: Դրա նպատակն է ազակցել գիտնականներին, մասնագետներին, ընկերություններին և հետազոտական ինստիտուտներին՝ նոր վարկածներ առաջ քաշելու և իրենց նորարարական գաղափարները առևտրայնացնելու ուղղությամբ, ինչպես նաև ուղղորդել բեկումնային գիտական արդյունքների վրա հիմնված ֆեռնարկատիրական սուբյեկտների ստեղծման գործընթացը:

Բագրատ Ենգիբարյան. «Այս նախաձեռնության շրջանակում ամենահաջողված ծրագրերն իրականացվել են PMI Science-ի և IBM-ի աջակցությամբ: Արդեն երկու տարի է՝ մշակում ենք գիտական ինկուբատորի մոդելը և բավական լավ արդյունքներ ու հաջողություններ ունենք»:

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԸ, ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ, ԱՐԴԵՆ ԻՍԿ ՇԱՏ ՄԵԾ CO-WORKING Է, ՈՐՏԵՂ ՍԵՂԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ ԱՌԱՆՁԻՆ ՇԵՆՔԵՐ ԵՆ՝ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՎ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ

10. Լինել պաշտպանված. Կիբեռանվտանգության ինկուբացոր

Վերջերս հիմնված կիբեռանվտանգության ինկուբացորը ստեղծվել է Հայաստանի տնտեսության ընդհանուր մրցունակությունը բարձրացնելու նպատակով՝ կիբեռանվտանգության ոլորտում մասնագիտացված նորարարական լուծումներ ստեղծելու, ինչպես նաև որակյալ մասնագետներ պատրաստելու համար կարողությունների զարգացման միջոցով: Ինկուբացորը ոլորտում ֆնաափորում է կապմակերպություններ, մատուցում ծառայություններ, աջակցում մասնագետներ:

Բագրատ Ենգիբարյան. «CyHub Armenia ծրագիրը գործարկվել է 2020 թվականին: Վերջին տարիներին, տարբեր գործոններով պայմանավորված, կտրուկ ավելացել են կիբեռանվտանգության ռիսկերը և CyHub Armenia-ի ստեղծումը հատուկ կարևորություն ուներ տեխնոլոգիական համայնքի համար: Ստեղծման երկու տարիների ընթացքում 800 մարդ մասնակցել է մասնագիտական թրեյնինգների, 1500-ը՝ վեբինարների, վորքշոփերի և այլ միջոցառումների:
Ծրագրի շրջանակում 12 թիմ անցել է ինկուբացիոն փուլը, 2-ը գրանցվել է որպես ընկերություն: CyHub Armenia-ն նաև 2 անվճար առցանց դասընթացներ է մշակել՝ հասանելի բոլոր հետաքրքրվողների համար»:

↓ Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը

11. Համագործակցություն կրթական ոլորտի հետ

2018 թվականից PMI Science-ի և Հայաստանի առաջատար բուհերի հետ համագործակցությամբ իրականացվում են մի շարք կրթական ծրագրեր, որոնք նպատակ ունեն ազատել երիտասարդ գիտնականներին գիտության ոլորտում առաջընթաց գրանցելու գործընթացում:

Բագրատ Ենգիբարյան. «Կրթական ոլորտի հետ կապը ֆունդամենտալ նշանակություն ունի զարգացման համար: Ընդամենը մի քանի տարվա ընթացքում ասպիրանտների աջակցության ծրագրի շրջանակում 2018 թվականից մինչ օրս 12 հետազոտական ընկերություններից և համալսարաններից 40 երիտասարդ գիտնականներ ստացել են աջակցություն: Մեկ այլ՝ ֆակուլտետային հետազոտական աշխատանքների ֆինանսավորման ծրագրի շրջանակում 2018 թվականից աջակցություն են ստացել 61 հետազոտական թիմեր՝ 19 հետազոտական ընկերություններից և համալսարաններից: «Տվյալների գիտությունը բիզնեսում» ծրագրի շրջանակում էլ 82 մագիստրոս ուսումը շարունակելու և ակադեմիական առաջընթաց գրանցելու հնարավորություն է ստացել»:

12. Գերհամակարգչային ապագա կենտրոնը

Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնը, որն անհապաղեպ է տարածաշրջանում, կգործի Ինժեներական քաղաքում՝ հնարավորություն տալով իրականացնել տվյալների վրա հիմնված հետազոտություններ և ինժեներական գործունեություն՝ մասնավոր և հանրային շահառուների համար: Կենտրոնը կմասնագիտանա տվյալագիտության և արհեստական բանականության ոլորտներում, ինչպես նաև ֆինանսական, բնապահպանական, գյուղատնտեսական, մեդիաշինական և այլ բնագավառներում դրանց կիրառության ուղղությամբ:

Բագրատ Ենգիբարյան. «Նախագծի հետ մեծ հույսեր ունենք, թեև դեռ նախնական փուլում ենք: Այս տարի մեկնարկել է կենտրոնի նախագծումը Ինժեներական քաղաքում, ինչպես նաև մի շարք կրթական և հետազոտական նախագծեր: Կենտրոնն ամբողջությամբ կսկսի գործել 2023 թվականից»:

13. Հայաստանի Տեղեկատվական և Բարձր տեխնոլոգիաների ներկայացուցչական գրասենյակներ ԱՄՆ-ում և Եվրոպայում

Սիլիկոնյան հովտում՝ Plug&Play տեխնոլոգիական կենտրոնում 2012 թվականի դեկտեմբերի 10-ին կայացավ Հայաստանի Տեղեկատվական և Բարձր տեխնոլոգիաների ներկայացուցչական գրասենյակի պաշտոնական բացումը, ինչն ինքնին անհապաղեպ իրադարձություն էր Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի համար և բացում էր նոր շուկա դուրս գալու լավ հնարավորություն:

Բագրատ Ենգիբարյան. «Վերջին 20 տարիների ընթացում ՁԻՀ-ի նախաձեռնությամբ Հայաստանի Տեղեկատվական և Բարձր տեխնոլոգիաների նմանատիպ ներկայացուցչական գրասենյակներ են ստեղծվել նաև Կանադայում և Ավստրիայում՝ այդ երկրներում հայկական SS ոլորտի տեսանելիության, կարողությունների ներկայացման և առաջխաղացման, ինչպես նաև բիզնես կապերի ստեղծման նպատակով»:

Մարգարիտ Միրզոյան
«Ձեռնարկությունների Ինկուբացոր» հիմնադրամ



Օգյուտերի ՍՍՏեղակարգիչ

Հայկական ՍՍՏ-ի վարգայմման կարևոր յուցանիշներից է մեր առօրյա կյանքում ավելի ու ավելի շատ հանդիպող տեղական թվային գործիքների կիրառումը: ԵՐԵՎԱՆի խնդրանքով մեդիա-փորձագետ Սամվել Մարտիրոսյանը պատմել է իր փորձառության մասին:

Դարասկզբին տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանում հայտարարվեց գերակա ճյուղ: Այդ ժամանակ, երևի թե, ո՛չ հայտարարողը, ո՛չ լսողները լավ չէին հասկանում, թե իրականում դա ինչ է, ինչպես այն պետք է դառնա տնտեսության կարևոր հատված:
Տարիներ շարունակ Հայաստանում տեխնոլոգիական ոլորտն իրենից ներկայացնում էր կամ աութսորսինգային թիմեր, որոնք պարզապես պատվերներ էին գտնում դրսից, կամ դրսի կազմակերպությունների ներկայացուցչություններ: Այսինքն՝ երկրում հիմնականում մնում էր աշխատավարձը: Ամեն դեպքում, Հայաստանի տնտեսության վրա սա ազդեցություն ուներ, քանի որ մեկ է՝ աշխատավարձերը վատը չէին:
Բայց ամեն դեպքում, ՏՏ-ն ներքին երևույթ չէր դառնում: Համայնքն ինքնաբավ էր և փոքրիկ: Սեփական արտադրություն փաստացի չկար: Ոլորտն առաջ էր գնում ցածր աշխատավարձերի և Սիլիկոնի՝ Հայաստանին օժանդակելու ցանկության վրա: Իհարկե, ոլորտի աշխատակիցների պրոֆեսիոնալիզմը նույնպես մեծ դեր էր խաղում: Երբ ուզում էին ավելի մեծ թվեր ցույց տալ, ՏՏ-ի տեղը ներկայացնում էին ՏՀՏ ոլորտի տվյալները: Այսինքն՝ ավելացնում էին հեռահաղորդակցության ոլորտը, այլ կերպ ասած՝ բջջային և ինտերնետ կապը: Եվ միանգամից թվերը, ներդրումները կտրուկ աճում էին: Բայց բուն տեխնոլոգիական ոլորտը մնում էր շատ նեղ:
Իսկ հետո եկան տասականները, հետո տասականների կեսը: Եվ քանակը սկսեց տալ որակ: Աութսորսինգով զբաղվող կազմակերպությունները սկսեցին ներդնել իրենց գումարների մի մասը և աշխատել սեփական արտադրության վրա: Ստարտափ ունենալը դարձավ խիստ մոդայիկ մի երևույթ: Տասնյակներով և հարյուրներով ստեղծվում էին ստարտափներ: Հիմնականում դրանք վերանում էին մի քանի ամիս հետո: Կրկին վերամիավորվում նոր գաղափարի շուրջ, հետո էլի անհետանում: Եվ այսպես անդադար, բուռն եռանդով:

***

Եվ ինչ-որ մի դժվար ընկալելի պահի հայաստանյան ՏՏ ընկերությունները սկսեցին արտադրել սեփական ծրագրերը և հանել դրանց միջազգային շուկա: Իհարկե, սկզբից կարճ ժամանակ շատերը ձգտում էին ստեղծել արտադրանք զուտ Հայաստանի համար: Հետո եկավ պատկերացումն





այն մասին, որ տեղական շուկան շատ ծրագրերի համար նեղ է, ես կասեի, շատ փոքր։ Եվ հարկավոր է աշխատել աշխարհի համար, իսկ Հայաստանը, աշխարհի մի մաս լինելով, մեկ է՝ ստանում է այդ արտադրանքն իր համար։ Իհարկե, կային զանազան բացառություններ, բայց մոտավոր պատկերն այսպիսին էր։ Մարդ կարող էր հանգիստ օգտագործել ծրագիր կամ հեռախոսային հավելված՝ նույնիսկ չմտածելով, որ այն արտադրվում է Հայաստանում։

Հիմա դա այդքան էլ այդպես չէ։ Հանրությունը քիչ թե շատ գիտի հայաստանյան ծրագրերի մասին։ Բայց մեկ է, դա այդքան էլ համատարած չէ։ Շատ դեպքերում մարդիկ տեղյակ էլ չեն, թե ինչ կա հայաստանյան SS ոլորտից և կարելի է օգտագործել մեր կյանքում և աշխատանքի ժամանակ։

***

Հիմա բերեմ մի քանի օրինակ, թե որ ծրագրերն եմ ես օգտագործում, կամ էլ օգտագործել եմ ինչ-որ պահի։ Եվ որոնք այս կամ այն կերպ կապված են Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի հետ։

Այնպես չէ, որ հաճախ, բայց օգտվում եմ Հայաստանում աշխատող gg, Menu.am ծառայություններից։ Սրանք գրեթե բոլորին հայտնի են, այնպես որ դժվար թե ընթերցողին անակնկալի բերեցի։

Հաճախ օգտագործվողներից PicsArt-ն է։ Այստեղ կարելի է հիշել, որ օրերից մի օր ինձ զանգեցին մի տասը լրագրող, որ PicsArt-ից մեկնումեկի համարն իմանան։ Քանի որ այդ օրը բրիտանական մամուլում հրապարակում էր դուրս եկել, և մեր լրագրողները բացահայտել էին, որ PicsArt-ը Հայաստանում է արտադրվում։ Նկարների մշակման համար ժամանակին ակտիվ օգտագործում էի Pixomatic-ը, որը կրկին Հայաստանում էր ծնվել (հիմա տերերը փոխվել են)։

Տեսանյութերի մշակման համար օգտակար է Zoomerang-ը։ Ստեղծելու համար՝ Renderforest-ը։ Առաջինը՝ ավելի շատ հավես հեռախոսով տեսանյութեր սարքելու, երկրորդը՝ ավելի կազմակերպությունների համար օգտակար գործիք է։

Շատ իրարից տարբեր գործընթացները միավորելու, իրար կապակցելու համար Chrome-ի վրա աշխատող Bardeen. IFTTT եթե օգտագործել եք, ապա դրա նման է, բայց ավելի գործնական աշխատանքի համար։ Սա ինքս դեռ փորձարկում եմ, բայց շատ հետաքրքիր բան է։ Եվ զարգանալու տեղ ունի։

Մեծ հեռանկարներ ունեցողներից, որը ես կրկին դեռ փորձարկում եմ, Podcastle-ն է՝ աուդիոյի, փոդքաստային խաղերի համար։ Դե, քանի քննարկում ենք ձայնը, ապա բնականաբար, շատ օգտակար և շատ օգտագործվող՝ Krisp։ Եթե միացրել եք, ձեր երեխան կարող է նույն սենյակում տունտունիկից մինչև կռիվ-կռիվ խաղալ՝ չխանգարելով ձեր օնլայն ռոթշիլդյան բանակցություններին։ Հատկապես մեծ տարածում ունեցավ համավարակի ամիսներին, երբ աշխատանքային և ոչ աշխատանքային խոսակցությունների մեծ մասը սկսեց տնից արվել։

Եթե որոշում եք օնլայնի հաջորդ փուլը մտնել, այսինքն՝ ավելացված իրականություն, ինքն է AR, Arloopa-ն է աշխատում։ Ավելի խորացված, մետավերսային իրականությունն այսօր, որը ես աշխատանքի համար օգտագործում եմ, PandaMR-ն է, որը թույլ է տալիս լրիվ վիրտուալ հանդիպումներ, նույնիսկ ցուցահանդեսներ իրականացնել։

Կայք պատրաստելու համար էլ ամենահեշտ տարբերակներից էլ Ucraft-ն է, թույլ է տալիս նույնիսկ վեբից բան չհասկացողին արագ-արագ կայք ստեղծել։

Ինչպես տեսնում եք, հայկական արտադրանքն իսկապես շատ է։ Ու մենակ իմ կյանքում։ Ես առանձին կնշեի Rumors Monitoring, Dowork և տասնյակ այլ հարթակներ ու հավելվածներ, որոնցից խորացված դեռ չեմ հասցրել պարզապես օգտվել։ Եթե խաղ խաղայի, ապա կասեի, որ Triada ստուդիայի և Rockbite խաղերը կխաղայի։

Վերջում էլ ավելացնեմ մի հավելված, որը Հայաստանի գրեթե բոլոր ձայնային և տեսաձայնային մեմերի հավաքածու է։ Եվ գոնե պատմական հիշողության համար շատ կարևոր է։ Խոսքը Bolola-ի մասին է։

Ցավոք, հաստատ էլի բան եմ մոռացել։ Թող ներեն այդ կազմակերպությունները։ Մյուս կողմից՝ ուրախ եմ, որ արդեն այնքան շատ ենք, որ նույնիսկ ստացվում է մոռանալ։

Սամվել Մարտիրոսյան

Նրանք ստեղծում են **ստարտափներ**

Groksmith-ի հիմնադիր Հովհաննես Սուլոդյանը ԵՐԵՎԱՆԻՆ պատմել է, թե ինչպես Infected Cinema ռոֆ խմբի երկու կիթառահարներով հիմնեցին ստարտափներին և թվային բիզնեսներին ազակցող ընկերությունը:

Երկու կիթառահարները

Վստահաբար նկատած կլինեք քաղաքի բոլոր հնարավոր գովազդային վահանակների վրա Groksmith ընկերության կիբերպանկ ոճի կերպարներով գովազդը և վրայի հակիրճ գրությունը. «Մենք ստեղծում ենք ստարտափներ»:

Ընկերության հիմնադիրներ Հովհաննեսն ու Տիգրանը երկար տարիներ նվագել են Infected Cinema մետալ խմբում: Հետո միասին աշխատել են մի ընկերությունում, իսկ երբ պահը հասունացավ՝ 2015-ին, այդ նույն կազմով էլ որոշեցին սեփական բիզնեսը հիմնել: Այն պարտադիր պիտի ծառայեր մարդկանց, այլ ոչ թե պարզապես գումար աշխատելու միջոց լիներ: Շատ կարճ ժամանակ անց նրանց միացան նաև բենդի մյուս անդամները: Այսօր ընկերության աշխատակիցների թիվը անցել է 40-ը, իսկ նրանց ռոք խմբի գրեթե ամբողջ կազմն աշխատում է ընկերությունում: Առհասարակ Groksmith-ում երաժշտությամբ զբաղվող մարդիկ այնքան շատ են, որ գրասենյակում երաժշտական ստուդիա ունեն:

Մտքից մինչև աշխատող բիզնես

Groksmith-ն օգնում է ստարտափներին իրենց կյանքի առաջին փուլերն անցնել առավել արդյունավետ: «Ստարտափները շատ քիչ ժամանակ և ռեսուրս ունեն իրենց նպատակներին հասնելու համար,– ասում է Հովհաննեսը,– շատ փորձեր անել չեն կարող, թեև որպես այդպիսին փորձարարական բնույթի բիզնես մոդել են. ստեղծում են լուծումներ, որոնք նախկինում հայտնի չեն եղել»:

Ստարտափների հետ մտքից մինչև աշխատող ընկերություն ճանապարհը Groksmith-ն անցնում է երեք փուլով: Առաջինը պրոդուկտի հայտնագործման և մենեջմենթի փուլն է, երկրորդը ծրագրային ապահովման զարգացումն է, այսինքն՝ պրոդուկտի իրագործման ժամանակահատվածը: Երրորդ փուլը վերաբերում է մարքեթինգին և շուկա ներթափանցելուն:

Groksmith-ը նաև հիմնում է ստարտափներ համագործակցության հիմունքներով, որտեղ ներկայանում է որպես համահիմնադիր: Այդ դեպքում նաև առաջարկվում է չորրորդ բաղադրիչը՝ ընկերության օպերացիոն կառավարման համակարգի ստեղծումը: Այն ենթադրում է թիմ հավաքելը, ընկերության ներսում բիզնես գործընթացների կազմակերպումը և այլն: Այսինքն ընկերություն կառուցելու գործառույթը որպես ներդրում հենց Groksmith-ն է անում: Այս պահին ընկերության բոլոր հաճախորդներն արտերկրից են՝ Ամերիկայից ու Կանադայից մինչև Անգլիա ու Ավստրալիա:

← Ռոբերտ Հայնլայնի «Stranger in a Strange Land» գիրքը, որտեղից ծագել է ընկերության անվանումը

Սեփական պրոդուկտներ

Groksmith-ը նաև ներքին պրոդուկտներ է ստեղծում: Հիմա աշխատում է դրանցից երկուսի վրա: Առաջինը՝ Breakeven-ը հենց իրենց պես SS ոլորտում ծառայություններ մատուցող ընկերությունների համար ֆինանսական կառավարման գործիք է: Հովհաննեսի խոսքով՝ փոքր և միջին բիզնեսների համար նման պրոդուկտ գրեթե չկա շուկայում, ինչ էլ կա՝ բավականին թանկ է: Խոսքը գնում է տարեկան տասնյակ հազարավոր դոլարների մասին: «Մենք նման խնդրի բախվեցինք մեր իսկ բիզնեսում և ստեղծեցինք լուծում հենց մեր ընկերության համար, իսկ հետո որոշեցինք ստանալ առանձին պրոդուկտ»: Մյուս նախագիծը՝ Kickoff-ը, ֆուտբոլային հանդիպումների ընթացքում ֆուտբոլասերների և մեկնաբանների համար նախատեսված բաց թվային հարթակ է, կարելի է ասել Clubhouse՝ հատուկ ֆուտբոլի համար: Հավելվածի առաջնային թիրախային լսարանն Անգլիան է, որտեղ արդեն իսկ սկսել են աշխատել ոլորտի առաջատար ներկայացուցիչների հետ:



↑ Groksmith ընկերության հիմնադիր Հովհաննես Սուրոյանը

↓ Groksmith թիմի մի մասը

GROKSMITH-Ն ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԵՐԵՔ ԿԱՐԵՎՈՐ ԳԱՂԱՓԱՐ ՈՒՆԻ. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԻՆՔԴ ՔՈ, ՔԵԶ ՇՐՋԱՊԱՏՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻԴ ՀԱՆԴԵՊ

Մեծ ՍՍՍ ընկերությունը և Groktalk-երը

Groksmith-ը մեծապես կարևորում է գլոբալ SS համայնքի զարգացումը: Հենց այդ նպատակով էլ պարբերաբար հանդիպումներ է նախաձեռնում: Այսպես կոչված Groktalk-երը երկու մաս ունեն: Առաջինում ոլորտի տարբեր մասնագետներ գալիս խոսում են տեխնոլոգիաներին վերաբերող որևէ թեմայով, կիսվում իրենց փորձով ու գիտելիքով, իսկ հաջորդ մասն ազատ շփման համար է: «SS համայնքում նեթվորքինգի գաղափարը լավ զարգացած է, բայց որպես կանոն՝ թոփ-մենեջմենթի մակարդակով, մինչդեռ ավելի լայն համայնքը միմյանց հետ այդքան ակտիվ չի շփվում»,- ասում է Հովհաննեսը: Այդ առումով, այս հանդիպումները պարարտ հող են ստեղծում զարգացման համար, իսկ թեմաները բավականաչափ լայն են, որպեսզի հետաքրքրեն ցանկացած մարդու: «Խոսնակները միայն Հայաստանից չեն. այս ընթացքում մենք հյուրընկալել ենք առաջատար մասնագետների, ովքեր աշխատել են Facebook-ի, Apple-ի, Microsoft-ի և այլ համաշխարհային ճանաչում ունեցող բրենդերի հետ»:

Ռեբրենդինգ

Երբ Groksmith-ը նոր էր ստեղծվում, բրենդավորման մասին շատ չէին մտածում և մինչև անցյալ տարի որևէ կոմունիկացիա և մարքեթինգային գործընթաց չէին արել: «Մեզ սկզբում դուր էր գալիս կենտրոնանալ միայն աշխատանքի վրա, չերևալ որևէ տեղ,– ասում է Հովհաննեսը,– բայց ընկերության մեծանալու հետ և համավարակով պայմանավորված բիզնեսի ու շուկայի կտրուկ տատանումներից հետո ակնհայտ դարձավ, որ պետք է հանրային դեմք ունենալ, ներկայանալ հանրությանը մեր ասելիքով»:
Առհասարակ, Հովհաննեսի խոսքով՝ արտաքին գովազդի վրա ժամանակ ծախսելը շատ կարևոր է հատկապես տեղական SS ընկերությունների համար, ինքդ քեզ դիրքավորելու, որոշակի միջավայր ստեղծելու համար. «Հաճախ ենք ասում, որ Հայաստանը տեխնոլոգիական զարգացման ճանապարհով է գնում, այդ դեպքում լավ կլիներ, որ բոլոր փողոցներում նման ընկերությունների գովազդներ լինեն, որպեսզի Երևանը նմանվի տեխնոլոգիական մայրաքաղաքի»:

Գիրակկումն ու ավանդույթները

Նախորդ անվանումը (Hex Division) թեև շատերի կողմից սիրվել էր, բայց այլևս չէր արտահայտում ընկերությունում տարիների ընթացքում ձևավորված արժեհամակարգը: Այս անգամ շատ լուրջ մոտեցան բրենդավորման հարցին, մասնավորապես անունը մեծ պատմություն ունի: Այն կազմված է «գռոկ» և «սմիթ» արմատներից: Առաջին բառը վերցված է ֆանտաստ գրող Ռոբերտ Հայնլայնի «Stranger in a Strange Land» գրքից և Մարսի բնակիչների լեզվով նշանակում է «խմել», բայց այլաբանորեն կարելի է ընկալել որպես «երևույթի խորը գիտակցում»: «Սմիթն» էլ անգլերենից թարգմանաբար նշանակում է «դարբին»:
Հիմնադիրների խոսքով՝ ընկերության անվանման մեջ այդ մասնիկը խորհրդանշում է Հայաստանում դարերով ձևավորված արհեստավորական ավանդույթները, ինչպես նաև գիտության, տեխնոլոգիայի և ինժեներության ոլորտներում մեր ունեցած ավանդույթները: Այսպիսով ընկերության անվանումը կարելի է ձևակերպել ինչպես «գիտակցված աշխատանք»:

Արժեքները

Groksmith-ն իր աշխատանքում երեք կարևոր գաղափար ունի. ուշադրություն ինքդ քո, քեզ շրջապատող մարդկանց և աշխատանքիդ հանդեպ: Այս երեք բաղադրիչների միավորման արդյունքում է, որ կարողանում ես զարգանալ: «Աշխատանքի հանդեպ նվիրվածությունը և ամեն քայլի գիտակցումը մաքսիմալ կարևոր է,– ասում է Հովհաննեսը,– այս սկզբունքներին հետևելով է այն դառնում հաճելի, իսկ արածդ գործը՝ որակյալ»:

Մարգարիտ Միրզոյան
Groksmith

10 ԽՈՐՀՈՒՐԴ ՍԿՍՆԱԿ ՍՏԱՐՏԱՓԵՐՆԵՐԻՆ

Groksmith ընկերության հիմնադիր Հովհաննես Կուլողլյանը մի քանի խորհուրդ ունի ստարտափ սկսելու մասին մտածող մարդկանց համար:

Մի՛ վերաբերվիր ստարտափին զուտ որպես զբաղմունք

Դու չես կարող ստեղծել լավ ստարտափ՝ համատեղելով կամ հիմնական աշխատանքից հետո բզբզալով. պիտի ամբողջությամբ նվիրվես: Ստարտափ սկսելը ճանապարհ է, որտեղ նախօրոք հայտնի չէ, թե ինչ է քեզ սպասում: Ասում են՝ ստարտափերները մարդիկ են, ովքեր նետվում են ժայռի գլխից և պիտի ընթացքում հասցնեն ինքնաթիռ կառուցել: Շատ կարճ ժամանակում պիտի գտնես աշխատող մոդել և ապացուցես, որ դու կարող ես կենսունակ բիզնես կառուցել: Եթե հաջողում ես, ներդրում ես ստանում և այս նույն գործընթացով անցնում ես հինգ-վեց անգամ, մինչև ստեղծում ես պահանջված և շահութաբեր պրոդուկտ:

Ընտրի՛ր այնպիսի գաղափար, որը քեզ համար կարևոր է

Եթե դիտարկում ես ստարտափ սկսելը միայն որպես գումար աշխատելու միջոց, միանշանակ բարդությունների կբախվես: Ստարտափը դառնում է քո կյանքի անբաժան մասը, և պիտի ընտրես այնպիսի գաղափար, որի կարևորությանը դու հավատում ես: Պիտի համոզված լինես, որ այն, ինչ անում ես, իմաստ ունի, ծառայում է մարդկանց, փոխում է աշխարհը: Եթե չգտնես իմաստը, չես կարողանա հաղթահարել այն բոլոր դժվարությունները, անկանխատեսելի իրավիճակները, և անորոշությունները, որոնց հանդիպելու ես ճանապարհիդ:

Շփվի՛ր տարբեր մարդկանց հետ ու հարցրու նրանց կարծիքը

Միգուցե դու կարծում ես, որ ունես հանճարեղ գաղափար, որ նման պրոդուկտ կամ բիզնես մոդել աշխարհի երեսին դեռ չի եղել և, հետևաբար,չարժի այն պատմել ուրիշներին: Իրականում տեխնոլոգիական ընկերությունները, նրանց ստեղծած պրոդուկտները և պրոդուկտների ներկայացումը գտնվում են անընդհատ փոփոխության և շարժման մեջ՝ հատկապես ընկերությունների ստեղծման սկզբնական փուլերում: Արդյունքում, երբեք առաջնային միտքը նույնը չի մնում, այլ զարգանում է, վերափոխվում ընկերության հետ միասին՝ հարմարվելով շուկային: Միայն հաճախորդների, ներդրողների և այլ մարդկանց հետ շփվելով է հնարավոր այդ փոփոխության ճանապարհին արդյունավետ անցնել: Հակառակ դեպքում ստեղծվում են պրոդուկտներ, որոնք ոչ ոքի անհրաժեշտ չեն:

Սովորի՛ր անել բաներ, որոնց կարևորություն չես տալիս կամ ուղղակի հավես չունես

Լինում են դեպքեր, երբ ստարտափներ սկսող ինժեներները մեծ սիրով պատրաստ են զրոյից նոր պրոդուկտ սարքել, բայց ցանկություն չունեն ժամանակ ծախսել վաճառքների կամ շուկայի ուսումնասիրության վրա: Բիզնեսը միշտ պիտի ծառայի մարդկանց, ինչը ենթադրում է, որ ձեր տեսլականն իր մեջ պետք է ներառի շատ ավելի ասպեկտներ, քան ուղղակի պրոդուկտի արտադրության կազմակերպումն է: Այդ պատճառով պետք է անել նույնիսկ այն, ինչի հավեսը չկա՝ դուրս գալով սեփական մտածելակերպիդ և կոմֆորտի սահմաններից:

Որոշումներդ կայացրո՛ւ տվյալների, ոչ թե կարծիքների հիման վրա

Կրկին խոսիր մարդկանց հետ, կամ օգտագործիր տարբեր մեթոդներ, տեխնոլոգիական մեխանիզմներ. ձևերը շատ են: Ամենակարևորը՝ այդ տվյալները պետք է հնարավորինս մոտ լինեն իրականությանը: Այսինքն, կարևոր անընդհատ սինխրոնիզացված լինես իրականության հետ և հստակ գիտակցես, երբ սկսում ես ընկնել երազանքների գիրկը: Սա նույնիսկ ավելի կարևոր է, քան պրոդուկտի տեխնիկական իրականացումը: Այս դեպքում դու նաև քո ժամանակն ես խնայում, քանի որ, երբ հասնես իրագործման փուլին, որը ամենաթանկ մասն է, դու հստակ կիմանաս, որ քո միտքը աշխատող է:

Սկսի՛ր այնպիսի ստարտափ, որը հետագայում հնարավոր կլինի մեծացնել

Ստարտափների ֆինանսական մոդելը ենթադրում է, որ տվյալ միտքը պիտի հնարավոր լինի մասշտաբայնացնել: Այսինքն, հաջող ստարտափ բիզնեսը նման է մի մեխանիզմի կամ մեքենայի, որի մեջ որքան ներդրում կամ բենզին լցնես, այնքան այն ավելի մեծ արդյունք կտա:Նպատակ դիր ստեղծել այնպիսի պրոդուկտ, որն ապագայում կվաճառվի մեծ շուկային: Մտածիր՝ ինչպե՞ս եմ հիսուն-հարյուր անգամ մեծանալու: Ներդրումները կատարվում են հենց այդ մոտեցմամբ, որ գումարն ապագայում հարյուրապատիկ անգամ ավելի մեծ քանակությամբ է հետ գալու:

Սովորի՛ր կենտրոնանալ

Մարդուց մեծ ջանք է պահանջվում նպատակ դնելու, այդ նպատակի վրա կենտրոնանալու և մնացած ամեն ինչին ոչ ասելու համար: Դա ժամանակակից մարդու և, իհարկե, ստարտափերի կարևորագույն կարողություններից է: Այսօր տեղեկատվության պակաս չկա, շատ է աղմուկը: Այն մարդիկ, որոնք կարողանում են ճիշտ ձևով ընտրել, ֆիլտրել այդ տեղեկատվությունը և նավավարել այդ օվկիանոսում, ի վերջո հաղթում են:

Հետաքրքրվի՛ր մարդկանցով և փորձի՛ր ճիշտ թիմ հավաքել

Ստարտափների հիմնադիրներն իրար հետ ավելի շատ ժամանակ են անցկացնում, քան սեփական ընտանիքների հետ: Պիտի ընտրես մարդկանց, որոնց հետ պատրաստ ես այդքան ժամանակ անցկացնել և դիմակայել դժվարություններին: Սա մի բան է, որը գուցե կյանքի ընթացքում սովորես, այն միանգամից չգա, բայց, եթե դու անկեղծորեն հետաքրքրվում ես մարդկանցով, ուշադիր ես նրանց նկատմամբ և մտածում ես նրանց մասին, ապա այս ունակությունն ավտոմատ կերպով զարգանում է: Անհնար է չհետաքրքրվել մարդկանցով և ստեղծել մի բան, որը կծառայի նրանց:

Դի՛ր վերջնաժամկետներ

Եթե դու չունես վերջնաժամկետներ, ուրեմն դեռ ստարտափ չես անում, դեռ պարզապես խաղում ես, փորձում ես հասկանալ արդյոք ուզում ես նման բանի մեջ մտնել, թե ոչ: Սկսելու պահից դու հաշվիչի վրա ես և ամեն րոպեն կենսական կարևորություն ունի քո ստարտափի համար թե՛ ֆինանսական տեսանկյունից, թե՛ առհասարակ:

Որպես ղեկավար՝ ունեցի՛ր լայն մտածելակերպ

Ստարտափի ղեկավարը չի կարող լինել միայն մեկ ոլորտով հետաքրքրվող մարդ: Նա պիտի աշխարհին ավելի լայն տեսնի, գոնե թեթև պատկերացում ունենա ամեն գործի մասին: Պետք չէ ամեն բան կարողանալ անել, բայց պատկերացում ունենալը պարտադիր է: Դա օգնում է իրար կապել տարբեր երևույթներ և համակարգված տեսլական ստանալ: Ղեկավար լինելը մասնագիտություն չէ, այլ մտածելակերպ:

Մարգարիտ Միրզոյան

ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԱՇԽԱՏԱՎԱՅՐ

«Ստորակետ» ճարտարապետական արվեստանոցի համահիմնադիր Մերուժան Մինասյանը պատմում է SS միջավայրներ նախագծելու և նոր տեսակի գրասենյակներ ստեղծելու կարևորության մասին:

IT Office #24726

Երկխոսություն

Ցանկացած աշխատանքային միջավայրի ստեղծումը երկխոսություն է ճարտարապետի և պատվիրատուի միջև: Մենք թիմով մեծ հաճույք ենք ստանում՝ անցնելով այդ ճանապարհը, ծանոթանալուց և միմյանց ընկալելուց մինչև նոր միտք առաջարկելը: Առհասարակ այսօր գոյություն ունի գրասենյակների նախագծման երկու մոտեցում: Առաջինը ես անվանում եմ pinterest-յան սինդրոմ, երբ մարդիկ նայում են՝ ինչն է թրենդային այդ պահին և դա էլ անում են: Բայց կա մեկ այլ մոտեցում, երբ դու ուսումնասիրում ես, թե տվյալ ընկերությունն իրենից ինչ է ներկայացնում, որն է դրա ինքնությունը, արժեհամակարգը: Լսելով պատվիրատուին՝ բացահայտում ես ընկերությունը և փորձում քո ընկալումներն արտացոլել գրասենյակի ինտերիերում:

Նորարարական մոտեցումներ

Վերջին տասը տարիների ընթացքում աշխատավայրի ձևաչափը մեծապես փոփոխվել է: Մասնավորապես՝ SS ընկերություններն իրենց հետ բերեցին բոլորովին այլ մոտեցումներ՝ անցյալում թողնելով 90-ականների նյույորքյան 180x180 սմ չափի քյուբիքալները: Հայտնվեց օփեն սփեյս գրասենյակների գաղափարը: Ընդհանուր առմամբ, առաջնային է դարձել այն, որ տարածքը լինի հարմարավետ, հավես լուծումներով, որպեսզի մարդիկ հաճույքով գան աշխատանքի:
SS ընկերությունների համար կարևոր է նաև բազմաֆունկցիոնալ տարածքներ ունենալը: Օրինակ՝ մի սենյակ, որտեղ կարելի է ժողով անել, իսկ հետո փոփոխելով այն դարձնել լսարան: Որպես գրատախտակ ծառայող պատերը ևս նոր սերնդի գրասենյակների պարտադիր նախապայման են:
Նման աշխատավայրերում սկսել են հայտնվել նաև հանգստի գոտիներ: Մի հատվածում կարող ես քնել, մյուսում յոգայով զբաղվել, պինգ-պոնգ խաղալ, կամ բարից խմիչք վերցնել, նստել տանիքում ու վայելել արևը, իհարկե, աշխատելով:
Դպրոցներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դասասենյակից դուրս երեխաներն ավելի մեծ հաճույքով են սովորում: Ըստ իս՝ նույն խնդիրը կա նաև գրասենյակներում, մարդիկ հոգնում են աշխատասենյակից և փնտրում են վայրեր, որտեղ կարող են ոչ ֆորմալ տարբերակով աշխատել: Պարզ է՝ մի պահի կուզենան վերադառնալ իրենց աշխատասեղանին, բայց ընտրության հնարավորությունը մեծ առավելություն է:

Միջազգային փորձ

Առաջին SS գրասենյակները, որոնք նախագծել ենք, պատկանում էին միջազգային ցանցերի՝ Vmware-ը, Mentorgraphics-ը: Դրանք հստակ սահմանված պահանջներ ունեին, բայց դրա հետ մեկտեղ շատ բաց էին տարբեր առաջարկների համար: Cisco-ի դեպքում, որը հեռահաղորդակցությանը վերաբերող գործունեություն է ծավալում, որոշեցինք գրասենյակի երկայնքով փողոց անցկացնել, որտեղ նույնիսկ տիպիկ երևանյան նստարան կա, հեռախոսի խցիկ, հետիոտնային անցում, փողոցային լուսավորություն և այլ նման տարրեր, որոնք մարդկանց համար հանդիպման և կապի միջավայր են ստեղծում:

SS անտառը

Հայաստանյան Renderforest ընկերության գրասենյակը կառուցելիս ուշադրություն էինք դարձրել դրա անվանմանը: Forest-ը թարգմանաբար նշանակում է անտառ, իսկ Render բառն ավելի թվայնացման կողմ է տանում: Գրասենյակի ամբողջ տարածքում բնության տարրեր ենք ավելացրել, բայց հարկից հարկ բարձրանալով դրանք ձևափոխվում են: Առաջին հարկում, որտեղ գտնվում է ընդունարանը, բույսերը բնական են, իսկ արդեն վերջին հարկում, որտեղ գտնվում են ընկերության ամենատեխնիկական բաժինները, բուսականությունը ներկայացված է թվային տեսքով՝ պիքսելներով:
Ի սկզբանե այս շենքը եղել է երկու հարկանի տուֆե կառույց, բայց ընկերության հիմնադիրները հստակ նպատակ ունեին ստանալ էներգախնայող շենք, որը նաև հաճելի աշխատանքային միջավայր կունենա: Նման մոտեցումները ևս խոսում են ընկերության տեսլականի





Krisp



Renderforest

մասին: Առհասարակ SS ընկերությունների հիմնադիրները, հատկապես ստարտափերները, շատ ազատ մտածողության և ճկուն մարդիկ են, հակառակ դեպքում միջազգային շուկայում դժվար կգոյատևեն: Այդ պատճառով նրանց հետ հեշտ է լինում տարբերվող գաղափարներ մտածել, նախագծել և իրականացնել՝ ստեղծելով ոչ թե պարզապես գրասենյակ, այլ միջավայր:

Կտրվելով աշխարհից

Երբ ծանոթացանք Krisp-ի թիմի հետ, մենք արդեն իսկ օգտվում էինք հավելվածից և ընդհանուր պրոդուկտի գաղափարը մեզ շատ հետաքրքիր էր: Երբ միացնում ես Krisp-ը, աշխարհի ամբողջ աղմուկը վերանում է և մեր առաջնային հայեցակարգը հենց այդ գաղափարից էր ոգեշնչված: Զև էինք մշակել, որ գրասենյակը երկու պատկեր ունենար՝ աշխատանքային քառոտիկ վիճակ և իդեալական հանգիստ տարածք հատուկ վարագույրի միջոցով: Բայց գնալով հասկացանք, որ հարմարավետության տեսանկյունից այդ տարբերակը չի համապատասխանում: Բացի այդ, ընթացքում փոխվեց ընկերության բրենդային ինքնությունն ու նաև տարածքը:
Արդեն վերջնական տարբերակով որոշեցին հիմնվել Krisp-ի առավելությունների վրա՝ ձայնամեկուսացման և մարդկանց միջև կապը ապահովելու: Այդ նպատակով որոշեցինք կապի լարերը չթաքցնել՝ ցույց տալով Ա կետը Բ կետի հետ կապելու գաղափարը: Այդ ամենի հետ մեկտեղ պարզ է, որ պետք էր ապահովել որակյալ աշխատանքային տարածք, հանդիպումների սենյակներ, խոհանոց, հանգստի տարածքներ և այս ամենը իրենց ինքնության հետ համահունչ: Տարածքում կառուցեցինք նաև հատուկ ձայնակլանիչ նյութերով արված սենյակ և, առհասարակ, գրասենյակում այդ հարցին շատ լուրջ ենք վերաբերվել:
Եվ որպես վերջին շտրիխ, տանիքում ավազով դաշտ է լինելու, որտեղ լողափի աթոռներ կտեղադրվեն:

Բարդ էրգոնոմիկ վիճակ

Իրականում, վստահ եմ, որ տեղական SS ընկերությունները պատրաստ են ամբողջությամբ նման ձևաչափերի հասնել: Մեր գերմանացի գործընկերներից մեկի գրասենյակում հանդիպումները երբեք նստած վիճակում չեն անցկացվում: Քանի որ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երկար նստած հանդիպումների ժամանակ մարդիկ թուլանում են, սկսում տարբեր թեմաներից խոսել, մինչդեռ կանգնած վիճակում կենտրոնացնում են իրենց ուժերը հարցերին լուծում գտնելու և այդ բարդ էրգոնոմիկ վիճակից շուտ դուրս գալու համար և ժողովների տևողությունը չի գերազանցում 45 րոպեն: Իրենք համարում են, որ ավելի երկար ժողովը պարզապես անարդյունավետ է: Այստեղի փոքր SS գրասենյակներից մեկում կանգնած աշխատելու համար նախատեսված սեղան առաջարկեցինք տեղադրել. սկզբում չէին համաձայնվում, բայց երբ մոտ մեկ ամիս փորձարկեցին, արձագանքը հիանալի էր: Ու նման առաջադեմ մտածողության ձգտող գրասենյակներ շատ են, մնում է ենթակառուցվածքները թույլ տան:

Առանց քարտուղարուհու սենյակի

21-րդ դարը դեմ է գնում նախկին մոտեցումներին: Չկա հեռավոր տնօրենի սենյակը, որից հետո գալիս են հանգստյան սրահը և քարտուղարուհու անկյունը: Ես ինքս հավատում եմ, որ ցանկացած մարդ գրասենյակում համարժեք է տնօրենին, որովհետև նույն չափ, երբեմն նաև ավելի աշխատանք է կատարում: Եթե դու բաց ընկերություն ես, թաքցնելու ոչինչ չունես, նույնիսկ հաշվապահությունդ կարող է առանձին սենյակ չունենալ: Բայց կարևոր է հասկանալ, որ թիմիդ զարգացումն ու գրասենյակի ձևաչափը զուգահեռ երևույթներ են: Եթե գրասենյակը ձևականորեն օփեն սփեյս է ստեղծում, բայց մարդիկ դրան պատրաստ չեն, դա շատ ակնառու է դառնում:

Մարգարիտ Միրզոյան
«Սպորտակեր» խարտիրապետական արվեստանոց

Խելքի կտոր

Քաղաքին, որը յանկանում է քայլել ժամանակին առնվազն համընթաց, մշտապես անհրաժեշտ են «խելացի» լուծումներ, որոնք ապահովում են քաղաքային միջավայրի որակապես նոր և արդի զարգացումը: Այդ նպատակով էլ գործում է «Երևանը խելացի քաղաք» ծրագիրը, որը երկար տարիներ իրականացվում է «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲ-ի և Երևանի քաղաքապետարանի ազակցությամբ: Երևանի խելացիության մասին պատմում է ծրագրում ներառված որոշ նախագծերի նախագծման և ներդրման ղեկավար Իզաբելլա Նիկողոսյանը:



Որն է «խելացի քաղաքը»

«Խելացի քաղաք» տերմինը, որպես այդպիսին, որոշ ցուցիչների հիման վրա ձևավորվող քաղաքային տնտեսության զարգացվածության մակարդակի գնահատականն է: «Խելացի քաղաքների» հիմնական ցուցիչներից են՝

- «Խելացի» տնտեսությունը, ինչը ենթադրում է քաղաքային ենթակառուցվածքի զարգացվածության մակարդակը գիտական և նորարարական գործունեությունների իրականացման համար,
- «Խելացի» ենթակառուցվածքը, ինչը, օրինակ, ենթադրում է ճանապարհատրանսպորտային կանոնների պահպանման ավտոմատացված համակարգի, հասարակական տրանսպորտի առցանց մշտադիտարկման համակարգի, քաղաքաշինության կառավարման տեղեկատվական համակարգի զարգացվածության մակարդակը,
- «Խելացի» կառավարումը, որը դիտարկում է քաղաքի կառավարման թվային համակարգի և տվյալների մշակման կենտրոնների զարգացվածության մակարդակ, քաղաքային իշխանության տեղեկատվական թափանցիկության աստիճանը, քաղաքի կառավարմանը քաղաքացիների մասնակցության մակարդակը,
- «Խելացի» միջավայրը, որը ներառում է բնակիչների և քաղաքի իշխանությունների ակտիվությունը թափոնների կառավարման գործում, էկոլոգիական անվտանգության սպառնալիքների կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացման զարգացման մակարդակը,
- «Խելացի» ֆինանսները, որը ենթադրում է, օրինակ, պետական գնումների թափանցիկության մակարդակը, «խելացի» տեխնոլոգիաները, «խելացի» բնակիչները:

Իրոք, «Խելացի քաղաքի» ստեղծումը դժվար է պատկերացնել առանց «խելացի» մարդկանց: Հանրապետությունում հիմնականում Երևանում «խելացի» հանրության ձևավորմանը նպաստում են վերջերս ավելի հաճախ անցկացվող SS ոլորտի տարբեր միջոցառումները՝ ներառյալ մրցույթներն ու հաքաթոնները, ինկուբատորների, ինժեներական, ստեղծագործական, նորարարական լաբորատորիաների հիմնումը: Այս գործողությունները թեպետ դադար առան համավարակի հետևանքով, բայց այժմ նկատելի է տեմպերի վերականգնումը:

Ինչո՞ւ պիտի Երևանը դառնա խելացի

Քաղաքին, որը ցանկանում է քայլել ժամանակին առնվազն համընթաց, մշտապես անհրաժեշտ են «խելացի» լուծումներ, որոնք ապահովում են քաղաքային միջավայրի որակապես նոր և արդի զարգացումը: 21-րդ դարի «խելացի քաղաք» անվանգ է, տնտեսող, էներգաարդյունավետ և հարմարավետ բնակիչների համար, իսկ վերջիններս մասնակցում են քաղաքի կառավարմանը՝ միաժամանակ վայելելով զարգացման ձեռքբերումները:

Երևանը Հայաստանի վարչական, ինչպես նաև տնտեսական կենտրոնն է, և երկրի ընդհանուր տնտեսական բարգավաճումը մեծապես կախված է մայրաքաղաքի տնտեսական զարգացումից: Երևանն ունի մոտավորապես 1,1 մլն բնակիչ, ինչը կազմում է Հայաստանի ընդհանուր ազգաբնակչության 36%-ը և Հայաստանի քաղաքային բնակչության 56%-ը:

Մայրաքաղաք հռչակվելուց հետո Երևանի քաղաքաշինության մակարդակը և բնակչության թվաքանակը, մեղմ ասած, զգալիորեն աճել են: Մեծացել են շինարարության պահանջարկը, քաղաքային երթևեկության բեռնվածությունը, ավելացել են բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառի խնդիրները և այլն, և, հետևաբար, առաջացել են բարդություններ քաղաքի կառավարման գործընթացների կազմակերպման մեջ, որոնցից Երևանը երբեք էլ, ցավոք, զերծ չի եղել:

Որքանո՞վ է կարևոր Երևանի համար թվայնացումը: Ժամանակակից յուրաքանչյուր ձեռնարկատեր պատկերացնում է, որ առանց թվային գործիքների կիրառման հնարավոր չէ իրականացնել ընկերության արդյունավետ կառավարումը: Եվ, բնականաբար, Երևանի քաղաքապետարանը նույնպես մշակել է քաղաքային կառավարման թվայնացման ճանապարհային իր քարտեզը: Երևանի չափ բնակչություն ունեցող քաղաքն ուղղակի չի կարող իրեն թույլ տալ չանցնել «խելացի» կառավարմանը:

Ստեղծելով համապատասխան համակարգեր և թվային միջավայր, օգտագործելով սարքեր, հավաքագրելով տվյալներ՝ քաղաքի կառավարումը դառնում է թափանցիկ, արդյունավետ, կանխատեսելի, և բազում խնդիրներ արդեն իսկ կանխարգելվում են: Իսկ կուտակված թվային տվյալները կիրառելի են բազմաթիվ նպատակներով, քանի որ ենթակա են արագ մշակման: Բաց տվյալների առկայությունն այլ կարևոր տարր է «խելացի քաղաքի» ձևավորման գործում: Իսկ մի քանի տարբեր համակարգերի միջոցով հավաքագրված տվյալների մշակման և համադրության արդյունքում բացվում է «խելացի» կառավարման բացարձակ այլ մակարդակ, որտեղ արդեն հնարավոր է խոսել մեծ տվյալների (big data) և դրանց արդյունավետ կիրառման մասին:

Սակայն կառավարման նոր ձևաչափի ներդրումը, երբ որևէ բան զրոյից ես ստեղծում կամ փոխակերպում ես եղած հենքերը, օպտիմալացնելով առկա գործընթացները և անձնակազմը, ունի իրեն յուրահատուկ բարդություններ:

Խելացի պետական կառույցներ ու հանրություն

Հայաստանի թվային փոխակերպման ռազմավարության ծրագիրն ընթանում է հիմնական 2 ուղղություններով: Նախ դա պետական կառույցներում թվային համակարգերի ստեղծմանն ու դրանց միջև փոխգործելիության և տվյալների փոխանակման ապահովմանն ուղղված գործառույթներն են: Փոխգործելիության արդյունքում ապահովվում է տեղեկատվական հոսքերի և տվյալների արագ ու հավաստի, անվտանգ ու արդյունավետ փոխանակումը հանրային կառավարման մարմինների միջև:

Արդեն մի քանի տարի է, որ տարբեր գերատեսչություններ իրար հետ որոշ տվյալների փոխանակումն իրականացնում են թվային եղանակով, սակայն այս գործում անելիքները դեռևս անսահման շատ են ամբողջական պատկերը ստանալու համար: Սա չափազանց կարևոր պրոցես է, որի

ՍՏԵՂԾԵԼՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ, ՔԱՂԱՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԹԱՓԱՆՑԻԿ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ

արդյունքում զգալիորեն կբարձրանա հանրային ծառայությունների մատուցման որակը, կձևավորվի բոլոր գերատեսչությունների ներգրավմամբ միասնական «Մեկ պատուհան» համակարգը՝ տնտեսվարողների և քաղաքացիների համար պարզեցնելով ծառայությունների ստացման ընթացակարգը, կրճատելով ժամանակային ծախսերը և բերելով գործընթացներին թափանցիկություն:
Արդեն իսկ առկա են մի շարք կարևոր թվային լուծումներ, դրանցից են պետական կառույցներում ներդրված միասնական փաստաթղթաշրջանառության համակարգը, գույքահարկերի միասնական համակարգը, էլեկտրոնային ստորագրությունների, միասնական հարցումների, պետական վճարումների և շատ այլ էլեկտրոնային համակարգերը:
Երկրորդ ուղղվածությունն է նորարարական և «խելացի» հանրության և գործարար միջավայրի ձևավորումը, ինչի համար իրականացվում են պետական աջակցման տարբեր ծրագրեր, տրամադրվում են հարկային արտոնություններ և դրամաշնորհներ, կազմակերպվում են կրթական անվճար դասընթացներ և այլն:

Որոնք են ծրագրի հիմնական ուղղությունները

Այս պահին իրականացվում են Երևանի քաղաքապետարանի կողմից մատուցվող 100-ից ավելի ծառայությունների՝ էլեկտրոնային եղանակով տրամադրման արդիականացման և ներքին գործընթացների ավտոմատացման համակարգերի մշակման և ներդրման աշխատանքներ:
Այսպիսով Երևանը դեռևս գտնվում է քաղաքային տնտեսության թվային կառավարման ենթակառուցվածքի ձևավորման փուլում՝ զուգակցված քաղաքային կայուն զարգացման գործընթացներով:
Երևանի քաղաքապետարանում ներկայումս գործում են թվային համակարգեր կրթության, առևտրի և ծառայությունների, արտաքին ձևավորման և գովազդի, եկամուտների, իրավաբանական, կոմունալ տնտեսության և այլ ոլորտներում:

ԵՐԵՎԱՆԸ ԴԵՌԵՎ ԳՏՆՎՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ



↓ «Ակտիվ քաղաքացի» հարթակի առաջարկները

← Բնակարանային և կոմունալ խնդիրները նույնպես կարող են լուծվել «խելացի» մոդելյմամբ

Օրինակներ՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզների առցանց հերթագրման համակարգ, Արտաքին գովազդի վերահսկման և թույլտվությունների տրամադրման համակարգ, Երևանում շրջիկ առևտրի կետերի ամրագրման և վերահսկման համակարգ, բակային տարածքների գույքի կառավարման համակարգ, Հանրային տարածքների բարեկարգ պահպանման վերահսկման համակարգ, Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիի վերահսկման համակարգ, Դիմումների ընդունման առցանց համակարգ, այլ կառույցների հետ փոխգործելիության հարթակներ և թվային այլ համակարգեր:
Վերջին տասնամյակի տարբեր ժամանակահատվածներում Երևանի քաղաքապետարանի կողմից նախաձեռնվել են միջոցառումներ և ստեղծվել են նախագծեր՝ ուղղված Երևանի բնակիչների հետ տեղեկատվության փոխանակման թվային միջավայրի ձևավորմանն ու մայրաքաղաքի կառավարումը քաղաքացիների մասնակցությամբ իրականացնելուն (e-democracy): Քաղաքի մասնակցային կառավարման նման ծրագրերից են եղել, օրինակ, «iYerevan» և «Ակտիվ քաղաքացի» հարթակները: Վերջինում քվեարկության թափանցիկության ապահովման նպատակով կիրառվել է blockchain-ի տեխնոլոգիան:
Տարբեր «խելացի» ծրագրեր են իրականացվել կրթության ոլորտում: Երևան համայնքի 15 մանկապարտեզներ ներառվել են Եվրոպական ներդրումային բանկի ֆինանսական աջակցությամբ իրականացվող էներգաարդյունավետության ծրագրում: Թիվ 36 մանկապարտեզն առաջինն է, որն արդեն հանձնվել է շահագործման: Շինարարության ընթացքում մանկապարտեզի շենքի պատերը ջերմամեկուսացվել են, տեղադրվել են արևային վահանակներ և ջրատաքացուցիչ, մաքուր օդի մատակարարման սարքավորումներ:
Բացի այդ, մայրաքաղաքի բոլոր 161 մանկապարտեզներում գործում է կառավարման և վերահսկման էլեկտրոնային համակարգ, որը ստեղծվել է քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզների մասին համապարփակ տեղեկատվություն տրամադրելու, հերթագրման ցանկերը հրապարակելու, երեխաների հաճախելիությունը վերահսկելու, երեխայի հերթին առցանց հետևելու և քաղաքացիների համար առցանց հերթագրման հնարավորություն ապահովելու նպատակով: Համակարգից արդեն օգտվել են հազարավոր բնակիչներ: Այսպիսի մեկ գործիքի ներդրման օրինակով տեսանելի է, թե ինչպես է թվային համակարգը բարեփոխում ոլորտը՝ ներմուծելով թափանցիկություն, արդիականացում, ռիսկերի նվազեցում:

Խելացիության որ փուլում է հիմա Երևանը

«Խելացի» դասակարգվելու համար Երևանը թերևս երկար ուղի պետք է անցնի: Չնայած կատարված մեծածավալ աշխատանքներին՝ բացերը շատ են: Անելիքներ կան շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում՝ արտանետումների, օդի աղտոտվածության և աղմուկի նվազեցման, «կանաչ» թաղամասերի ստեղծման, թափոնների կառավարման հարցերում, դեռևս բացակայում է բնակիչների արդյունավետ շարժունակության ապահովումը՝ ինչպես անձնական, այնպես էլ հասարակական տրանսպորտով: Այս և այլ խնդիրների լուծումը պահանջում է ֆինանսական մեծ ներդրումներ, համակարգային ձևափոխություններ և, վստահաբար, ժամանակ:

Շուշանիկ Փափազյան
Փիրուզա Ռաֆայելյան, Սուրեն Մանվելյան, Առնոս Մարտիրոսյան

Բարքեմի 2022

Սկզբում այս միզակգային ֆորմատի միզոյառման մասնակիցները շաբաթ-կիրակիներին ինչ-որ գրասենյակում հավաքվում էին 50-60 հոգով ու մաթեմատիկայի բարդ խնդիրներից խոսում: Հեգո գիտությամբ ու նորարարություններով խանդավառված՝ որոշ երկրներում Բարքեմիը դարձավ մեծ, կարևոր իրադարձություն: Հայաստանում արդեն 2009-ից սկսեցին Բարքեմիի օրերին փափուկ, բրենդավորված T-shirt-ներ բաժանել ու հյուրընկալել տեխնոլոգիաներով հեգաբերբերված մարդկանց: 2022-ի թողարկմանն արդեն կարելի է տեսնել պատանիների, որոնք այն հեռավոր 2009-ին դեռ փակավին մանուկներ էին: Ոչ ֆորմալ, ինքնակազմակերպված (չ)կոնֆերանսի հայաստանյան պատմության մասին խոսել ենք Բարքեմիի կազմակերպիչներից մի քանիսի հետ:

← Երույթների ավանդական գրատախտակը

↓ Աշոտ Բարսեղյանը CodeSignal-ից

→ Հաղորդավար Նարեկ Մարգարյանի երույթը

Նախաապարտություն. «Փող կվեճ՝ Հայաստանում փորձենք»

Գեղամ Վարդանյան. «Բարքեմփը սիրված է համայնքի կողմից»:

Արմեն Գրիգորյան. «Մենք երբեք չենք խնդրել մարդկանց, որ օգնեն»:

Ալեքսեյ Չալաբյան. «Մի քանի տարի առաջ դժվար էր մեզ կոմերցիոն հովանավոր գտնել, որովհետև մի բլոգեր գրել էր՝ «այ տեսե՛ք, սովորեցնում են գունավոր հեղափոխություն անել»: Առաջին երկու տարին մարդիկ հուշտ էին լինում, հետո տեսան, որ ոչ մի կապ չկա դրա հետ, ու շատ բան փոխվեց»:

↓ Գեղամ Վարդանյանը

Մեդիափորձագետ, լրագրող Արթուր Պապյանն էլ հիշում է, որ 2008-ից է հետևում Բարքեմփերին: Առաջին անգամ Վրաստանում է մասնակցել միջոցառման այս ֆորմատին. «Գալիս է ժամանակ, երբ ինչ-որ բան դառնում է թեժ թեմա ու վիրուսի նման տարածվում: Հետո տարբեր ֆոնդեր, լրագրողական կազմակերպություններ այստեղ-այնտեղ Բարքեմփեր էին անում: Գնացինք, տեսանք, հասկացանք, որ լավ բան է: Այստեղ-այնտեղ ընկանք, որ գումար ճարենք Հայաստանում անցկացնելու համար, ի վերջո՝ Բաց հասարակության ինստիտուտը միակն էր, որ ընդառաջեց՝ ֆինանսավորեց: Նույն տարին կոմերցիոն հովանավոր էլ գտանք, որն ընդամենը համաձայնեց ինտերնետ կապն ապահովել: Ու առաջին Բարքեմփը կայացավ»:
Կրթությամբ ֆիզիկոս, մասնագիտությամբ լրագրող Գեղամ Վարդանյանն էլ հիշում է Ուկրաինայի առաջին Բարքեմփյան փորձերն ու խոստովանում՝ նախանձում էին, որ Հայաստանում չկար. մտածեցին՝ ինչու՞ իրենք պետք է անեն, մենք՝ ոչ:

Կոնֆերանս՝ առանց փողկապի

Մեդիափորձագետ Սամվել Մարտիրոսյանի համար Բարքեմփի գլխավոր այցեքարտը ոչ ֆորմալ կազմակերպումն է. «Աշխարհի ամենավատ կոնֆերանսները լուրջ կոնֆերանսներն են: Դրանց ընթացքում ոչ ոք իրականում բան չի պատմում, քանի որ շատ լուրջ է. մարդիկ վախենում են կոնկրետ բաներ խոսել: Խոսում են շատ լուրջ դեմքով, լուրջ հագուստով, թիթիզ բեյջերով, բայց ի վերջո ոչինչ չեն ասում: Բարքեմփում էլ այնքան ազատ են, որ հետո խնդրում ենք չհրապարակել նկարահանված տեսանյութերը: Կամայական լուրջ կոնֆերանսին մարդ չի կարող դառնալ ելույթ ունեցող, եթե կայացման փուլեր չի անցել, բացառությունը երևի միայն Գրետա Թունբերգն էր: Բարքեմփին նախօրոք հայտարարված թեմաներ ունենք, բայց նաև գրատախտակ կա, որտեղ կամայական մարդ կարող է գալ, գրել,եթե ինչ-որ թեմայի շուրջ խոսել է ուզում: Փաստացի ստացվում է այնպես, որ երիտասարդներին ոչ ոք չի ճանաչում, բայց հնա-

րավոր է, որ թույն բան է հնարել, սարքել կամ պատրաստվում է սարքել: Տվյալ անձն ունի նույն մեկնարկային հնարավորությունները մասնակցել (չ)կոնֆերանսին ու, միգուցե, իր ելույթն ավելի շատ մարդիկ լսեն, քան ինչ-որ լուրջ ձյաձյայի կամ տյոտյայի ելույթը, որը մի պահ իրեն կորցրել է ու թվում է՝ պետք է ներկայացնի իր կազմակերպության արդյունքները»:

Բացի դրանից Բարքեմփն անվճար է: Այսինքն՝ մի կողմից կրթություն է, մյուս կողմից՝ կամավորություն: Կոմերցիոն ֆինանսավորման խնդիր ընդհանրապես չունեն. նախ՝ գտել են ընկերություններ, որ նվիրատվություններ անեն ու միջոցառումն «ինքնակազմակերպվել է», իսկ 2011-ից սկսած ընկերություններն են հովանավորելու ցանկությունով հասել Բարքեմփ:

«Ով ուզում է, կարող է դառնալ խոսնակ,– ասում է տեխնիկական խորհրդատու Արմեն Գրիգորյանը,– կան հրավիրյալ հյուրեր, բայց գումար չեն պահանջում իրենց փոխանցած գիտելիքի համար: Մենք հոգում ենք իրենց ճանապարհի ծախսն ու կեցության վայր ենք ապահովում: Բանախոսներին չենք սահմանափակում, միայն խնդրում ենք ինքնագովազդ չանել: Բարքեմփը ձևավորված փոքրիկ համայնքում փորձի փոխանակման միջոց է: Ինչ-որ մեկն ինչ-որ լավ բան սովորել, օգտագործել է, գալիս պատմում է»:

↑ Գեղամ Վարդանյանն ու Սամվել Մարտիրոսյանը

← Գոռ Էլչյանը

← Triada Studio-ի տեխնիկական տնօրեն Բագրատ Դաբաղյանի ելույթը

Ոտքերով գնահատում խոսնակներին

Գեղամ Վարդանյան. «Շատ ժողովրդական միջոցառում է»

Սամվել Մարտիրոսյան. «Ժողովրդի հետ, ժողովրդի համար»

Մարդիկ գալիս խոսում են, լսողներն էլ պետք է ոտքերով քվեարկեն. միջազգային ֆորմատն է այդպիսին: Եթե բանախոսն անհետաքրքիր է, անլուրջ թեմա է, մասնակիցները լուռ կարող են հեռանալ լսարանից, մյուս լսարանում ավելի հետաքրքիր ինֆորմացիա գտնելու հույսով կամ միջանցքներում կարող են նոր բանիմաց ծանոթներ ձեռք բերել: Կարևոր է ոտքերով քվեարկելը, որովհետև այդ անկեղծ արձագանքի շնորհիվ բանախոսներն էլ տարեցտարի կատարելագործվում են:

Կարելի է ասել՝ Բարքեմփի չկազմակերպվածությունը կազմակերպվածություն է: Ֆորմալ տեսակետից այստեղ կազմակերպիչը մասնակիցն է: Չկա ֆորմալ ինչ-որ նյարդային կազմակերպություն ֆիքսված թիմով, որը զբաղվում է միջոցառման անթերի կազմակերպմամբ:

Ելույթները ձայնագրում են և հետո մոնտաժում, տարածում, որ էլ ավելի շատ մարդկանց համար հասանելի դառնան: Հաճախ երկու հետաքրքիր թեմա նույն ժամին է: Մասնակիցը չի կողմնորոշվում՝ որը լսի, արդյունքում միշտ մեկը բաց է թողնում: Հետո բաց թողածը հնարավոր է գտնել օնլայն: Կազմակերպիչներից Գոռ Էլչյանի համար ամենահետաքրքիրն ու գրավիչն էլ այն է, որ մարդկանց ժխորի մեջ նույնիսկ շատերը գալիս, տեղում են պատրաստում իրենց ելույթներն ու նույն օրն էլ կարողանում են այն ներկայացնել:

Ովքեր եվ ինչու են գալիս

Յութուբյան ալիքում տեսագրված նյութերն ամեն ամիս 6-7 հազար դիտում ունեն: Բարքեմփին միանում են 40 տոկոսից ավելի ծրագրավորողներ, մոտ 15 տոկոս IT մենեջերներ, 5-10 տոկոս մեդիադեմքեր, մնացածը՝ դիզայներներ, մարկետոլոգներ: Այդ զարմանալի խառնուրդից մասնագիտական ու նորարարական բում է լինում: Այն ստեղծագործական բախումների շատ լուրջ հնարավորություն է: Կան ընկերություններ, որ այստեղ նոր գաղափար են քննարկել, նույնիսկ Բարքեմփում ծնված ընկերություններ կան:

Արդեն քանի տարի է՝ Բարքեմփում մոտ 3000 մարդ է ներկա, ընդ որում մոտ կեսը նոր մասնակիցներ են: Հատկապես SS մեծ ընկերություններին բնորոշ է, որ աշխատակիցները կարող են իրար նույնիսկ չճանաչել, բայց ամենաչխոսկան ծրագրավորողներին անգամ կարելի է հանդիպել ու ծանոթանալ այս միջոցառմանը:

Բարքեմփի հակառակ կողմը

Արթուր Պապյան. «Մարդիկ այնքան շատ են գալիս-գնում, որ շոգ է լինում, իրենց հետևից էլ աղբ են թողնում»

Գոռ Էլչյան. «Ավելի հարմար ու ընդարձակ տարածք չենք գտնում, որ Բարքեմփն էլ ավելի մասշտաբային դարձնենք»

Գեղամ Վարդանյան. «Երկար ժամանակ գրատախտակի մարկերով գրածը չենք կարողանում ջնջել»

Կարծիք կա, որ մարդկանց մի մասը Բարքեմփ է գալիս, որ անվճար T-shirt-ներ ստանա ու ամենատարբեր տեխնոլոգիաներից նվերներ վերցնի: «Մարդիկ կան նույն տրամաբանությամբ կառավարություն են մտնում»,– կատակով նկատում է Սամվել Մարտիրոսյանը: Գեղամ Վարդանյան էլ կարծում է՝ մարդիկ նույն տրամաբանությամբ 4 տարի համալսարան են գնում: Բայց այդուհանդերձ լավատես է. T-shirt-ներ տանելով խթանում են հայկական տեքստիլ արտադրությանը:

Արբանյակ, NFT ու պայծառ ջահելներ

Այս տարվա (չ)կոնֆերանսին միջանցքներում հնարավոր էր հանդիպել ամենատարբեր մարդկանց. 12-13 տարեկան երեխաներից ու շփոթված ուսանողներից մինչև կայացած ընկերության հիմնադրի: Արթուր Պապյանը զարմացած էր նոր սերնդով: «Այս տարի ամենահետաքրքիր դեմքերը մինչև 15 տարեկան էրեխեքն էին, ոմանք մենակ էին, ոմանք էլ՝ ծնողների հետ: Երևում էր, որ ոգևորված էին, հետաքրքրված, զարմացած: Ապագան այդ ջահել տեխնոուղեղների ձեռքում է: «Հայաստանը տիեզերքում» թեման այս տարի համընկավ խորհրդավոր հայկական արբանյակի թռիչքի հետ, որ շատ հետաքրքրեց բոլորին: Բիոտեխնոլոգիաներով էլ հետաքրքրությունը մեծ էր: Ելույթներ կային նաև այլ թրենդային ուղղություններից NFT-ների ու կրիպտոյի մասին: Ռուսների մասնակցությունն էլ է նկատվել. կային քննարկումներ ռելոկացիայի մասին»:

Նախկինում հիմնական թեմաները SS-ն ու մեդիան էին, բայց արագ զարգացող աշխարհում հասկացել են, որ պետք է ևս մեկ քայլ առաջ գնալ: 2019-ից որոշվել է՝ հայ-թեք թեմաներ ներառել: Առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող մեդիան ու SS-ն միաձուլվում են: «Ինչ է անում Գուգլը. աշխարհի ինֆորմացիոն հոսքն է ապահովում, Ֆեյսբուքը մարդկանց օգնում է իրար մոտ զգալ, ինֆորմացիա տարածել, Յութուբը՝ ինֆորմացիոն հարթակ է, Այֆոնը՝ մեդիա սպառելու հեղափոխական գործիք: Օրինակներն ապացուցում են, որ SS-ի ու մեդիայի միաձուլումը շատ մոտ է: Այնպես չէ, որ մենք ենք հորինել: Շատ հաճախ SS-Ն ստեղծում է մեդիայի սպառման նոր միջավայր: Փորձելով հետևել մեդիայի նոր զարգացումներին՝ Բարքեմփը դարձրել ենք մեդիայի և SS մարդկանց հավաքատեղի»,– վստահեցնում են կազմակերպիչները:

↑ Բարքեմփի լեգենդար շապիկները

↓ Արթուր Պապյանը

Բախտավոր 13-ը

Գոռ Էլչյան. «14-րդ Բարքեմփին կփորձենք էլ ավելի կազմակերպված դառնալ»

Սամվել Մարտիրոսյան. «13 տարի է՝ փորձում ենք ավելի կազմակերպված դառնալ»

Հաճախ Բարքեմփին ոչ թե պրոֆեսիոնալ հետաքրքրությունից ելնելով են գալիս, այլ միջոցառումն արդեն դարձել է հոբբի: Կազմակերպիչների համար կարևոր է համայնքն ակտիվացնել: Ուզում են, որ մարդիկ ուրախ ու գոհ գնան՝ միջանցքներում նոր ծանոթներ ձեռք բերած: Ու քանի դեռ այդ ամենը տեսնում են, (մենք էլ) վստահ են՝ հաջողում են: Քանի որ սա 13-րդ Բարքեմփն էր, ֆեյսբուքում #LUCKY13 էին գրում, որ ոչ ոք, ոչ մի մտավախություն չունենար բախտավորության համար: Ծրագրավորողները 0-ից են սկսում հաշվել, չնայած որ 13-րդն է, բայց ուրբաթ չէ, հետո 14-րդ տարին է. մի տարի բաց են թողել:

Սարինե Մերկերյան
Արթուր Ռաչայերյան

Սովորիր ինքդ.

ինչպես դառնալ ծրագրավորող 42 Երևանի ու Թումո լաբերի շնորհիվ

Շապերը գիպրեն Թումոյի այգու հարակից կարաճքում գտնվող կլոր շենքը, որը երկար տարիներ չէր գործում: 1960-70-ականներին կառուցված շենքում երիտասարդների համար գործել է տեխնիկական ստեղծագործության կենտրոն, որն էլեկտրոնային սարքավորումներ արտադրող խոշոր գործարաններից մեկին էր: Հետո՝ 2022-ին, երեք տասնամյակ չօգտագործված շենքն իր հարկի տակ մեկտեղեց Թումո լաբեր և «42 Երևան» կրթական ծրագրերը, որոնք իրականացվում են ԵՄ Թումո ինժեներական և կիրառական գիտությունների համալիր նախագծի շրջանակներում:

«Ավազանից» օգտվելու կանոնները

Փարիզից մինչև Տոկիո սփռված 42 միջազգային ցանցի երևանյան մասնաճյուղը Հայաստանում միակն է, որտեղ ուսանողները պետք է ծրագրավորումը սովորեն ինքնուրույն: Պետք է միայն լինել 18 տարեկան, պատրաստ լինել ամեն շաբաթ առնվազն 40 ժամ տրամադրել ուսմանը ու վստահ լինել, որ կարող ես 1-3 տարի նվիրել դրան: Հետո՝ պրակտիկա ու սեփական ապագան ծրագրավորելու հնարավորություն:

10 նախագիծ, 4 քննություն և 4 խմբային նախագիծ. այս փորձնական շրջանը 4 շաբաթ է: Այդ ընթացքում ուսանողները ծանոթանում են ուսուցման մեթոդին և միանգամից սուզվում ծրագրավորման աշխարհի մեկամսյա «ավազանի» մեջ: 42-ում մինչև ընդունելությունն անցնող ավազանի փուլը համեմատում են ծովից դուրս գալու հետ: Ասում են՝ պատկերացրեք առանց ծրագրավորման գիտելիքների ընկնում ենք առաջադրանքների ծովը: Պետք է որևէ կերպ դուրս գաք: Ավազանի միտքն այն է, որ պետք է չխեղդվես, պետք է հասցնես գիտելիքներիդ շնորհիվ դուրս լողալ:

Հետո ուսումը ևս 2 տարի է: Նախագծերի, առաջադրանքների ու թիմային աշխատանքի ինքնուսուցողական հարթակում



սովորողները շաբաթը միջինում 40 ժամ են ծախսում: Ծրագրավորման դպրոցի դռներն ուսանողների համար բաց են օրը 24 ժամ, շաբաթը՝ 7 օր: Սովորելու ժամերն ընտրում են ուսանողները:

Սովորելու երեք ուղի

Մասնագիտությամբ տնտեսագետ Աննա Հարությունյանը 6 տարի բիզնես պլանավորմամբ զբաղվելուց հետո որոշել է մտնել կոդերի աշխարհ: Պատմում է՝ զգում էր, որ վաղ թե ուշ այն, ինչ ինքն է անում, հնարավոր է ավտոմատացնել, որից հետո ինքն անգործ կմնա:

«42-ն ինձ տվել է սիրող համայնք, մեծ շրջապատ, soft skill-եր, ժամանակի ճիշտ կառավարման ու հաղորդակցման հմտություններ ու ծրագրավորման հիմնարար գիտելիքներ: Այլ կերպ ասած, այստեղ պատրաստում են իսկական աշխատանքային կյանքին: Ունես նախագիծ, ունես վերջնաժամկետներ: Ունես մի քանի տարբերակ այդ նախագիծը նշված վերջնաժամկետում ավարտելու համար: Առաջին՝ ինքնուրույն չարչարվել, տանջվել, երկրորդը՝ գուգլել և երրորդն ու 42-ում ամենատարածված մեթոդը՝ հարցնել մարդկանց»:

Անդասախոս դասեր

42-ում ակադեմիական դասախոսություններ չկան: Այստեղ առաջին օրվանից սովորում են լինել ինքնուրույն և դա գլխավոր նորամուծությունն է, որը 42-ը բերել է Հայաստան: Առաջին տարում միայն ուսումնական առաջադրանքներ, նախագծեր են՝ մոտավորապես 25 նախագիծ են իրականացնում: Երկրորդ փուլում անցնում են պրակտիկայի ինչ-որ մի ընկերությունում, իսկ երբ վերադառնում են, կարող են ավելի նեղ մասնագիտական նախագծերի վրա աշխատել, օրինակ՝ խորանալ արհեստական բանականության մեջ:

«Երբ կոնկրետ դասախոս չկա, ավելի հավես են անցնում դասերը: Երբ դու ինչ-որ նախագիծ արեցիր, ինչ-որ չափով հասկացար, գնում ինֆորմացիադ ուրիշին ես փոխանցում,–

← 42-ի շրջանավարտ
Աննա Հարությունյանը

շարունակում է Աննան։– Նախ՝ դրանով ինֆորմացիան ավելի լավ ես մարսում, հետո էլ այդ նույն մարդը գալիս է քեզ հետ կիսվում է այն ինֆորմացիայով, որը դու չես յուրացրել և ինչին ինքն է տիրապետում։ 42-ում սովորածդ նոր հմտությունը կարող ես պտտել ամբողջ տարածքով»։

«42-ն ինտրովերտների տեղ չէ»

«42-ը սովորողին ոչ մի բան չի ստիպում»,– ասում է Աննան։ Ուսման հիմնական մեխն իրար հետ ինֆորմացիայով փոխանակվելն է։ Եթե մի բանից գաղափար չունես, պետք է գնաս մեկին գտնես ու հարցնես։
«Եթե մարդն ինտրովերտ է, չի գնում շփվում։ Իսկ շփվելն այստեղ շատ կարևոր է։ Ես էլ եմ ինտրովերտ, բայց 42-ում փորձել եմ ինձ փոխել։ Մարդու աճի ու զարգացման միակ ձևը դժվարությունների միջով անցնելն ու կոփվելն է։ Ինձ համար 42 Երևանը հենց այդպիսի տեղ է, որի շնորհիվ անցել եմ դժվարությունների միջով, կոփվել ու աճել»։
42 Երևանի ծրագրավորման դպրոցի ղեկավար Հովհաննես Իսպիրյանն ասում է, որ կա գիտական հիմք, թե ինչու է կարևոր ավազանի փուլն անցկացնելն ու ուսանողների՝ միմյանց սովորեցնելը։ Երբ կա դասավանդող անձ, ուսանողն իր ինքնուրույն աշխատանքի փոխարեն կառչում է դասախոսի ասածից։ «Պատկերացրեք՝ ընտանիքում քույր-եղբայր միմյանցից ավելի շատ են սովորում, քան երբ ծնողներն են փորձում որևէ բան սովորեցնել»,– ասում է Հովհաննեսը։

Թումո լաբերը՝ որպես կամուրջ

Թումո լաբերի նախագծերի ավագ ղեկավար Բահարե Ֆաթեմին ասում է, որ Լաբերի նախագծերը կամուրջ են ակադեմիական և արդյունաբերական ոլորտների միջև՝ թույլ տալով ուսումնասիրել տեխնոլոգիաները և ձևավորել նոր թվային դարաշրջան։ Այստեղ պարտադիր չէ ունենալ համալսարանական կրթություն կամ փորձ, եթե տվյալ նախագիծը որևէ ոլորտից բազային գիտելիքներ կամ հմտություններ չի պահանջում. «Թումո լաբերի կրթական ծրագիրը կազմված է ուղղորդված ինքնուսուցման և գործնական նախագծերի բաղադրիչներից»,– ասում է Բահարեն։
Այս երկու՝ միմյանց փոխլրացնող մեթոդները հնարավորություն են տալիս ուսանողներին ձեռք բերել գիտելիքներ տեխնոլոգիաների, կիրառական գիտության և ինժեներության ոլորտներում, այնուհետև ամբողջացնել դրանք գործնական հմտություններով։ Արդյունքում ձևավորվում են ժամանակակից աշխատաշուկայի պայմաններին համապատասխան մասնագետներ։

ՍՈՍ ընկերությունների հետ գործակցելու հնարավորություն

Թումո լաբերի կրթական ծրագիրը տեխնոլոգիական կրթական ուղեցույց է, որը հիմնված է ինքնուսուցման հարթակի և՛ ուսանողներին, և՛ երիտասարդ մասնագետներին շուկայում գործող ընկերությունների հետ համատեղ նախագծերում ներգրավելով։ Ինքնուսուցման ծրագիրը բաղկացած է լավագույն կրթական ռեսուրսներից, փորձագետների մշակած վարժանքներից ու մինի-նախագծերից. «Ինքնուսուցման ծրագիրն այժմ ունի երեք ուղղություն՝ Python, մեքենայական ուսուցում և JavaScript։ Այստեղ ուսանողները կարող են սովորել 0-ից կամ լրացնել ունեցած գիտելիքների պաշարը»։
Վարժանքների ամեն մի մակարդակի վերջում ինքնուսուցման մասնակիցներն իրականացնում են մինի-նախագծեր, որոնք օգնում են հասկանալ, թե որքանով են յուրացրել այդ մակարդակի թեմաները։ Վերջնական նախագծերն ինքնուսուցման ծրագրի մասնակիցները վերանայում են և ուղարկում Թումո լաբերի ծրագրավորման ավագ մասնագետներին։ Մինի-նախագծերն իրականացնելու համար տրամադրում են 3-ից 21 օր։
Վարժանքները և մինի-նախագծերը հաջողությամբ անելուց հետո ուսանողներն արդեն հնարավորություն են ստանում մասնակցել գործնական նախագծերին։ Դրանք իրականացնելու համար Թումո լաբերը գործակցում են տեղական և միջազգային ՏՏ ընկերությունների, ինչպես նաև համալսարանների հետ։ Նախագծերին կարող են դիմել ինչպես ինքնուսուցման ծրագրի ուսանողները, այնպես էլ տվյալ նախագծի պահանջներին համապատասխան բազային գիտելիքներ կամ հմտություններ ունեցողները։
Կրթական ծրագրի այս բաղադրիչի շրջանակում Լաբերի գործընկեր կազմակերպությունների փորձառու մասնագետներն ուսանողների հետ իրականացնում են 3-6 ամսվա գործնական նախագծեր։ Արդյունքում ուսանողները ստանում են արդիական և կիրառական հմտություններ նորարարական ոլորտներում և միաժամանակ իրականացնում ավարտուն նախագծեր, որոնք ապագայում օգտագործվում են իրական կյանքում՝ կատարելագործելով գործընկեր-կազմակերպությունների պրոդուկտները։
Թումո լաբերի գործընկեր համալսարանների ուսանողները, մասնակցելով գործնական նախագծերի, հմտություններից բացի նաև ստանում են կրեդիտներ։

Ինչպես դառնալ սեփական ապագայի տերը

42-ի համար կարևոր է, թե քանի շրջանավարտ է աշխատանք գտնում, քանի ստարտափ է ստեղծվում։ Առաջին տարվա ուսանողների մոտ 40 տոկոսն արդեն աշխատում է, կամ փորձաշրջան անցնում, չնայած շարունակում են մնալ ուսանող։ 42-ում չեն ուզում դեռ արդյունքներով հպարտանալ, կարծում են դպրոցի իրական արդյունքը կտեսնեն 3-4 տարի անց։ Ուստի խորհուրդ են տալիս բոլորին դիմել ու անցնել ավազանի՝ մեկամսյա նախընտրական փուլը, որ վստահ հասկանան՝ իրենց համապատասխանում է կրթության նորարարական ու խիտ գրաֆիկով այս մոդելը։
Ուսանողների հետ զրուցելիս գրեթե բոլորն են ասում, որ ծրագրավորման մի լեզու սովորելը տալիս է ալգորիթմական մտածողություն, երկրորդը հաղթահարելիս աշխատանքում արդեն ավելի հեշտ է թվում ամեն ինչ։ Պատահական չէ, որ 42 նոր ուսանողներին այսպես են հրավիրում. «Եթե ինքնուրույն ես, չես վախենում խնդիրներից, աշխատասեր ես, ուրեմն քո ապագայի տերն ես»։

↑ NVIDIA-ի արագ հարկապրոյեկտերը Թումո լաբերում

↓ Սովորական օր Երևան 42-ում

Սարինե Մերկերյան
Թումո

ՔՈ ԸՆԿԵՐ ՌՈԲԻՆԸ

ԵՐԵՎԱՆՆ պատմում է արհեստական բանականության օգտագործմամբ առաջին հայկական ռոբոտի մասին, որն արդեն աշխարհի շուրջ 15 հիվանդանոցներում օգնում է փոքրիկներին ավելի հեշտ անցնել բուժման ընթացքը:

Հոգատար ալգորիթմը

«Վախենալու բան չկա»,– ասում է կլոր մեծ աչքերով մարդուկը՝ մոտենալով հիվանդասենյակում բուժզննում անցնող փոքրիկին: Ռոբինը, շփվելով երեխայի հետ, հասկանում է նրա տրամադրությունը և գիտի՝ ինչ ասել, որ նա իրեն միայնակ և վախեցած չզգա:

Ռոբինը Հայաստանում ստեղծված արհեստական բանականության ալգորիթմի վրա հիմնված առաջին ռոբոտն է, որն արդեն աշխարհում շուրջ հինգ հազար երեխաների հետ ընկերացել և օգնում է ավելի հանգիստ անցնել բուժման գործընթացը: 2021-ին TIME ամսագիրը Ռոբինին ներառել էր տարվա լավագույն նորարարությունների ցանկի մեջ:

Ի սկզբանե Ռոբինին ստեղծելու գաղափարը բխել է ոչ թե երեխաների, այլ տարեց մարդկանց խնամքին վերաբերող հարցերից: «Երբ երեխա էի, տատիկս ապրում էր մեր ընտանիքի հետ: Մայրս պիտի գնար աշխատանքի, իսկ ես մնում էի խնամելու հաշմանդամ տատիկիս: Հենց այդ ժամանակ էլ հասկացա խնամքի կարևորությունը,– պատմում է Expper Technologies ընկերության համահիմնադիր Կարեն Խաչիկյանը,– աշխարհում իմ տատիկի նման միլիոնավոր մարդիկ կան, այդ թվում նաև երեխաներ, որոնք համապատասխան խնամքի կարիք ունեն: Դեռ այն ժամանակից գիտեի, թե որ ոլորտին պիտի նվիրվեմ»:

Ռոբինին կարելի է օգտագործել առողջապահության մատուցման արժեքային շղթայի տարբեր հատվածներում՝ կենտրոնանալով այնպիսի պարամետրերի վրա, որոնք պահանջում են բարձր ինտենսիվ խնամքի գործառույթներ՝ սկսած մանկաբուժական խնամքից մինչև տարեցների խնամք:

Ռոբինի ծրագրային ալգորիթմը տեղում վերլուծում է իր առջև կանգնած երեխայի հոգեկան վիճակը և համապատասխան արձագանք տալիս: Առաջին օրվանից Ռոբինի ստեղծման վրա աշխատել են ոչ միայն գիտնականներ և ինժեներներ, այլև մանկական հոգեբաններ: Նրանք մանրակրկիտ մշակել են ռոբոտի փոխազդեցությունները և այլ մասնագետների հետ միասին փորձել են ստեղծել տեխնոլոգիա, որը կգրավի երեխաների ուշադրությունը և կօգնի նրանց վստահելի հարաբերություններ ստեղծել: Ռոբինի մեջ ներդրվել են տարիներով փորձված հոգեբանական մեթոդներ. խաղի վրա հիմնված մոտեցումները, վարքագծային ռազմավարությունը, ուշադրության խթանումը, և տարիքին համապատասխան հատուկ մշակված երկխոսությունները:

Վերլուծական բանականություն

Ընկերության հոգեբանները փորձում են համադրել վերջին տարիների ոլորտի նոր մոտեցումներն ավանդականների հետ: Կախված երեխայի հետ շփման պահին արված վերլուծության արդյունքներից՝ Ռոբինն ընտրում է, թե ինչպես շարունակել շփումը երեխայի հետ: Կարող է իրեն խաղի մեջ ներառել՝ խաղտուտիկի պատկեր ցույց տալով և խնդրելով, որ երեխան փչի վրան, կամ սփոփել երեխային՝ բացատրելով կատարվելիք միջամտության հեշտությունը և այդպես շարունակ: Ինքնուրույն շփումից զատ՝ Ռոբինին կարող է կառավարել, օրինակ՝ բուժանձնակազմից որևէ մեկը, իսկ Ռոբինն այդ ընթացքում տվյալներ կհավաքի երեխայի մասին: Մյուս տարբերակով Ռոբինին կառավարում է ԱՄՆ-ից ընկերության հետ համագործակցող երեխայի մասնագետ: Վերջին դեպքում, ստացվում է, որ երեխան ձեռք է բերում նոր ընկեր ու նաև հատուկ մասնագետի ուշադրության կենտրոնում է հայտնվում: Առհասարակ, Կարեն Խաչիկյանի խոսքով՝ ընկերությունում ի սկզբանե նպատակ են ունեցել ստեղծել ոչ թե մի հասարակ սարք, այլ նոր ընկեր երեխաների համար:

120 սմ

Ընկերության համահիմնադիրը նաև պատմում է, որ Ռոբինի արտաքին տեսքը մանրակրկիտ մտածված է, հատուկ ուշադրություն է դարձվել ընդհանուր ձևին, չափսին, օգտագործվող նյութերին, գունային լուծումներին, դեմքի արտահայտությունների ֆունկցիոնալությանը:

«120 սանտիմետր հասակով Ռոբինի մարմնի կորությունը, վերամշակված բիոպլաստիկի օգտագործումը, եզրային մասերի հարթ և փափուկ անցումները երեխաների մոտ մեծ ցանկություն են առաջացնում գրկել Ռոբինին և ընկերանալ նրա հետ»,– ասում է Կարեն Խաչիկյանը:

Ռոբինի արտահայտիչ դիզայնի տարբեր բաղադրիչները՝ մեծ կլոր աչքերը, դեմքի արտահայտությունները և ականջները, մարմնավորում են ընկերասեր հասակակցի, որը օգնում է երեխաներին շփվել և հեշտությամբ կապ հաստատել: Ռոբինի շարժումները նույնպես ընդօրինակում են մարդուն. գլուխը կարող է շարժվել դեպի ձախ և աջ և նայել վեր ու վար: Մարմնի շարժումները նաև օգնում են ստեղծել իրականությանը նման շփում՝ բերելով ընկերական և հարազատ մթնոլորտ:

«Մի դեպք եմ հիշում, երբ չորսամյա Սառան, որը հոսպիտալացվել էր թոքաբորբով, հրաժարվում էր ուտել: 2 օրվա ընթացքում գրեթե ոչինչ չէր կերել ու բոլորը փորձում էին համոզել, որ վերջապես մի բան ուտի: Սառայի հետ որոշ ժամանակ խաղալուց, նրա սիրելի կենդանիներից խոսելուց հետո Ռոբինն ասաց, որ պետք է լիցքավորի իր մարտկոցը և կվերադառնա, եթե Սառան նույնպես զնա լիցքավորվելու: Լսելով այդ առաջարկը մեկից, որը շատ կարճ ժամանակում հասցրել էր դառնալ իր ընկերը՝ աղջնակը համաձայնվեց ուտել»,– պատմում է Կարեն Խաչիկյանը:

Վերալիցքավորվել

Մինչ մանկաբուժական հաստատություններում բնակություն հաստատելը՝ Ռոբինը փորձարկում անցավ Wigmore Clinic-ում՝ շփվելով շուրջ 120 4-ից 12 տարեկան երեխայի հետ: Այդ ընթացքում հոգեբաններն ուսումնասիրություններ կատարեցին, որպեսզի պարզեն Ռոբինի արդյունավետությունը սթրեսի և անհանգստության նվազեցման գործում: Արդյունքները ցույց տվեցին, որ ռոբոտի հետ շփումից հետո երեխաների ուրախության մակարդակն աճել է ավելի քան 26%-ով, իսկ սթրեսը նվազել է 34%-ով: Բժիշկները ևս ուրախ են իրենց նոր ընկերոջ համար: Ասում են՝ Ռոբինն իր ներկայությամբ փոխում է հիվանդանոցի մթնոլորտը և հեշտացնում է իրենց գործը երեխաներին՝ բացատրելով դժվար բժշկական գործընթացներն ամենապարզ ձևով, բարձրացնելով նրանց և նույնիսկ ծնողների տրամադրությունը:

Մարգարիտ Միրզոյան
Expper Technologies

Հիշում եմ, մտանք ինտերնետ

Հիշում ենք այն ժամանակ-ները, երբ համացանցը ոչ թե էլեկտրականության ու ջրի պես միշտ հասանելի սովորական երևույթ էր, այլ չտեսնված մի զուգահեռ իրականություն, որտեղ ոտք դնելն այդքան էլ հեշտ չէր:

Նիվա Միրաքյան

Հեռավոր 1998 թվականն էր. ՄԳԻՄՈ-ում էի սովորում: Բոլորը, բացի ինձնից, համակարգիչներ ունեին: Հենց առաջին կուրսում ինֆորմատիկայից քննություն ունեինք: Հիշում եմ, մեզ երկար բարակ բացատրում էին, թե ինչ է www-ն, այդ խորհրդավոր «սարդոստայնը»...

Մտերիմ ընկերուհիս՝ Քայուշան, համակարգիչ ուներ. իր տանն էի գիշերում, որ բացահայտեմ ինտերնետային աշխարհը: ICQ-ն բացահայտեցի, մեզ մոտ «ասկա» էին ասում: Տարբեր չաթեր կային ու մենք էլ մեր ՄԳԻՄՈ-ի չաթն ունեինք, որտեղ հիմնականում բամբասանքներ, քննադատություններ էին գրվում: Այդքան էլ հաճելի չէր, բայց դե բոլորս էլ հետևում էինք:

Բայց ամենածիծաղելին այն էր, որ համակարգիչ չունենալով՝ լավագույնը հանձնեցի ինֆորմատիկայի քննությունը:

Ինստիտուտն ավարտելուց հետո նոր համակարգիչ ունեցա. արծաթագույն TOSHIBA-էր՝ պապան էր նվիրել, առ այսօր պահպանել եմ:

Հայարփի Մովսիսյան

2008 թվականին գրանցվեցի ֆբ, բայց ընկերուհիներս համոզեցին՝ էն գլխից ֆբ-ի հետ չեմ ունեցել ու մինչև հիմա:

Մինչև ֆբ-ն հիշում եմ, որ ընկերուհիներս մեյլ ագենտով ինչ-որ տղաների էին խոսացնում՝ օրինակ՝ սատկած մուկ username-ով ժամադրում էին: Բայց դե շատ երեխա էինք էն ժամանակ, ապուշի պես հանդիպման չէինք էլ գնում: Ես մասնակցում էի դիալոգներին, բայց անձամբ իմ էջը չունեի:

Ֆբ-ում ահագին նոր արտասահմանցիների հետ ծանոթացա, որ մինչև հիմա կան ընկերներիս ցանկում, ու իրենցից մեկը՝ բրազիլացի Mo Toledon, ոգեշնչեց ինձ, որ սկսեմ ֆոտոյով զբաղվել: Ինքն էլ կոլաժներ էր սարքում շատ հավես: Մի 2 մրցույթի մասնակցեցի, մի տեղ էլ նկարս նույնիսկ լավագույն լուսանկարների ցանկում հայտնվեց:

Անուշ Գևորգյան

3 տարեկան էի, ու մեր տանն արդեն նոթբուք կար, բայց ինտերնետ չկար: Անգլերենով տրամաբանական խաղեր էինք խաղում: 10 տարեկան էի, քույրիկիս հետ հազիվ ծնողներիս համոզեցինք, որ ինտերնետ ունենանք. դե բոլորն արդեն ունեին:

Մերոնք այդ ամենից շատ գլուխ չէին հանում, բայց մեծ եղբայրս օգնեց: Առաջինը՝ սովորեցրեց «ֆլեշկայով» ինտերնետը կոմպին միացնել: Եղբայրս ասեց, որ Firefox-ն ամենաուժեղ բրաուզերն է, ու սովորեցրեց, որ ուզած բանը կարող ենք գրել, փնտրել ու գտնել: Հիշում եմ, որ առաջինը YouTube-ով Շակիրայի «Waka Waka» տեսահոլովակը տեսանք:

Ոգևորված էինք շատ, այդ «արգելված պտուղը» վերջապես մեր տանն էլ հասանելի էր, էլ պետք չէր տարօրինակ կապեր միացնել՝ անջատելով հեռախոսը:

Հովսեփ Մարդոյան

Առաջին անգամ ինտերնետ մտել եմ 7-8 տարեկանում: Էդ ժամանակ կոմպը մի քիչ թանկ հասկացություն էր ու 700 դրամով «կամպյուտռ կլուբեր» կային: Հիմնականում գնում էի խաղ խաղալու, բայց լիքը տարօրինակ ձյաձյաների եմ հիշում ու սարսափելի ծուխ՝ էն որ մառախուղ էր:

Հետո՝ 12 տարեկանում, հոպարս ահավոր թույն կոմպ նվիրեց. էն որ տտ օֆիսները դեռ երազում էին՝ տենց կոմպ էր: Բայց էդ էն սպամի ահավոր թվերն էին, էն որ ցանկացած լինքով սկայփ, օդնակլասնիկի, ֆեյսբուք՝ բոլորին նյուդիթիի, սպանության կամ տեռորի մեսիջներ էին գնում: Իմ մոտից ամեն օր լիքը սպամեր էին գնում, որովհետև ինչ տեսնում, սեղմում էի:

Մի անգամ մեր ավանդապաշտ բարեկամին շաաաա՜ատ ահավոր վիդեո էր գնացել՝ զանգեց, կռվեց մերոնց հետ ու իրանք կոմպս հավաքեցին, պահեցին, որ տենց բաներ չանեմ:

Մի տարի հետո կռվով-դավով կոմպս հետ վերցրեցի:

Նարեկ Մարգարյան

Առաջին անգամ երբ ինտերնետ մտա, 1996 թիվն էր: Պապայի գործի տեղը կար, ես էլ շաբաթ-կիրակի գնում՝ օգտվում էի: Մի անգամ մի կայք գտա, որ Նինջա կրիաների մասին էր: Կարծես պաշտոնական կայքն էր: Քո սիրելի նինջա կրիային նամակ գրելու հնարավորություն կար, ես էլ Միքելանջելոյին նամակ գրեցի:

Ինչ-որ ձևաթուղթ կար՝ անուն ազգանունն էր պետք լրացնել: Ու ես Միքելանջելոյից մեյլ ստացա՝ պատասխանել էր՝ «Հեյ, Նարեկ» ու ինչ-որ շաբլոն տեքստեր: Բայց ես ահավոր ուրախացել էի էդ շաբլոն տեքստից:

Իհարկե, չէի մտածում, որ հենց Միքելանջելոն ա գրել, բայց միևնույն ա՝ ուրախացել էի: Պատասխանը նույնիսկ տպել ու դպրոց էի տարել՝ պարծենալու:

Մարիամ Լորեցյան

«Արմինկոն» էր ինտերնետ ծառայություն մատուցում, Dial up-ն էլ, էն որ բառացիորեն հեռախոսային գծով զանգում էիր, որ մտնեիր համացանց: Ջանգն էլ հեշտ չէր գնում, ցերեկային ժամերին կպնելը մի փորձություն էր: Մամայիս հետ գնացինք, գրանցվեցինք ու սկսեցինք «կպնել»: Խշշոցը հենց գալիս էր, ուրեմն կպել ենք:

Առաջինն ինչ արեցի՝ yahoo-ում մեյլ բացեցի: Հետո MTV-ի կայք մտա, չաթեր կային՝ տարբեր հաղորդումների երկրպագուներով շփվում էինք իրար հետ:

Էդքան էլ չէինք պատկերացնում՝ ինչ ա ինտերնետն ու ինչ հնարավորություններ ունի: Explorer-ով էինք մտնում, Search-ը չէինք հասկանում՝ ոնց ա աշխատում, որ իրականում ամեն ինչ կարող ես գտնել:

Ինտերնետը ժամով էր՝ հեռախոս չէիր կարող օգտագործել, կապն էլ ահավոր դանդաղ: Ինչ-որ բան էինք նայում, կարդում, մեկ էլ բջջայինին զանգում էին՝ բողոքում, որ մեր հեռախոսը զբաղված է: Ստիպված էինք լինում անջատել կապը, որ մերոնք խոսեն: Հա, հեռախոսի վարձն էլ շատ թանկ էր ստացվում, այնպես որ շատ երկար չէինք կարողանում օգտվել:

Աննա Քարամյան

Ամառ էր. մեր բակի կողքը «ինտերնետանոց» կար, մոտավոր 2009 թիվն էր: Բակի մեծ տղերքն էին բացել՝ ժամը 300 դրամ էր: Սկզբում շատ չէինք օգտվում համացանցից, հիմնականում բակի երեխեքով գնում խաղեր էինք խաղում օնլայն ու երգեր քաշում փլեյերների մեջ: Մի երգը 100 դրամ էր: Երգեր քաշելու պրոցեսը մեր ուրախությունն էր:

Մի քիչ մեծացա:

Աշուն էր, սեպտեմբեր:

Լիքը դասեր. ռեֆերատների համար արած research-ներն իմ սիրած տնայիններն էին: Դասից հետո միանգամից գնում էի «ինտերնետանոց», որ տրված թեմայի շուրջ research անեի: Հավաքում էի տարբեր էջերից ինֆոներ ու սիրուն հոդված ստանում, տպում էի էջը 10 դրամով, գնում տուն ու տպածս արտագրում A4 թղթի վրա (դե որովհետև դասատուները չէին սիրում տպած ռեֆերատներ):

Մի քիչ էլ մեծացա:

Սիրած էջերից էր weheartit-ն ու pinterest-ը. տեսնում էի, թե Հայաստանից դուրս ինչքան սիրուն բաներ կան, ու ոգևորվում, ուզում էի սիրուն բաներ ստեղծել: Հենց տենց էլ սկսեցի զարդեր սարքել, քիչ անց՝ սենյակիս համար դեկորներ: Կարելի ա ասել, որ սիրունի նկատմամբ սերը հենց այդ ժամանակ սկսեց:

Էջ էինք գտել, որտեղով ուրիշ երկրների աշակերտների հետ էինք շփվում անկապ թեմաներով, անգլերեն էինք սովորում: Ու դե ամենասիրելի զբաղմունքներից էր google maps-ով օվկիանոսներով ու տարբեր երկրներով ճանապարհորդելը:

Երկիր «Նաիրի»

Ինչպես էին 1960-ականներին Երևանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում (նույն ինքը՝ Մերգելյան ինստիտուտ) ստեղծվում առաջին հայկական էլեկտրոնային հաշվիչ մեքենաները, և ով էր կանգնած այդ նախագծի հետևում:



Չթիաձը

Իր գրասեղանի առջև նստած՝ Հրաչյան հիշում էր, թե ինչպիսի խոչընդոտների միջով էր ստիպված անցնել մինչ այս կամ այն մեքենայի մոդելի ծնունդը: Նա հրաշալի էր հիշում 1962 թվականը: Այդ ժամանակ Մոսկվայում տեղի էր ունենում հաշվիչ մեքենաների միջազգային ցուցահանդես, որին ներկայացված էր ֆրանսիական CBA-500 ԷՀՄ-ն: ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարությունը գիտական խմբի առաջ խնդիր էր դրել՝ ստեղծել ֆրանսիական մեքենայի կրկնօրինակը, կամ այլ խոսքով՝ «թիել» նույնը: Բայց Հովսեփյանը հակադրվեց վերևից իջեցված բանաձևին և շարունակեց ապագա հայրենական արտադրության մեքենայի իր տարբերակը:

Բայց գիտնականի նախաձեռնությանը նախարարության ներկայացուցիչներն արձագանքեցին յուրովի: Նրանք ասացին. «Մեզ դա պետք չէ: Արա՛ մեզ համար արտասահմանյան տիպի կրկնօրինակը»: Եվ դա զարմանալի չէր. ԽՍՀՄ-ում գրեթե յուրաքանչյուր նախաձեռնություն խեղդվում էր բնում: Եթե, իհարկե՛, այս կամ այն պաշտոնյայինը չէր: Ամեն դեպքում, Հրաչյան որոշեց չհանձնվել, մանավանդ որ վստահ էր իր իրավացիության մեջ: Նա փորձում էր համոզել ղեկավարությանը, որ ֆրանսիական մեքենայի արդյունավետությունը հնարավոր է հաջորդական գործողության համար միայն մեծ հիշողություն օգտագործելիս, որի համար ֆրանսիացիներն օգտագործում են զերարագ մագնիսական թմբուկներ:

Մենք, ասում էր նա, առայժմ չենք տիրապետում բավարար ուժեղ տեխնոլոգիական բազայի նմանատիպ հանգույցների արտադրության համար: Այդ պատճառով, համոզում էր նրանց, այդ մեքենաներն արդեն բարոյապես մաշվել են: Դրա փոխարեն գիտնականն առաջարկում էր բոլորովին նոր ու յուրահատուկ տեխնիկական լուծում, որի էությունը միկրոծրագրի կառավարման սկզբունքի կիրառումն էր: Բացի այդ, նա առաջարկում էր մեքենայի զուգահեռ գործողության բացարձակապես նոր տիպ, որը սկզբունքորեն առավելություն էր տալիս դրան ֆրանսիական տարբերակի համեմատությամբ:

Ի վերջո, գիտնականների և նախարարության այս պայքարի արդյունքում 1964 թվականին հայտնվեց «Նաիրի-1» ԷՀՄ-ն՝ դառնալով ընտիր հիմք նոր սերնդի մեքենաների ստեղծման համար, որոնցից յուրաքանչյուրն իր տեխնիկական հնարավորություններով քայլ առաջ էր իր նախորդներից: Օրինակ՝ 1970 թվականին ստեղծված «Նաիրի-3»-ը դարձավ երրորդ սերնդի առաջին խորհրդային ԷՀՄ-ն, որում կիրառվել էին հիբրիդային ինտեգրված սխեմաներ. ի տարբերություն այլ ԷՀՄ-ների, որոնց հիշողությունը պահում էր ընդամենը 4 000 միկրոհրահանգ, այս նոր մոդելը հնարավորություն ուներ պահպանել մինչև 128 000 միկրոհրահանգ: Անկասկած, «Նաիրի-3»-ը Հրաչյա Հովսեփյանի հերթական կարևոր նվաճումն էր:

Մեծ սրտով փոքր մեքենաներ

Իրականում խորհրդային հաշվիչ մեքենաների դարաշրջանի սկիզբը պետք է համարել 1960 թվականի հունվարը, երբ Երևանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում ստեղծվեց «Հրազդանը»՝ դառնալով կիսահաղորդչային առաջին ԷՀՄ-ն ԽՍՀՄ-ում: Եվ միայն դրանից մեկ տարի հետո Միությունում հայտնվեցին МИНСК և МИР կիսահաղորդչային մեքենաները: Իսկ դա հնարավոր դարձավ Հրաչյա Հովսեփյանի ստեղծած կիսահաղորդչային տարրերի բազայի և յուրահատուկ կառավարման համակարգի շնորհիվ: Դրանք առաջին փորձերն էին փոքր չափի ԷՀՄ-ների ստեղծման ուղղությամբ, բայց հենց դրանք դարձան նախադեպ «Նաիրի-1»-ի ստեղծման համար: Հաջողությունն այնքան ցնցող էր, որ Հովսեփյանին հանձնարարեցին շարունակել այսպես կոչված «փոքրիկ մեքենաների» մշակումը: Դեռևս անցյալ դարի





Երևանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ
1956 թվականին ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահության նախաձեռնությամբ և Խորհրդային կառավարության որոշմամբ ստեղծվեց Երևանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, որն առ այսօր առավել հայտնի է որպես Մերգելյանի ինստիտուտ: 1960-ականներին այստեղ ստեղծվեց և պետական հանձնաժողովին ներկայացվեց ԽՍՀՄ-ում առաջին կիսահաղորդչային ԷՀՄ-ն՝ «Հրազդան»: Ավելի ուշ այս մեքենան կատարելագործվեց և դրա նոր՝ «Հրազդան-2» մոդելը լայնորեն կիրառվեց գիտական հետազոտություններում: 1960-ականներին ինստիտուտում նպատակային աշխատանքներ էին տարվում այսպես կոչված՝ փոքր մեքենաների «Նաիրի» ընտանիքի ստեղծման համար: 1960-70-ական թվականներին թողարկվեցին այս ԷՀՄ-ի տարբեր մոդելներ, որոնք լայնորեն կիրառվում էին գիտության, տեխնիկայի ու տնտեսության ամենատարբեր ոլորտներում: «Նաիրի» ԷՀՄ-ների ստեղծման համար ինստիտուտն արժանացավ ԽՍՀՄ պետական մրցանակի:

↓ «Նաիրի» համակարգիչների հակիրճ տեխնիկական նկարագիրը

↓ «Նաիրի-1»



հեռավոր 60-ականներին երիտասարդ գիտնականն ու գյուտարարն առաջ քաշեց լայն օգտագործման կամ, այլ կերպ ասած, անձնական օգտագործման ԷՀՄ-ների գաղափարը: Այս գաղափարի իրականացման համար նա ուներ բոլոր նախադրյալները՝ խելք, երիտասարդություն, համառություն և, որ ամենագլխավորն է, հաջողության հանդեպ հավատ: Հենց այս հատկանիշները թույլ տվեցին նրան և նրա գլխավորած խմբին ստեղծել ԷՀՄ-ների «Նաիրի» մոդելները:
Ի դեպ, ամերիկացի մասնագետների խոստովանությամբ՝ «Նաիրի-3»-ն իր տեխնիկական բնութագրերով համապատասխանում էր այս ոլորտում այն ժամանակվա ամերիկյան վերջին ձեռքբերումներին: Ահա թե այս առումով ինչ էին գրում ամերիկյան թերթերը. «ԽՍՀՄ-ին «Նաիրի-3»-ի շնորհիվ հաջողվեց նկատելիորեն կրճատել բացը երրորդ սերնդի ԷՀՄ-ների ստեղծման ասպարեզում».
Մեքենան գնահատվեց նաև իր հայրենիքում: Բավական է ասել, որ «Նաիրի» ընտանիքի մինի-մեքենաները դարձան ամենաժողովրդական ԷՀՄ-ները ԽՍՀՄ-ում, դրանց արտադրությանը բաժին էր ընկնում Խորհրդային Միությունում արտադրված բոլոր համակարգիչների մոտավորապես մեկ երրորդը, իսկ Հովսեփյանի գիտական խումբն այդ աշխատանքի համար ստացավ ԽՍՀՄ պետական մրցանակ:
1976 թվականին մի գարնանային օր Հրաչյա Հովսեփյանը շատ երկար մնաց իր աշխատասենյակում: Բոլորը վաղուց տուն էին գնացել,

→ Հրաչյա Հովսեփյանը



և ինստիտուտում քար լռություն էր: Հոգնած հենվելով սեղանին՝ նա սկսեց մտածել: Բառացիորեն օրեր առաջ հաջողությամբ էր պսակվել նոր սերնդի «Նաիրի-4» ԷՀՄ-ի պաշտպանությունը: Սակայն Հովսեփյանը հոգում ոչ մի ուրախություն չէր զգում, միայն դատարկություն, անբավարարվածություն և հուսահատություն:

Ներքին պայքար

Գիտնական-գյուտարար Հրաչյա Հովսեփյանի դերը հայրենական «Նաիրի» սերնդի ԷՀՄ-ների ստեղծման գործում ամեն կերպ փորձում էին նսեմացնել, անգամ՝ զրոյացնել: Ինստիտուտում տարածվում էին ամենատարբեր խարդավանքներ, որոնք երբեմն հասնում էին բացահայտ սաբոտաժի: Տպավորություն էր, որ Հրաչյային փորձում են հեռացնել նախագծի ղեկավարումից, մանավանդ նրա տեղը զբաղեցնելու պատրաստ թեկնածուների պակաս չկար: Բայց դրա համար անհրաժեշտ էր վարկաբեկել գիտնականին:

Ի վերջո, չարակամները լավ ձև գտան: Գործարանում, որտեղ հավաքվում էին մեքենաները, դետալներից մեկը, հավանաբար տեխանձնակազմի անուշադրության պատճառով, պարզվեց՝ անորակ է, ինչը հանգեցրեց աշխատանքի խաթարման: Հարցը դրվեց պարտիական խորհրդի քննարկման, որտեղ և որոշում կայացվեց Հովսեփյանին հեռացնել գլխավոր կոնստրուկտորի պաշտոնից՝ պատճառաբանությամբ, որ նրան չի հաջողվել ապահովել նախագծի տեխնիկական աջակցությունը: Իհարկե, նրա համար դժվար չէր ապացուցել իր անմեղությունը, բայց նրան ոչ ոք չէր պատրաստվում լսել: Էլ ո՞նց կլիներ: Վերջապես ինստիտուտի ղեկավարությունը ռեալ հնարավորություն էր ստացել նրան հեռացնել աշխատանքից: Բայց «Նաիրի-3»-ի հայտնվելուն անհամբերությամբ էր սպասում ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերություն նախարարությունը: Հենց այդ հանգամանքն էր կոնստրուկտորի հաղթաթուղթը: Բանն այն է, որ նոր նմուշի փորձարկումից շատ առաջ նախարարությունը հրահանգել էր Աստրախանի գործարանին սկսել այդ մեքենաների թողարկումը, քանի որ ցանկանում էր արագորեն հաջողության մասին



↖ Երևանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը

← «Հրազդան-3»-ը Մոսկվայի պոլիտեխնիկական թանգարանում

«Մաշկոց» էլեկտրոնային հաշվիչ մեքենան

Այսօր փոպագիր տեխստը խմբագրող և դրանից թարգմանող սխեմաներն ու ծրագրերը սովորական երևույթ են: Բայց իշերը գիտեն, որ դեռևս հեռավոր 60-ականների սկզբին, երբ «համակարգիչ» բառն անգամ չկար, Հայաստանում նախագծել էին այդ կարողություններով օժտված մեքենա: Նախագծումը սկսվեց 1962 թվականին: Որոշ դեպքային փոփոխությունների դեպքում այն կարող էր ծառայել նաև ռազմական նպատակներով, ուստի մեքենայի նախագծման հետ կապված ամեն ինչ դարձավ շափազանց փակ ու գաղտնի, և դրա մասին շատ քիչ տեղեկություն է պահպանվել: Բավական է ասել, որ չի պահպանվել «Մաշկոց» մեքենայի ոչ մի լուսանկար՝ միայն մեկ նկար: Ի տարբերություն ժամանակի այլ ԷՀՄ-ների՝ այն հաշվիչ չէր համարվում: Դրա ստեղծման հիմնական նպատակը փոպագիր տեխստի և հատկապես մանրատառ տեխստերի խմբագրումն էր: Մեքենայի հիշողությունը պարունակում էր ռուսական այբուբենի տառերի գրության տասնյակ տարբերակներ: Համապատասխան կարգավորումների դեպքում հնարավոր էր մեքենայի հիշողության մեջ պահել նաև հայերեն և լատիներեն այբուբենների տառերի տասնյակ տարբերակներ: Բայի այդ, մեքենան կարող էր վերծանել նաև ոչխարընթեռնելի տառեր ու բառեր՝ տրամաբանորեն լրացնելով բացակայող տարրերը: Մեքենան բաղկացած էր կառավարման վահանակից, հիշողության և սնուցման բլոկներից՝ վերջիններս տեղավորվում էին ահռելի վեցդռնանի պահարանում: 1964 թվականին մեքենայի նախագծումն ավարտված էր և այն հաջողությամբ անցավ փորձարկման բոլոր փուլերը: Նույն թվականին մեքենայի նախագծողներից Էմիլ Հովհաննիսյանն այդ թեմայով թեկնածուական դիսերտացիան պաշտպանեց: Ցավոք, անհայտ պատճառներով «Մաշկոցը» սերիական արտադրություն չմտավ: Իսկ հինգ տարի անց նմանատիպ մի սարք նախագծվեց ԱՄՆ-ում:

զեկուցել Կենտրոնական կոմիտեին (սովետական պրակտիկայում շատ տարածված երևույթ): Հովսեփյանը, առանց երկար մտածելու, օգտվեց այդ հանգամանքից և գործուղվեց Աստրախանի գործարան, որտեղ շատ կարճ ժամանակում նրա նախագծով թողարկվեց «Նաիրի-3»-ի 7 մեքենա:

Հետաքրքիր է, բայց այդ մեքենաներից մեկը հենց Երևանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը բարձր գնահատականի արժանացրեց պետական հանձնաժողովում: Հովսեփյանի համար դա և՛ ամոթալի էր, և՛ ցավալի: Նա ծրագրեր մշակեց չորրորդ սերնդի «Նաիրի-4» մեքենան ստեղծելու համար: Փառքով վերադառնալով ինստիտուտ՝ նա խանդավառությամբ ձեռնամուխ եղավ նախագծի իրականացմանը, որը հիմնված էր մի շարք նորամուծությունների վրա՝ հաղորդակցության լեզվի և ունիվերսալ ծրագրաշարի առավելագույն պարզեցում, որը թույլ կտար նույնիսկ այլ պրոֆիլի մասնագետին աշխատել մեքենայով: Ըստ էության, «Նաիրի-4»-ը դարձավ նախադեպ ժամանակակից անձնական համակարգիչների համար: Նախագիծն այնքան հեռանկարային էր, որ դրանով սկսեցին հետաքրքրվել նաև զինվորականները:

ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունը նրան և իր խմբին համագործակցության

↑ «Նաիրին» աշխատանքի մեջ



առաջարկ արեց: Սա նշանակում էր, որ համաձայնելով այս առաջարկին՝ նա պետք է թաղեր լայն կիրառության ԷՀՄ ստեղծելու գաղափարը: Այստեղ ևս Հովսեփյանը հավատարիմ մնաց իր սկզբունքներին: Նա հրաժարվեց պաշտպանության նախարարության հետ խոստումնալից համագործակցությունից, որպեսզի զբաղվի իր գաղափարների իրագործմամբ: Սակայն ոչ ոք չէր պատրաստվում նրան հանգիստ թողնել: Չգիտես ինչու հանկարծ նախագծին վերահսկիչ կցելու անհրաժեշտության հարց առաջացավ: Հասկանալի պատճառներով վերոնշյալը ոչ այլ ոք էր, քան ինստիտուտի գլխավոր ինժեները: Հովսեփյանի մոտ այն տպավորությունն էր, որ ինստիտուտում բոլորը միայն ու միայն իր հեռանալուն են սպասում: Եվ նա հեռացավ:

Փախուստ

Նախ հեռացավ ինստիտուտից, ապա որոշում կայացրեց կյանքն ու աշխատանքը շարունակել Արևմուտքում՝ ի վերջո, գիտական աշխարհում նա հայտնի անուն էր: Երկար տարիներ Հրաչյա Հովսեփյանը փորձում էր ԽՍՀՄ-ից հեռանալու թույլտվություն ստանալ: Դա հաջողվեց միայն 1988-ին: Բայց Միացյալ Նահանգներում էլ, պարզվեց, իր հմտություններով մասնագետը չի կարող իրեն գտնել: Ի վերջո, խորհրդային ԷՀՄ-ների լեգենդն ընդունվեց աշխատանքի համակարգիչների վերանորոգման մի փոքրիկ կենտրոնում: Իսկ որոշ ժամանակ անց քարտեզների վրայից վերացավ այն երկիրը, որտեղ Հովսեփյանը հասել էր փառքի ու որտեղ հետո թույլ չէին տալիս արարել:

Իսկ «Նաիրիները» դարձան պատմություն:

Նյութն առաջին անգամ լույս է տեսել "Ереван" ամսագրում

Վարուժան Նալբանդյան

Կանոններ կենտրոնական մարտկոցային սիստեմի հեռախոսային ապարատներից օգտվելու համար, 1934թ.

Կանոնները հրապարակվել են Երևանի հեռախոսային ցանցի աբոնենտների ցուցակի գրքույկում: Սկզբում ներկայացված է հեռախոսային ապարատից օգտվելու մանրամասն ձեռնարկ («Ստանալով կենտրոնական կայանի պատասխանը՝ «կենտրոն» կանչողը հայտնում է պահանջվող բաժանորդի №-ը, խոսելով հստակ ձայնով, առանց բարձրացնելու ձայնը, պահելով մանրախոսն ուղիղ բերանի դեմ», կամ «Բաժանորդը զանգը ստանալուց հետո հանում է հեռախոսային փողակը լծակից, դնում է ականջին և սկսում է խոսել: Խոսակցությունը վերջացնելուց հետո փողակը կախում է կամ դնում է իր տեղում»), իսկ աբոնենտների ցանկից անմիջապես առաջ գրված են նաև հեռախոսային էթիկայի ընդհանուր կանոնները (որոնցից շատերը թերևս կիրառելի են նաև այսօր):

1. *Ոչ մի դեպքում հեռախոսուհու հետ վիճաբանության մի մտնի, դա կիսանգարի թե՛ ֆեզ և թե՛ ուրիշներին:*
2. *Խոսելու ժամանակ փողակի շուրը մի՛ դրորիր:*
3. *Բողոքներով հեռախոսուհուն մի՛ դիմիր, այլ ցանցի վարչության ավագ հերթապահ, կամ վնասվածքների բյուրոյին:*
4. *Հեռախոսուհուն, իր պարտականությունների կատարման ընթացքում մի՛ միրավորիր, դա հանցանք է և դրա համար կենթարկվես պատասխանատվության և հեռախոսդ կընդհատվի:*
5. *Հետևի՛ր, որպեսզի այն ժամանակ, երբ չես խոսում, հեռախոսի փողակը կախված կամ դրված լինի իր տեղում, այլապես խախտած կլինես հեռախոսային օրենքը և հեռախոսդ կընդհատվի, իսկ դու կրուգանվես:*
6. *Հանի՛ր փողակը միայն այն ժամանակ, երբ զանգահարումը վերջանում է:*
7. *Նախ իմացի՛ր №-ը, հետո վերցրու փողակը:*
8. *Փողակը լծակի վրա դնելիս հետևի՛ր, որպեսզի նա հավասարապես տեղավորվի լծակի երկու ծայրերին, այլապես կենտրոնը ֆեզ չի պատասխանի:*
9. *Հեռախոսուհուն ասա՛ միայն հեռախոսի №-ը. ավելորդ խոսքեր մի՛ ասա:*
10. *Բաժանորդի կամ կենտրոնի կանչելու ժամանակ լծակը մի թրխկացրու, որովհետև այդ հանգամանքը վերջանշան է:*
11. *Ցանկացած №-ը յուցակում չգտնելու դեպքում դիմի՛ր տեղեկատու բյուրոյին, հեռախոս № 250:*
12. *Հեռախոսի վճարը մուծի՛ր ժամանակին, եթե ոչ՝ կույժ կվճարես:*
13. *Հեռախոսով խոսել չիմացողին մի՛ թույլ կուր մոտենա ապարատին:*
14. *Եթե ուզում ես մի խոսակցությունը վերզայնելուց հետո մյուսը սկսել, պետք է փողակը կախես, մի բոպե սպասես, հետո մյուսը սկսես:*
15. *Խնդրվում է երեխաներին և հարբած մարդկանց թույլ չտալու հեռախոսի մոտ:*
16. *Որոտի և փոթորիկի ժամանակ հեռախոսային կենտրոնական կայանի աշխատանքը դադարեցվում է:*
17. *Որքան հնարավոր է հեռախոսով կարճ խոսի՛ր:*
18. *Կենտրոնից մի՛ հարցրու ժամը քանին է, նրան արգելված է պատասխանել:*
19. *Հեռախոսային բոլոր հարցերով կարելի է դիմել հեռ. ցանցի գրասենյակ՝ Ամիրյան փողոց № 9, կամ հեռախոս № 1:*

ՍԱՀԱԳՆԵՐ

Բանվորների և ծառայողների հեռախոսներ. հիմնափորում՝ 31 ռուբլի, գարեկան բաժանվճար՝ 114 ռուբլի: Պետական և կոոպերատիվ հիմնարկ-ձեռնարկների, նույնը կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների շենքերի հեռախոսները. հիմնափորում՝ 36 ռուբլի, գարեկան բաժանվճար՝ 156 ռուբլի: Ընդհանուր և կոլեկտիվ օգտագործման հանրային տեղերում (դեղատներ, ակումբներ, հանրակացարաններ և այլն). հիմնափորում՝ 55 ռուբլի, գարեկան բաժանվճար՝ 264 ռուբլի:



The Main
Design Store

@TheMainDesignStore

/

Մեր Մկրտչյան 10
(Միրզոյան գրադարան,
առաջին հարկ)



ՍԻԱՅԻ՛Ր ԹԻՄԻՆ

telecomarmenia.am

team™
TELECOM ARMENIA